ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

2 0 2 0

Հատոր 6

ԵՐԵՎԱՆ 2021

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով) իր գործունեության ընթացքում առաջնորդվում է «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի որոշումով, «Քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի իմաստով «օրենքի կոպիտ խախտում» հասկացության գնահատման ուղենիշների վերաբերյալ ուղեցույցով և այլ իրավական ակտերով:

Հանձնաժողովի խնդիրներն են՝ նպաստել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) ծառայողին ներկայացվող բարոյական բարձր չափանիշների ձևավորմանը, ծառայողական կարգապահության ամրապնդմանը, կարգապահական խախտումների կանխարգելմանը և այդպիսիք ծնող պատճառների վերացմանը, ապահովել Կոմիտեի ծառայողի անկախությունը և իրավունքների պաշտպանությունը, կանխել Կոմիտեի ծառայողին անհիմն կարգապահական պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը:

Հանձնաժողովը քննարկում է կարգապահական վարույթ հարուցելու մասին միջնորդություններ, ընդունում է որոշումներ:

Ժողովածուի հետ աշխատանքը հեշտացնելու նպատակով որոշումները ներկայացված են առարկայական դասակարգմամբ, համաձայն իրավական ակտերի դրույթների:

Սույն ժողովածուն հանդիսանում է նախորդ տարիներին տպագրված ժողովածուների շարունակությունը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Մարդու իրավունքների և դատավարական երաշխիքների խախտումների վերաբերյալ որոշումներ

I. Մեկնաբանվող կարգապահական խախտում - Ուղեցույցի 3-րդ կետի 2-րդ ենթակետ՝ *Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության սկզբունքների և դրանց հետ համակարգային կապերի մեջ գտնվող դատավարական նորմերի խախտումը կամ մարդու իրավունքներին առնչվող դատավարական այլ նորմերի խախտումը.*

1. Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Գ.Գ-ի վերաբերյալ Հանձնաժողովի 23.01.2020թ. ԿՀՈ 1 որոշում ***(Հանձնաժողովը հաստատել է կարգապահական խախտման փաստի բացակայությունը)***.....17

2. Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Ա.Հ-ի վերաբերյալ Հանձնաժողովի 06.02.2020թ. ԿՀՈ 3 որոշում ***(Հանձնաժողովը հաստատել է կարգապահական խախտման փաստի առկայությունը)***.....23

3. Կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ Է.Ա-ի և ՀԿԳ քննիչ Է.Վ-ի վերաբերյալ Հանձնաժողովի 06.02.2020թ. ԿՀՈ 4 որոշում ***(Հանձնաժողովը հաստատել է կարգապահական խախտման փաստի առկայությունը)***..... 00

4. Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության վեցերորդ կայազորային քննչական բաժնի պետ Դ.Ֆ-ի և պետի տեղակալ Կ.Ա-ի վեարաբերյալ Հանձնաժողովի 27.02.2020թ. ԿՀՈ 8 որո-

շում ***(Հանձնաժողովը հաստատել է կարգապահական խախտման փաստի առկայությունը, սակայն մեղքի բացակայությունը)***.....41

5. Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Լ.Հ-ի վերաբերյալ Հանձնաժողովի 11.03.2020թ. ԿՀՈ 9 որոշում ***(Հանձնաժողովը հաստատել է կարգապահական խախտման փաստի բացակայությունը)***.....47

6. Կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության Աբովյանի քննչական բաժնի պետի տեղակալ Հ.Ա-ի և նույն քննչական բաժնի Գ.Կ-ի վերաբերյալ Հանձնաժողովի 21.05.2020թ. ԿՀՈ 7 որոշում ***(Հանձնաժողովը հաստատել է կարգապահական խախտման փաստի առկայությունը)***.....37

7. Կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչության Դիլիջանի քննչական բաժնի պետ Վ.Գ-ի և նույն բաժնի պետի տեղակալ Է.Կ-ի վերաբերյալ Հանձնաժողովի 21.05.2020թ. ԿՀՈ 18 որոշում ***(Հանձնաժողովը հաստատել է կարգապահական խախտման փաստի առկայությունը)***..... 90

8. Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի պետի տեղակալ Հ.Մ-ի և նույն քննչական բաժնի քննիչներ Վ.Գ-ի, Վ.Զ-ի, Ա.Լ-ի վերաբերյալ Հանձնաժողովի 31.07.2020թ. ԿՀՈ 25 որոշում ***(Հանձնաժողովը հաստատել է կարգապահական խախտման փաստի առկայությունը)***.....124

9. Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Ա.Ք-ի և նույն քննչական բաժնի ՀԿԳ քննիչ Ռ.ՀԿԳՍ-ի վերաբերյալ Հանձնաժողովի 13.08.2020թ. ԿՀՈ 34 որո-

շում ***(Հանձնաժողովը հաստատել է կարգապահական խախտման փաստի առկայությունը՝ Ա.Ք-ի մասով)***.....172

II. Մեկնաբանվող կարգապահական խախտում - Ուղեցույցի 3-րդ կետի 4-րդ ենթակետ՝ *անձին* օրենքով նախատեսված իրավական և փաստական հիմքերի ակնհայտ առկայության դեպքում անձին քրեական դատավարության մասնակցի կարգավիճակ չտալը.

1. Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ՀԿԳ քննիչ Գ.Գ-ի վերաբերյալ Հանձնաժողովի 13.08.2020թ. ԿՀՈ 31 որոշում ***(Հանձնաժողովը հաստատել է կարգապահական խախտման փաստի առկայությունը)***.....163

III. Մեկնաբանվող կարգապահական խախտում - Ուղեցույցի 3-րդ կետի 5-րդ ենթակետ՝ *դատախազի կողմից հսկողության նպատակով պահանջվող քրեական գործը չհանձնելը, տեղեկատվություն չտրամադրելը, հանձնման ենթական փաստաթղթերը չհանձնելը կամ առանց իրավաչափ նպատակի՝ քրեական գործի հանձնումը կամ տեղեկատվության տրամադրումը, կամ հանձնման ենթակա փաստաթղթերի հանձնումը ձգձգելը.*

1. Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Գ.Ղ-ի վերաբերյալ 27.02.2020թ. ԿՀՈ 7 որոշում ***(Հանձնաժողովը հաստատել է կարգապահական խախտման փաստի առկայությունը)***.....37

2. Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ Հ.Գ-ի վերաբերյալ 11.03.2020թ. ԿՀՈ 11 որոշում ***(Հանձնաժողովը հաս-***

փաստել է կարգապահական խախտման փաստերի առկայությունը)..... 54

3. Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի պետի տեղակալ Հ.Մ-ի և նույն քննչական բաժնի քննիչներ Վ.Գ-ի, Վ.Զ-ի, Ա.Լ-ի վերաբերյալ Հանձնաժողովի 31.07.2020թ. ԿՀՈ 25 որոշում ***(Հանձնաժողովը հաստատել է կարգապահական խախտման փաստի առկայությունը)***..... 124

4. Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Ա.Հ-ի վերաբերյալ 13.08.2020թ. ԿՀՈ 33 որոշում ***(Հանձնաժողովը հաստատել է կարգապահական խախտման փաստերի առկայությունը)***.....169

5. Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Մ.Ու-ի վերաբերյալ 23.12.2020թ. ԿՀՈ 39 որոշում ***(Հանձնաժողովը հաստատել է կարգապահական խախտման փաստերի առկայությունը)*** 194

IV. Մեկնաբանվող կարգապահական խախտում - Ուղեցույցի 3-րդ կետի 7-րդ ենթակետ՝ *իրավական և փաստական հիմքերի բացակայության պայմաններում դատավարական հարկադրանքի միջոց կիրառելը կամ իրավական և փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում՝ դատավարական հարկադրանքի միջոց չկիրառելը.*

1. Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության հատկապես կարևոր գործերի քննության վարչության ՀԿԳ քննիչներ Գ.Թ-ի և Ա.Պ-ի վերաբերյալ Հանձնաժողովի 31.07.2020թ. ԿՀՈ 26 ո-

որոշում ***(Հանձնաժողովը հաստատել է կարգապահական խախտման փաստի առկայությունը)***.....138

2. Մինչդատական վարույթի արդյունավետությունը և բնականոն ընթացքը խաթարող խախտումների վերաբերյալ որոշումներ

I. Մեկնաբանվող կարգապահական խախտում – Ուղեցույցի 4-րդ կետի 1-ին ենթակետ՝ *առանց իրավաչափ նպատակի տևական ժամանակով անգործություն դրսևորելը, այն է՝ անհրաժեշտ դատավարական գործողություններ չկատարելը՝ անկախ դրա հետևանքից:*

1. Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության չորրորդ կայազորային քննչական բաժնի ՀԿԳ քննիչ Գ.Թ-ի վերաբերյալ Հանձնաժողովի 11.03.2020թ. ԿՀՈ 10 որոշում ***(Հանձնաժողովը հաստատել է կարգապահական խախտման փաստի առկայությունը)***.....51

2. Կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության Ստեփանավանի քննչական բաժնի պետ Դ.Ղ-ի և նույն բաժնի ավագ քննիչ Է.Վ-ի վերաբերյալ Հանձնաժողովի 14.03.2020թ. ԿՀՈ 13 որոշում ***(Հանձնաժողովը հաստատել է կարգապահական խախտման փաստի առկայությունը)***.....61

3. Կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչության Դիլիջանի քննչական բաժնի պետ Վ.Գ-ի և նույն բաժնի պետի տեղակալ Է.Կ-ի-ի վերաբերյալ Հանձնաժողովի 21.05.2020թ. ԿՀՈ 18 որոշում ***(Հանձնաժողովը հաստատել է կարգապահական խախտման փաստի առկայությունը)***.....90

4. Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի պետի տեղակալ Հ.Մ-ի և նույն քննչական բաժնի քննիչներ Վ.Գ-ի, Վ.Զ-ի, Ա.Լ-ի

վերաբերյալ Հանձնաժողովի 31.07.2020թ. ԿՀՈ 25 որոշում ***(Հանձնաժողովը հաստատել է կարգապահական խախտման փաստի առկայությունը)***.....124

5. Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության առաջին կայազորային քննչական բաժնի ավագ քննիչ Դ.Հ-ի վերաբերյալ Հանձնաժողովի 15.12.2020թ. ԿՀՈ 36 որոշում ***(Հանձնաժողովը հաստատել է կարգապահական խախտման փաստի առկայությունը)***.....183

6. Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Գ.Ս-ի վերաբերյալ Հանձնաժողովի 23.12.2020թ. ԿՀՈ 37 որոշում ***(Հանձնաժողովը հաստատել է կարգապահական խախտման փաստի առկայությունը)***.....187

7. Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Հ.Ա-ի վերաբերյալ Հանձնաժողովի 23.12.2020թ. ԿՀՈ 38 որոշում ***(Հանձնաժողովը հաստատել է կարգապահական խախտման փաստի առկայությունը)***.....190

I. Մեկնաբանվող կարգապահական խախտում – Ուղեցույցի 4-րդ կետի 2-րդ ենթակետ՝ *քննչական և այլ դատավարական գործողություն կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում առանձին գործողություններ չկատարելը կամ ժամանակին չկատարելը, որը հանգեցրել կամ ողջամտորեն կարող էր հանգեցնել ապացույցների կորստի.*

1. Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության չորրորդ կայազորային քննչական բաժնի քննիչ Ռ.Վ-ի վերաբերյալ

Հանձնաժողովի 06.02.2020թ. ԿՀՈ 5 որոշում ***(Հանձնաժողովը հաստատել է կարգապահական խախտման փաստի առկայությունը)***..... 30

2. Կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչության Դիլիջանի քննչական բաժնի պետ Վ.Գ-ի և նույն բաժնի պետի տեղակալ Է.Կ-ի-ի վերաբերյալ Հանձնաժողովի 21.05.2020թ. ԿՀՈ 18 որոշում ***(Հանձնաժողովը հաստատել է կարգապահական խախտման փաստերի առկայությունը)*** 90

3. Կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության Աբովյանի քննչական բաժնի նախկին պետ Ռ.Մ-ի և նույն մարզային քննչական վարչության ավագ քննիչ Ա.Ղ-ի վերաբերյալ Հանձնաժողովի 11.06.2020թ. ԿՀՈ 19 որոշում ***(Հանձնաժողովը հաստատել է կարգապահական խախտման փաստի բացակայությունը)*** 99

4. Կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության Սպիտակի քննչական բաժնի պետ Ա.Փ-ի և նույն մարզային վարչության քննիչ Ա.Տ-ի վերաբերյալ 11.06.2020թ. ԿՀՈ 20 որոշում ***(Հանձնաժողովը հաստատել է կարգապահական խախտման փաստի առկայությունը)***.....106

5. Կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Մ.Մ-ի վերաբերյալ 23.06.2020թ. ԿՀՈ 24 որոշում ***(Հանձնաժողովը հաստատել է կարգապահական խախտման փաստի առկայությունը)*** 121

6. Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության վերահսկողության վարչության պետի տեղակալ Ս.Ս-ի և նույն բաժնի քննիչ Ա.Խ-ի վերաբերյալ Հանձնաժողովի 31.07.2020թ. ԿՀՈ 27 որոշում ***(Հանձնաժողովը հաստատել է կարգապահական խախտման փաստերի առկայությունը)*** 143

7. Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության չորրորդ կայազորային քննչական բաժնի պետի տեղակալ Հ.Ա-ի և առաջին կայազորային քննչական բաժնի պետի տեղակալ Լ.Պ-ի վերաբերյալ Հանձնաժողովի 31.07.2020թ. ԿՀՈ 28 որոշում ***(Հանձնաժողովը հաստատել է կարգապահական խախտման փաստերի առկայությունը)*** 148

8. Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Մ.Ու-ի վերաբերյալ Հանձնաժողովի 13.08.2020թ. ԿՀՈ 32 որոշում ***(Հանձնաժողովը հաստատել է կարգապահական խախտման փաստերի առկայությունը*** 166

II. Մեկնաբանվող կարգապահական խախտում – Ուղեցույցի 4-րդ կետի 3-րդ ենթակետ՝ *մինչև նախաքննությունն ավարտելը քրեական գործում առկա նյութերը օրենքով սահմանված դատավարական կարգի պահպանմամբ չհետազոտելը կամ փաստացի հետազոտման արդյունքները չարձանագրելը.*

1. Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ Լ.Հ-ի վերաբերյալ 06.02.2020թ. ԿՀՈ 6 որոշում ***(Հանձնաժողովը հաստատել է կարգապահական խախտման փաստի բացակայությունը)*** 33

2. Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության տասներորդ կայազորային քննչական բաժնի քննիչ Վ.Մ-ի վերաբերյալ 11.03.2020թ. ԿՀՈ 12 որոշում ***(Հանձնաժողովը հաստատել է կարգապահական խախտման փաստի առկայությունը*** 58

III. Մեկնաբանվող կարգապահական խախտում – Ուղեցույցի 4-րդ կետի 5-րդ ենթակետ՝ *դատախազի կամ քննչական բաժնի պե-*

տի ցուցումները չկատարելը, որը հանգեցրել է կամ ողջամտորեն կարող էր հանգեցնել ապացույցների կորստի.

1. Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության հատկապես կարևոր գործերի քննության վարչության ՀԿԳ քննիչներ Գ.Թ-ի և Ա.Պ-ի վերաբերյալ Հանձնաժողովի 31.07.2020թ. ԿՀՈ 26 որոշում ***(Հանձնաժողովը հաստատել է կարգապահական խախտման փաստի առկայությունը)***.....138

2. Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության չորրորդ կայազորային քննչական բաժնի ավագ քննիչ Մ.Մ-ի վերաբերյալ Հանձնաժողովի 13.08.2020թ. ԿՀՈ 35 որոշում ***(Հանձնաժողովը հաստատել է կարգապահական խախտման փաստի առկայությունը)***.....179

3. Այլ կարգապահական խախտումների վերաբերյալ որոշումներ

I. Մեկնաբանվող իրավադրույթ՝ - Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդված՝ *քննչական բաժնի պետի լիազորությունները.*

1. Կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության Ստեփանավանի քննչական բաժնի պետ Դ.Ղ-ի և նույն բաժնի ավագ քննիչ Է.Վ-ի վերաբերյալ 14.03.2020թ. ԿՀՈ 13 որոշում ***(Հանձնաժողովը հաստատել է կարգապահական խախտման փաստի առկայությունը)***.....61

2. Կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության Աբովյանի քննչական բաժնի պետի տեղակալ Հ.Ա-ի և նույն քննչական բաժնի Գ.Կ-ի վերաբերյալ Հանձնաժողովի 21.05.2020թ. ԿՀՈ 7 որոշում ***(Հանձնաժողովը հաստատել է կարգապահական խախտման փաստի առկայությունը)*** 37

3. Կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչության Գիլիջանի քննչական բաժնի պետ Վ.Գ-ի և նույն բաժնի պետի տեղակալ Է.Կ-ի-ի վերաբերյալ Հանձնաժողովի 21.05.2020թ. ԿՀՈ 18 որոշում ***(Հանձնաժողովը հաստատել է կարգապահական խախտման փաստի առկայությունը)***.....90

4. Կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության Աբովյանի քննչական բաժնի նախկին պետ Ռ.Մ-ի և նույն մարզային քննչական վարչության ավագ քննիչ Ա.Ղ-ի վերաբերյալ Հանձնաժողովի 11.06.2020թ. ԿՀՈ 19 որոշում ***(Հանձնաժողովը հաստատել է կարգապահական խախտման փաստի բացակայությունը)***.....99

5. Կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության Սպիտակի քննչական բաժնի պետ Ա.Փ-ի և նույն մարզային վարչության քննիչ Ա.Տ-ի վերաբերյալ 11.06.2020թ. ԿՀՈ 20 որոշում ***(Հանձնաժողովը հաստատել է կարգապահական խախտման փաստի առկայությունը)***.....106

II. Մեկնաբանվող կարգապահական խախտում՝ ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 03.07.2015թ. թիվ 61-Ա հրամանի 5-րդ կետ՝ *ծառայողական վկայականը կորցնելը.*

1. ՀՀ քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Ս.Խ-ի վերաբերյալ 14.05.2020թ. ԿՀՈ 15 որոշում ***(Հանձնաժողովը հաստատել է կարգապահական խախտման փաստի առկայությունը)***..... 78

III. Մեկնաբանվող կարգապահական խախտում՝ Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 20.08.2018թ. թիվ 114-Լ հրաման՝ *«Հայաստանի Հանրապետության*

քննչական կոմիտեի ներքին կարգապահական կանոնները հաստատելու մասին».

1. Կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության Ստեփանավանի քննչական բաժնի պետ Դ.Ղ-ի և նույն բաժնի ավագ քննիչ Է.Վ-ի վերաբերյալ 14.03.2020թ. ԿՀՈ 13 որոշում ***(Հանձնաժողովը հաստատել է կարգապահական խախտման փաստի առկայությունը)***.....61

2. Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության չորրորդ կայազորային քննչական բաժնի ՀԿԳ քննիչ Ս.Վ-ի վերաբերյալ 21.05.2020թ. ԿՀՈ 16 որոշում ***(Հանձնաժողովը հաստատել է կարգապահական խախտման փաստի առկայությունը)***.....81

3. Կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Ա.Ս-ի վերաբերյալ 11.06.2020թ. ԿՀՈ 22 որոշում ***(Հանձնաժողովը հաստատել է կարգապահական խախտման փաստի առկայությունը)***.....114

4. Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Դ.Դ-ի վերաբերյալ 23.06.2020թ. ԿՀՈ 23 որոշում ***(Հանձնաժողովը հաստատել է կարգապահական խախտման փաստի առկայությունը)***.....118

5. Կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Մ.Թ-ի վերաբերյալ 31.07.2020թ. ԿՀՈ 29 որոշում ***(Հանձնաժողովը հաստատել է կարգապահական խախտման փաստերի առկայությունը)***.....153

6. Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ Ն.Վ-ի

վերաբերյալ 13.08.2020թ. ԿՀՈ 30 որոշում ***(Հանձնաժողովը հաստատել է կարգապահական խախտման փաստի բացակայությունը)***.....158

IV. Մեկնաբանվող կարգապահական խախտում՝ Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 29.10.2018թ. թիվ 168-Լ հրաման՝ *«Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի վերահսկողական գործառույթներ իրականացնող ստորաբաժանումների աշխատանքները պատշաճ կազմակերպելու, նախաքննության ընթացքում թույլ տրված թերությունները հնարավոր սեղմ ժամկետում հայտնաբերելու և վերացնելու վերաբերյալ».*

1. Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի պետ Ա.Խ-ի վերաբերյալ 18.09.2019թ. ԿՀՈ 15 որոշում ***(Հանձնաժողովը հաստատել է կարգապահական փաստի առկայությունը)***..... 78

V. Մեկնաբանվող կարգապահական խախտում՝ «***Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին***» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 4-5-րդ կետեր.

1. «դասային աստիճանի իջեցում՝ մեկ աստիճանով» կարգապահական տույժ կիրառելու նպատակահարմարության վերաբերյալ միջնորդության քննարկման մասին Հանձնաժողովի 06.02.2020թ. եզրակացություն ***(Հանձնաժողովը եզրակացություն է տվել տույժի կիրառման նպատակահարմարության մասին)***.....197

2. «դասային աստիճանի իջեցում՝ մեկ աստիճանով» կարգապահական տույժ կիրառելու նպատակահարմարության վերաբերյալ միջնորդության քննարկման մասին Հանձնաժողովի 11.06.2020թ. եզրակացություն ***(Հանձնաժողովը եզրակացություն է տվել տույժի կիրառման նպատակահարմարության մասին)***.....199

3. «դասային աստիճանի իջեցում՝ մեկ աստիճանով» կարգապահական տույժ կիրառելու նպատակահարմարության վերաբերյալ միջնորդության քննարկման մասին Հանձնաժողովի 15.12.2020թ. եզրակացություն ***(Հանձնաժողովը եզրակացություն է տվել տույժի կիրառման նպատակահարմարության մասին)***..... 206

4. «պաշտոնի իջեցում՝ մեկ աստիճանով» կարգապահական տույժ կիրառելու նպատակահարմարության վերաբերյալ միջնորդության քննարկման մասին Հանձնաժողովի 15.12.2020թ. եզրակացություն ***(Հանձնաժողովը եզրակացություն է տվել տույժի կիրառման նպատակահարմարության մասին)*** 210

VI. Մեկնաբանվող կարգապահական խախտում՝ *«Արդարադատության ակադեմիայի մասին»* Հայաստանի Հանրապետության *օրենքի 17-րդ հոդված.*

1. Ունկնդիր Ս.Ա-ին տարկետում տրամադրելու մասին 14.07.2020թ. որոշում ***(Հանձնաժողովը Ս.Ա-ին տրամադրել է տարկետում)***.....204

VII. Մեկնաբանվող կարգապահական խախտում՝ *«Փաստաբանության մասին»* Հայաստանի Հանրապետության *օրենքի 18-րդ հոդված.*

1. Կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչության կիբեռհանցագործությունների և բարձր տեխնոլոգիաների ոլորտում կատարված հանցագործությունների քննության վարչության պետի տեղակալ (ՀԿԳ ավագ քննիչ) Վ.Ս-ի վերաբերյալ 14.05.2020թ. ԿՀՈ 14 որոշում ***(Հանձնաժողովը հաստատել է կարգապահական խախտման փաստի առկայությունը)***..... 0

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Գ.Գ-ի վերաբերյալ

23 հունվարի 2020թ. ԿՀՈ 1
ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կարգապահական հանձնաժողովը (այսուհետ՝ Կարգապահական հանձնաժողով), ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Գ.Գ-ի (այսուհետ՝ նաև քննիչ) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Նախնական ուսումնասիրության առիթ է հանդիսացել ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալ Ա.Պ-ի միջնորդությունը՝ ՀՀ քննչական կոմիտեի ԵՔՔՎ Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնում քննվող թիվ 12194119 քրեական գործի նախաքննության ընթացքում ավագ քննիչ Գ.Գ-ի կողմից իր լիազորություններն իրականացնելիս քրեադատավարական օրենքի կոպիտ խախտում թույլ տալու վերաբերյալ:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է քննիչ Գ.Գ-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումն ըստ ստորև նշված դրվագի.

Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնում քննվող թիվ 12194119 քրեական գործի նախաքննության ընթացքում 15.11.2019թ-ին, մեղադրյալ Հ.Բ-ի իրեն ճանաչման ներկայացնելու քննչական գործողությանը մասնակցելուց հրաժարվելու վերաբերյալ նույն օրվա համապատասխան դիմումի առկայության պայմաններում, անտեսելով վերջինիս դիրքորոշումը և նմանատիպ գործողությանը մասնակցելու պարտավորություն չունենալու հանգամանքը, մեղադրյալ Հ.Բ-ի մասնակցությամբ իրականացրել է անձին ճանաչման ներկայացնելու քննչական գործողությունը, ինչով իսկ քննիչը չի պահպանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները:

Հիշյալ դրվագով առերևույթ կարգապահական խախտման վերաբերյալ քննիչ Գ.Գ-ն Կարգապահական հանձնաժողովին ըստ էության բացատրություն տվեց, որ թեև մեղադրյալ Հ.Բ-ն դիմում է ներկայացրել քննչական գործողությանը մասնակցելուց հրաժարվելու վերաբերյալ, սակայն նույն օրը կատարված անձին ճանաչման ներկայացնելու քննչական գործողության ժամանակ, երբ նրան առաջարկել է ճանաչվողների մեջ զբաղեցնել իր ցանկացած տեղը, նա զբաղեցրել է իր նախընտրած տեղը և մասնակցել քննչական գործողությանը, որի ավարտից հետո նոր միայն մեղադրյալի պաշտպանն առարկություններ է ներկայացրել կազմված արձանագրության մեջ:

Ուսումնասիրելով նյութերը, լսելով քննիչ Գ.Գ-ին, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչը չի խախտել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները: Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ քննիչ Գ.Գ-ի արարքում բացակայում է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի

աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով, 48-50-րդ կետերով,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Թիվ 12194119 քրեական գործով մեղադրյալ Հ.Բ-ի իրեն ճանաչման ներկայացնելու քննչական գործողությանը մասնակցելուց հրաժարվելու վերաբերյալ նույն օրվա համապատասխան դիմումի առկայության պայմաններում, վերջինիս դիրքորոշումը և նմանատիպ գործողությանը մասնակցելու պարտավորություն չունենալու հանգամանքը անտեսելու և մեղադրյալ Հ.Բ-ի մասնակցությամբ անձին ճանաչման ներկայացնելու քննչական գործողությունն իրականացնելու կապակցությամբ ավագ քննիչ Գ.Գ-ի արարքում բացակայում է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը (կողմ՝ 5, դեմ՝ 0):

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*
Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի պետ Ա.Խ-ի վերաբերյալ

23 հունվարի 2020թ. ԿՀՈ 2
ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կարգապահական հանձնաժողովը (այսուհետ՝ Կարգապահական հանձնաժողով), ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի պետ Ա.Խ-ի (այսուհետ՝ նաև անմիջական վերադաս) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալ Ա.Պ-ի միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի պետ Ա.Խ-ն իր լիազորություններն իրականացնելիս 2019թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին պարբերաբար խախտել է ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 29.10.2018թ. թիվ 168-Լ հանձնարարականի պահանջները: Կարգապահական հանձնաժողովը քննարկել է քննչական բաժնի պետ Ա. Խ-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումն ըստ ստորև նշված դրվագի.

ՀՀ ՔԿ Երևան քաղաքի քննչական վարչության Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի վարույթում քննվող քրեական գործերով դատավարական ղեկավարում իրականացնող դատախազների կողմից թիվ 14865419, 14856019 քրեական գործերով 02.09.2019 և 19.09.2019թթ. տրված ցուցումների, թիվ 58204919 /երկու քննիչ/ և 58162119 քրեական գործերով՝ քննիչներին դատավարությանը մասնակցելուց հեռացնելու վերաբերյալ կայացված 11.09.2019, 27.09.2019 և 02.10.2019թթ. որոշումների պատճենները սահմանված ժամկետներում չեն ուղարկվել ՀՀ քննչական կոմիտեի տարածքային քննչական վարչությունների գործունեության վերահսկողության գլխավոր վարչություն, ինչով իսկ խախտվել է ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 29.10.2018թ. թիվ 168-Լ հանձնարարականի պահանջները:

Հիշյալ առերևույթ կարգապահական խախտման վերաբերյալ Ա.Խ-ն Կարգապահական հանձնաժողովին տված բացատրության ընդունեց իր կողմից հիշյալ հանձնարարականի պահանջները պարբերաբար խախտելու հանգամանքները, պատճառաբանելով, որ քննարկվող ժամանակահատվածում անձամբ վարույթում քննել է քրեական գործեր, մեկ այլ քրեական գործով ընդգրկված է եղել քննչական խմբում և աշխատանքային ծանրաբեռնվածությամբ պայմանավորված հիշյալ դատավարական փաստաթղթերը մնացել են իր աշխատասեղանին և ուշ են ուղարկվել ՀՀ քննչական կոմիտեի համապատասխան ստորաբաժանում:

ՈՒսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննչական բաժնի պետ Ա.Խ-ն Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի վարույթում քննվող քրեական գործերով դատավարական ղեկավարում իրականացնող դատախազների կողմից թիվ 14865419, 14856019 քրեական գործերով 02.09.2019 և 19.09.2019թթ. տրված ցուցումների, թիվ 58204919 /երկու քննիչ/ և 58162119 քրեական գործերով՝ քննիչներին դատավարությանը մասնակցելուց հեռացնելու վերաբերյալ կայացված 11.09.2019, 27.09.2019 և 02.10.2019թթ. որոշումների պատճենները սահմանված

ժամկետներում չի ներկայացրել ՀՀ քննչական կոմիտեի տարածքային քննչական վարչությունների գործունեության վերահսկողության գլխավոր վարչություն, ինչով իսկ խախտել է ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 29.10.2018թ. թիվ 168-Լ հանձնարարականի պահանջները, որպիսի պայմաններում վերջինիս արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 2-րդ ենթակետով և 48-50-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 29.10.2018թ. թիվ 168-Լ հանձնարարականի պահանջները պարբերաբար խախտելու դրվագով դրվագով Ա.Խ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և մեղավորությունը (կողմ՝ 6, դեմ՝ 0):

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*
Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Ա.Հ-ի վերաբերյալ

06 փետրվարի 2020թ ԿՀՈ 3
ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կարգապահական հանձնաժողովը (այսուհետ՝ Կարգապահական հանձնաժողով), ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Ա.Հ-ի (այսուհետ՝ նաև քննիչ) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

ՀՀ քննչական կոմիտեի տարածքային քննչական վարչությունների գործունեության վերահսկողության գլխավոր վարչության պետի պաշտոնակատար Ս.Մ-ի միջնորդության առթիվ կատարված նախնական ուսումնասիրությամբ պարզվել է, որ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Ա.Հ-ն իր լիազորություններն իրականացնելիս թիվ 09195818 քրեական գործով առերևույթ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է ավագ քննիչ Ա.Հ-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումն ըստ ստորև նշված դրվագի.

Քրեական գործով 25.11.2019թ. որոշում է կայացրել Յ.Գ-ին որպես մեղադրյալ ներգրավելու մասին և նույն օրը նրան և պաշտպանին հայտարարել որոշումը և բացատրել առաջադրված մեղադրանքի էությունը, սակայն, մեղադրանք առաջադրելիս մեղադրյալին չի բացատրել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքները և պարտականությունները, դրանց ցանկը չի հանձնել մեղադրյալին և չի կազմել արձանագրություն մեղադրանքի առաջադրման, մեղադրյալին նրա իրավունքները բացատրելու և որոշման պատճենը հանձնելու մասին, Յ.Գ-ին մեղադրանք առաջադրելուց հետո՝ անհապաղ, բայց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում, չի հարցաքննել առաջադրված մեղադրանքի էության, ինչպես նաև՝ գործի համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների վերաբերյալ: Արդյունքում՝ քննիչը չի պահպանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ մասի, 65-րդ հոդվածի, 203-րդ հոդվածի 3-րդ մասի և 212-րդ հոդվածի 1-ին, 7-րդ և 8-րդ մասերի պահանջները:

Հիշյալ առերևույթ կարգապահական խախտման վերաբերյալ Ա.Հ-ն իր դիրքորոշումը ներկայացրել է Կարգապահական հանձնաժողովի նախագահին ուղղված դիմումով, որով ընդունել է դատավարական խախտումներ թույլ տալու հանգամանքը և խնդրել նիստն անցկացնել առանց իրեն:

ՈՒսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչը կոպտորեն խախտել է դատավարական ընթացակարգի կարևորագույն բաղադրամասերից մեկը, այն է՝ 25.11.2019թ. որոշում է կայացրել Յ.Գ-ին որպես մեղադրյալ ներգրավելու մասին և նույն օրը նրան և պաշտպանին հայտարարել որոշումը և բացատրել առաջադրված մեղադրանքի էությունը, սակայն, մեղադրանք առաջադրելիս մեղադրյալին չի բացատրել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքները և պարտականությունները, դրանց ցանկը չի հանձնել

մեղադրյալին և չի կազմել արձանագրություն մեղադրանքի առաջադրման, մեղադրյալին նրա իրավունքները բացատրելու և որոշման պատճենը հանձնելու մասին, Յ.Գ-ին մեղադրանք առաջադրելուց հետո՝ անհապաղ, բայց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում, չի հարցաքննել առաջադրված մեղադրանքի էության, ինչպես նաև՝ գործի համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների վերաբերյալ: Արդյունքում՝ քննիչը չի պահպանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ մասի, 65-րդ հոդվածի, 203-րդ հոդվածի 3-րդ մասի և 212-րդ հոդվածի 1-ին, 7-րդ և 8-րդ մասերի պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 2-րդ ենթակետով և 48-50-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածով նախատեսված մեղադրյալի իրավունքներն ու պարտականությունները չբացատրելու, դրանց ցանկը մեղադրյալին չհանձնելու, մեղադրանքի առաջադրման, մեղադրյալին նրա իրավունքները բացատրելու և որոշման պատճենը հանձնելու մասին արձանագրություն չկազմելու, Յ.Գ-ին մեղադրանք առաջադրելուց հետո՝ անհապաղ, բայց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում, առաջադրված մեղադրանքի էության, ինչպես նաև՝ գործի համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների վերաբերյալ չհարցաքննելու դրվագով Ա.Հ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և մեղավորությունը:

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*
Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ Է.Ա-ի և ՀԿԳ քննիչ Է.Վ-ի վերաբերյալ

06 փետրվարի 2020թ. ԿՀՈ 4
ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կարգապահական հանձնաժողովը (այսուհետ՝ Կարգապահական հանձնաժողով), ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ Է.Ա-ի (այսուհետ՝ նաև քննիչ) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Նախնական ուսումնասիրության առիթ է հանդիսացել ՀՀ դատախազության Շիրակի դատախազության դատախազ Կ.Ս-ի միջնորդությունը՝ ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ Է.Ա-ի վարույթում քննված թիվ 68105119 քրեական գործով վերջինիս կողմից իր լիազորություններն իրականացնելիս քրեադատավարական օրենքի կոպիտ խախտումներ թույլ տալու վերաբերյալ:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է Է.Ա-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագի.

01.08.2019թ. քրեական գործով համալիր դատանյութագիտական և դատահետքաբանական փորձաքննություն նշանակված լինե-

լու պայմաններում որոշումը մինչև 08.10.2019թ. ընկած ժամանակահատվածը, երբ արդեն իսկ կատարված վիճակում ստացվել է փորձագետի եզրակացությունը, չի ծանոթացրել քրեական գործով մեղադրյալ Գ.Թ-ին, նրա շահերի պաշտպան Վ.Մ-ին և տուժող Հ.Մ-ին՝ այդ կերպ նրանց զրկելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի 1-ից 7-րդ կետերով սահմանված իրավունքների իրացման իրական հնարավորությունից: Արդյունքում՝ քննիչ Է.Ա-ը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների առերևույթ խախտում:

Առերևույթ կարգապահական խախտումներ թույլ տալու վերաբերյալ ՀԿԳ ավագ քննիչ Է.Ա-ը Կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ հայտնեց, որ ընդունում է իր կողմից առերևույթ թույլ տրված խախտումը, որի վերաբերյալ պնդեց նախնական ուսումնասիրության ընթացքում տված բացատրությունում նշած հանգամանքները:

Ուսումնասիրելով նյութերը՝ Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ ՀԿԳ ավագ քննիչ Է.Ա-ն խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ քննիչ Է.Ա-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

Կարգապահական հանձնաժողովն ի պաշտոնե պարզեց նաև, որ վերոհիշյալ դրվագով՝ հիշյալ գործով վարույթն իրականացրած ՀԿԳ քննիչ Է.Վ-ի կողմից նույնպես թույլ է տրվել քրեադատավարական օրենքի միևնույն առերևույթ խախտումը, այն է՝ 01.08.2019թ. քրեական գործով նշանակել է համալիր դատանյութագիտական և դատահետքաբանական փորձաքննություն, սակայն քրեական գործով վարույթը 09.08.2019թ.-ին զեկուցագրով հանձնելուն նախորդող ժամանակահատվածում չի ծանոթացրել քրեական գործով մեղադրյալ Գ.Թ-ին, նրա շահերի պաշտպան Վ.Մ-ին և տուժող Հ.Մ-ին՝ այդ կերպ նրանց զրկելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի

247-րդ հոդվածի 1-ին մասի 1-ից 7-րդ կետերով սահմանված իրավունքների իրացման իրական հնարավորությունից: Արդյունքում՝ քննիչ Է.Վ-ն թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների առերևույթ խախտում:

Առերևույթ կարգապահական խախտումներ թույլ տալու վերաբերյալ քննիչ Է.Վ-ն Կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ հայտնեց, որ 26.07.2019թ. որոշում է կայացրել թիվ 68105119 քրեական գործը վարույթ ընդունելու մասին, 31.07.2019թ. օպերատիվ հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին հանձնարարություն է տվել հետաքննության մարմնին, որից հետո՝ 01.08.2019թ. տուժող Հ.Մ-ի՝ դեպքի պահին հագին եղած հագուստներով նշանակել է համալիր դատանյութագիտական և դատահետքաբանական փորձաքննություն: 02.08.2019թ. նախաքննության ժամկետը երկարացնելու միջնորդություն է հարուցել դատախազին և միջնորդությունը քրեական գործի հետ միասին ուղարկել է մարզի դատախազություն: 07.08.2019թ. դատախազությունից ստացվել է քրեական գործը՝ նախաքննության ժամկետը երկարացնելու միջնորդությունը բավարարելու որոշման հետ միասին, իսկ 09.08.2019թ. քննչական վարչության պետի տեղակալի բանավոր պահանջով ներկայացրել է քրեական գործը: Ըստ էության քննիչ Է.Վ-ը չընդունեց իր կողմից քրեադատավարական օրենքի առերևույթ խախտում թույլ տալու հանգամանքը՝ պնդելով, որ հիշյալ որոշումը կայացնելուց հետո քրեական գործն իր վարույթում փաստացի գտնվել է 3 օր, բացի այդ, քրեադատավարական օրենքով սահմանված է, որ փորձաքննություն նշանակելու մասին որոշումը կողմերին պետք է ծանոթացվի մինչև փորձաքննությունը կատարելը:

Ուսումնասիրելով նյութերը՝ Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչ Է.Վ-ն խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի սահմանված պահանջները, քանի որ հնարավորություն է ունեցել կողմերին ծանոթացնել հիշյալ փորձաքննությունը նշանակելու մասին որոշմանը:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ քննիչ Է.Վ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով, 48-50-րդ կետերով,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Թիվ 68105119 քրեական գործով 01.08.2019թ. համալիր դատանյութագիտական և դատահետքաբանական փորձաքննություն նշանակելու մասին որոշումը մեղադրյալ Գ.Թ-ին, նրա շահերի պաշտպան Վ.Մ-ին և տուժող Հ.Մ-ին չծանոթացնելու մասով վարույթն իրականացրած քննիչներ՝ Է.Ա-ի և Է.Վ-ի արարքներում առկա է կարգապահական խախտման փաստը և նրանց մեղավորությունը:

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*
Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության չորրորդ կայազորային քննչական բաժնի քննիչ Ռ.Վ-ի վերաբերյալ

06 փետրվարի 2020թ. ԿՀՈ 5
ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կարգապահական հանձնաժողովը (այսուհետ՝ Կարգապահական հանձնաժողով), ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության չորրորդ կայազորային քննչական բաժնի քննիչ Ռ.Վ-ի (այսուհետ՝ նաև քննիչ) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Նախնական ուսումնասիրության առիթ է հանդիսացել ՀՀ զինվորական դատախազության Երևանի կայազորի զինվորական դատախազության դատախազ Դ.Հ-ի միջնորդությունը՝ ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության չորրորդ կայազորային քննչական բաժնի քննիչ Ռ.Վ-ի վարույթում քննված թիվ 90208518 քրեական գործով վերջինիս կողմից իր լիազորություններն իրականացնելիս քրեադատավարական օրենքի կոպիտ խախտումներ թույլ տալու վերաբերյալ:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է Ռ.Վ-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագի.

03.12.2018թ. որոշում է կայացրել մեղադրյալ Կ.Մ-ի նկատմամբ որպես խափանման միջոց հրամանատարության հսկողության հանձնելը կիրառված խափանման միջոցը փոփոխելու և նոր խափանման միջոց՝ ստորագրություն չհեռանալու մասին կիրառելու վերաբերյալ, որից հետո համապատասխան գրություններ չի ուղարկել ՀՀ ոստիկանության ՔՀԳՎ և ԱՎՎ՝ սահմանափակելու մեղադրյալի ՀՀ-ից ելքը և անձնագրային գործարքներ չկատարելը, որի արդյունքում մեղադրյալ Կ.Մ-ն 27.09.2019թ. լքել է Հայաստանի Հանրապետությունը:

Արդյունքում՝ քննիչ Ռ.Վ-ն չի պահպանել ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 01.10.2015թ. N 91 հանձնարականի և ՀՀ կառավարության 22.06.2006թ. N 884-Ն որոշմամբ սահմանված պահանջները:

Առերևույթ կարգապահական խախտումներ թույլ տալու վերաբերյալ քննիչ Ռ.Վ-ն Կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ հայտնեց, որ ընդունում է իր կողմից առերևույթ թույլ տրված խախտումները, որոնց վերաբերյալ պնդել է նախնական ուսումնասիրության ընթացքում իր տված բացատրությունները: Հայտնեց նաև, որ հետայսու առավել աչալուրջ և զգոն կլինի աշխատանքային պարտականությունների կատարման մեջ:

Ուսումնասիրելով նյութերը՝ Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչ Ռ.Վ-ն խախտել է ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 01.10.2015թ. N 91 հանձնարականի և ՀՀ կառավարության 22.06.2006թ. N 884-Ն որոշմամբ սահմանված պահանջները:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ քննիչ Ռ.Վ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի

աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով, 48-50-րդ կետերով,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Թիվ 90208518 քրեական գործով մեղադրյալ Կ.Մ-ի նկատմամբ ստորագրություն չհեռանալու մասին որպես խափանման միջոց կիրառելուց հետո, ՀՀ ոստիկանության ՔՀԳՎ և ԱՎՎ՝ գրություններ չուղարկելու՝ մեղադրյալի ՀՀ-ից ելքը և անձնագրային գործարքներ կատարելը չսահմանափակելու արդյունքում մեղադրյալ Կ.Մ-ի կողմից Հայաստանի Հանրապետությունը լքելու դրվագով քննիչ Ռ.Վ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*
Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի նախկին ավագ քննիչ, ներկայում՝ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ Լ.Հ-ի վերաբերյալ

06 փետրվարի 2020թ. ԿՀՈ 6
ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կարգապահական հանձնաժողովը (այսուհետ՝ Կարգապահական հանձնաժողով), ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի նախկին ավագ քննիչ, ներկայում՝ Մալաթիս-Սեբաստիա վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ Լ.Հ-ի (այսուհետ՝ նաև քննիչ) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Նախնական ուսումնասիրության առիթ է հանդիսացել ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալ Ա.Պ-ի և ՀՀ դատախազության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության ավագ դատախազ Տ.Պ-ի միջնորդությունները՝ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի նախկին ավագ քննիչ, ներկայում՝ Մա-

լաթիս-Սեբաստիա վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ Լ.Հ-ի վարույթում քննված թիվ 15867817 քրեական գործով վերջինիս կողմից իր լիազորություններն իրականացնելիս քրեադատավարական օրենքի կոպիտ խախտումներ թույլ տալու վերաբերյալ:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է Լ.Հ-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագի.

Թիվ 15867817 քրեական գործի նախաքննության ընթացքում՝ 07.10.2018թ-ին նշանակել է հանձնաժողովային դատաբժշկական փորձաքննություն, որը քննչական բաժնի տարածքային բաժնում չի ելքագրել, համապատասխան փորձագիտական հիմնարկ չի ուղարկել և որոշման պատճենը քրեական գործի նյութերին չի կցել, սակայն փորձաքննության եզրակացությունը ստացված չլինելու պատճառաբանությամբ քրեական գործով նախաքննության ընթացքում առանց որևէ քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու, 5 անգամ՝ 26.12.2018թ., 25.02.2019թ., 24.04.2019թ., 24.06.2019թ. և 23.08.2019թ., նախաքննության ժամկետը երկարացնելու միջնորդություններ է հարուցել դատավարական ղեկավարում իրականացնող դատախազին, ինչի արդյունքում տևական ժամանակ և անհարկի ձգձգվել է նախաքննությունը: Արդյունքում՝ քննիչ Լ.Հ-ն չի պահպանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասով և 55-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջները:

Առերևույթ կարգապահական խախտումներ թույլ տալու վերաբերյալ քննիչ Լ.Հ-ն Կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ հայտնեց, որ 07.10.2018թ-ին նշանակել է հանձնաժողովային դատաբժշկական փորձաքննություն, քննչական բաժնի պետի տեղակալ Է.Ա-ի կողմից գրությունը ստորագրելուց հետո գնացել է քննչական բաժնի գրասենյակ՝ այն ելքագրելու և սահմանված կարգով փորձագիտական հիմնարկ ուղարկելու նպատակով, սակայն, ընդմիջման պատճառով, գրասենյակը փակ է եղել: Դրանից հետո ձեռնամուխ է եղել վարույթում քննվող այլ քրեական գործերով անհետաձգելի քննչական գործողություններ կատարելուն, իսկ վարույթում

տվյալ ժամանակ քննվել է 35 քրեական գործ, այդ թվում՝ մի քանի մեծածավալ և բազմադրվագ քրեական գործեր, ուստի, զբաղված լինելով դրանցով նախաքննության կատարմամբ՝ հիշյալ որոշումը մոռացել է ուղարկել ՀՀ ԱՆ ԴԲԳԳԿ, երկրորդ օրինակն էլ՝ կարել քրեական գործի նյութերում: Այնուհետև, հիշյալ քրեական գործով առանց որևէ քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու, փորձաքննության եզրակացությունը ստացված չլինելու պատճառաբանությամբ 5 անգամ՝ 26.12.2018թ., 25.02.2019թ., 24.04.2019թ., 24.06.2019թ. և 23.08.2019թ., նախաքննության ժամկետը երկարացնելու միջնորդություններ է հարուցել դատավարական ղեկավարում իրականացնող դատախազին: Հայտնել է, որ ընդունում է իր կողմից առերևույթ թույլ տրված դատավարական խախտումները, որոնց վերաբերյալ պնդել է նախնական ուսումնասիրության ընթացքում իր տված բացատրությունները: Հայտնել է նաև, որ հետայսու առավել աչալուրջ և զգոն կլինի աշխատանքային պարտականությունների կատարման մեջ:

Ուսումնասիրելով նյութերը՝ Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչ Լ.Հ-ն խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասով և 55-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջները:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ քննիչ Լ.Հ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով, 48-50-րդ կետերով,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Թիվ 15867817 քրեական գործով 07.10.2018թ-ին նշանակված հանձնաժողովային դատաբժշկական փորձաքննությունը համապատասխան փորձագիտական հիմնարկ չուղարկելու և այդ պայմաններում, հիշյալ քրեական գործով առանց որևէ քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու, փորձաքննության եզրակացությունը ստացված չլինելու պատճառաբանությամբ 5 անգամ, շուրջ մեկ տարի՝ 26.12.2018թ., 25.02.2019թ., 24.04.2019թ., 24.06.2019թ. և 23.08.2019թ., նախաքննության ժամկետը երկարացնելու միջնորդություններ հարուցելու դրվագով քննիչ Լ.Հ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը: 2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*
Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Գ.Ղ-ի վերաբերյալ

27 փետրվարի 2020թ. ԿՀՈ 7
ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կարգապահական հանձնաժողովը (այսուհետ՝ նաև Կարգապահական հանձնաժողով), ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ, երկրորդ դասի խորհրդական Գ.Ղ-ի (այսուհետ՝ նաև քննիչ) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

ՀՀ դատախազության Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազության դատախազ Վ.Ա-ի միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Գ.Ղ-ի վարույթում՝ ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցված և քննված թիվ 13123719 քրեական գործով նախաքննության ընթացքում, վերջինս իր

լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմը:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է Գ.Ղ-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումն ըստ ստորև նշված դրվագի.

ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցված և քննված թիվ 13123719 քրեական գործով ավագ քննիչ Գ.Ղ-ն 19.12.2019թ. իր կողմից ներկայացված՝ քրեական գործի նախաքննության ժամկետը երկարացնելու մասին միջնորդության կապակցությամբ, հայցված երկու ամիս դատավարական ղեկավարում իրականացնող դատախազի կողմից համապատասխան հիմնավորումներով՝ /առանց քրեական գործի ստուգմամբ հնարավոր չէ գնահատական տալ նախաքննության՝ համապատասխան ժամկետով երկարացնելու պատճառաբանությանը/, մասնակի՝ վեց օրով բավարարելու պայմաններում, գիտակցելով, որ առանց քրեական գործի նյութերին ծանոթանալու, ներկայացված հաջորդ միջնորդության քննարկման արդյունքում դատախազի կողմից արձանագրվելու է իրավունքի խախտում և հայցվող ժամկետի պատճառաբանվածության և հիմնավորվածության հարցը գնահատելիս, կրկին առկախված մնալու պայմաններում, բարձր է դատախազական ներգործության միջոցի կիրառման հավանականությունը, 25.12.2019թ. քրեական գործի նախաքննության ժամկետը երկարացնելու միջնորդությունը դատախազին ուղարկելով, նրան դարձյալ չի տրամադրել քրեական գործի նյութերը և այդ կապակցությամբ որևէ գրավոր հիմնավորում: Արդյունքում՝ քննիչը առերևույթ կոպիտ կերպով խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 2րդ մասի 2-րդ կետի պահանջը:

Հիշյալ առերևույթ կարգապահական խախտման վերաբերյալ Գ.Ղ-ն Կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ հայտնեց, որ 19.12.2019թ. իր կողմից միջնորդություն է ներկայացվել դատախազին՝ քրեական գործի նախաքննության ժամկետը 2 ամիս երկարացնելու մասին: 2019թ. դեկտեմբերի 20-ին դատախազի կողմից որոշում է կայացվել ներկայացված միջնորդությունը մասնակի՝ 6

օր ժամկետով, բավարարելու մասին և պահանջել է գործն ուղարկել վարչական շրջանների դատախազություն: Նշված որոշումը և կից գրությունը Արաբկիրի վարչական շրջանի քննչական բաժին է ստացվել 2019թ. դեկտեմբերի 24-ին: Քանի որ հաջորդ օրը՝ 2019թ. դեկտեմբերի 25-ին լրանում էր նախաքննության ժամկետի օրը, կրկին միջնորդություն է հարուցել քրեական գործով նախաքննության ժամկետը երկարացնելու վերաբերյալ, նպատակ ունենալով գործը սկանավորել և կազմակերպել վկաների առերեսումը, որից հետո գործն ուղարկել դատախազին, այնինչ 2019թ. դեկտեմբերի 27-ին ստացվել է դատախազի որոշումը՝ իրեն քրեական դատավարությանը մասնակցելուց հեռացնելու վերաբերյալ: Այսինքն, փաստացի քրեական գործը դատախազին չի ուղարկել ընդամենը 2 օր:

ՈՒսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Գ.Ղ-ն իր լիազորություններն իրականացնելիս կոպիտ կերպով խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 2րդ մասի 2-րդ կետի պահանջը, այն է՝ ստուգման համար դատավարական ղեկավարում իրականացնող դատախազի պահանջով վերջինիս չի տրամադրել քրեական գործի նյութերը, ինչով դատախազին զրկել է օրենքով նախատեսված լիազորություններն իրականացնելուց:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ հիշյալ դրվագով Գ.Ղ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 31-րդ հոդվածի 9-րդ մասով, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ հաստատված «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնա-

ժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 2-րդ ենթակետով և 48-50-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Թիվ 13123719 քրեական գործի նյութերը դատավարական ղեկավարում իրականացնող դատախազի պահանջով վերջինիս չտրամադրելու դրվագով Գ.Ղ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և մեղավորությունը:

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*

Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության վեցերորդ կայազորային քննչական բաժնի պետ Դ.Ֆ-ի և նույն բաժնի պետի տեղակալ Կ.Ա-ի վերաբերյալ

27 փետրվարի 2020թ. ԿՀՈ 8
ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կարգապահական հանձնաժողովը (այսուհետ՝ Կարգապահական հանձնաժողով), ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության վեցերորդ կայազորային քննչական բաժնի պետ Դ.Ֆ-ի (այսուհետ՝ նաև անմիջական վերադաս) և նույն բաժնի պետի տեղակալ Կ.Ա-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Տ

Նախնական ուսումնասիրության առիթ է հանդիսացել ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության ավագ դատախազ Վ.Հ-ի միջնորդությունը՝ ՀՀ քննչական կոմիտեի ԶՔԳՎ 6-րդ կայազորային քննչական բաժնում քննվող թիվ 90756418 քրեական գործով նախաքննության ընթացքում վարույթն իրականացրած քննիչ Ս.Ո-ի (ներկայում Կոմիտեի նախկին ծառայող) կողմից իր լիազորություններն իրականացնելիս քրեադատավարական օրենքի կոպիտ խախտում թույլ տալու վերաբերյալ:

ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության արդյունքներով

պարզվել է, որ թիվ 90756418 քրեական գործով նախաքննության ընթացքում քրեադատավարական օրենքի առերևույթ խախտումներ են թույլ տրվել նաև ավագ քննիչ Ս.Ռ-ի անմիջական վերադաս Կ.Ա-ի և վերջինիս վերադաս Դ.Ֆ-ի կողմից, ինչի կապակցությամբ նույնպես ՀՀ քննչական կոմիտեի նախագահը միջնորդություն է հարուցել Կարգապահական հանձնաժողովին՝ կարգապահական վարույթ հարուցելու համար:

ՀՀ քննչական կոմիտեի նախագահը՝ ավագ քննիչ Ս.Ռ-ի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու համար, Կարգապահական հանձնաժողովին միջնորդություն է ներկայացրել օրենքի առերևույթ խախտումներ թույլ տալու վերաբերյալ, ըստ ստորև նշված դրվագների.

1. Քննիչ Ս.Ռ-ն ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով հարուցված և վարույթում քննված քրեական գործով 06.11.2019թ. մեղադրյալ Ա.Ա-ին և վերջինիս պաշտպան Տ.Ա-ին նախաքննության ավարտի մասին հայտնելուն նախորդող ժամանակահատվածում չի լուծել 20.08.2019թ. գրությամբ հետաձգված պաշտպան Տ.Ա-ի 15.08.2019թ. միջնորդությունը և պատճառաբանված որոշում չի կայացրել այն ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժելու մասին, ինչով իսկ քննիչը չի պահպանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 2-րդ մասի և 199-րդ հոդվածի պահանջները:

2. Բացի այդ, թիվ 90756418 քրեական գործով առանց փորձաքննվողին հետազոտելու, նրա հիվանդության վերաբերյալ առկա վիճահարույց փաստաթղթերի հիմքով 09.10.2019թ. ստացված եզրակացության պայմաններում, օրենքով սահմանված դատավարական կարգի պահպանմամբ չհետազոտելով քրեական գործում առկա նյութերը, պատշաճ չգնահատելով գործում առկա յուրաքանչյուր ապացույց վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, գործի օրինական, հիմնավորված և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքներ բա-

ցահայտելու նպատակով ապացույցներ հավաքելիս չպահպանելով դրանք ստուգելու և գնահատելու օրենսդրական պահանջը, դրսևորելով անհարկի շտապողականություն՝ 06.11.2019թ. մեղադրյալ Ա.Ա-ին և վերջինիս պաշտպան Տ.Ա-ին հայտնել է նախաքննության ավարտի մասին, որից հետո նոր միայն 13.11.2019թ.՝ համապատասխան միջնորդության բացակայության պայմաններում, նշանակել է կրկնակի փորձաքննությունը, այսինքն՝ քննիչը չի պահպանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ մասի, 124-րդ հոդվածի 1-ին մասի և 127-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները:

3. Բացի այդ, թիվ 90756418 քրեական գործով 13.11.2019թ.՝ նշանակել է կրկնակի դատաբժշկական հանձնաժողովային փորձաքննություն, սակայն որոշման մեջ չի նշել նախկին փորձաքննության արդյունքների հետ չհամաձայնվելու շարժառիթները՝ բավարարվելով միայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 251-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների տառացի մեկնաբանմամբ, այն է՝ որպես պատճառաբանություն բառացի նշել է. «...վարույթն իրականացնող մարմնի գնահատմամբ փորձագիտական հանձնաժողովի կողմից տրված եզրակացությունը չի բխում գործի նյութերից, հիմնավորված չէ և կասկած է հարուցում...»: Արդյունքում՝ քննիչի կողմից չի պահպանվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 244-րդ հոդվածի և 251-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, այն է՝ «Քրեական հետապնդման մարմինը փորձաքննություն նշանակելու մասին կայացնում է որոշում, որում պետք է նշվեն՝ փորձաքննությունը նշանակելու հիմքերը...» և «...2. Կրկնակի փորձաքննությունը կատարվում է, երբ փորձագետի եզրակացությունը հիմնավորված չէ կամ կասկած է հարուցում, կամ ապացույցները, որոնց վրա հիմնված է եզրակացությունը, ճանաչվել է ոչ հավաստի կամ խախտվել են փորձաքննության կատարման դատավարական կանոնները: Կրկնակի փորձաքննության կատարումը հանձնարարվում է ուրիշ փորձագետի: Կրկնակի փորձաքննություն նշանակելիս փորձագետի առջև կարող է դրվել նախկին հետազոտությունների ընթացքում կիրառված մեթոդների գիտական հիմնավորվածության հարցը: Կրկնակի փորձաքննություն

կատարելու մասին որոշման մեջ պետք է նշվեն նախկին փորձաքննության արդյունքների հետ չհամաձայնվելու շարժառիթները: Նախկին փորձաքննությունը կատարած փորձագետները կարող են ներկա գտնվել կրկնակի փորձաքննությանը, տալ պարզաբանումներ, սակայն հետազոտմանը և եզրակացություն կազմելիս նրանք չեն մասնակցում»:

06.02.2020թ.՝ ՀՀ քննչական կոմիտեի նախագահի միջնորդությունը՝ ավագ քննիչ Ս.Ո-ի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ, քննելիս Կարգապահական հանձնաժողովը պարզել է, որ ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 03.02.2020թ. թիվ 58-Ա հրամանով Ս.Ո-ն իր գրավոր դիմումի հիման վրա ազատվել է զբաղեցրած պաշտոնից, ուստի, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ.՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին որոշմամբ հաստատված հավելվածի 34-35-րդ կետերով՝ Կարգապահական հանձնաժողովը որոշել է մերժել ավագ քննիչ Ս.Ո-ի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ միջնորդությունը:

Վերոնշյալ միջնորդությամբ ՀՀ քննչական կոմիտեի նախագահը միջնորդել է նաև ավագ քննիչ Ս.Ո-ի անմիջական վերադաս Կ.Ա-ի և վերջինիս վերադաս Դ.Ֆ-ի նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ՝ օրենքի առերևույթ խախտումներ թույլ տալու վերաբերյալ, ըստ ստորև նշված դրվագների.

4. Իր հերթին, քննիչի անմիջական վերադաս՝ բաժնի պետի տեղակալ Կ.Ա-ն չի հետևել իրեն անմիջականորեն ենթակա քննիչ Ս.Ո-ի վարույթում ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության դեպքով վերջինիս կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջների պահպանմամբ մինչդատական վարույթ իրականացնելուն և քրեական գործով քննչական գործողությունները ժամանակին կատարելուն, ինչի արդյունքում քննիչի կողմից չեն պահպանվել ՀՀ քրեական դատավա-

ության օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ մասի, 102-րդ հոդվածի 2-րդ մասի, 124-րդ հոդվածի 1-ին մասի, 127-րդ հոդվածի 1-ին մասի, 199-րդ հոդվածի, 244-րդ հոդվածի և 251-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, իսկ Կ.Ա-ի կողմից չեն պահպանվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և ՀՀ ՔԿ ԶՔԳՎ պետի թիվ 8-Լ հրամանի 1-ին մասի 3-րդ կետի ա. ենթակետի պահանջները:

5. Իր հերթին, ՀՀ ՔԿ ԶՔԳՎ 6-րդ կայազորային քննչական բաժնի պետ Դ.Ֆ-ն չի ապահովել բաժնի պետի տեղակալ Կ.Ա-ի կողմից ՀՀ ՔԿ ԶՔԳՎ պետի թիվ 8-Լ հրամանի կատարումը, ինչով իսկ Դ.Ֆ-ն չի պահպանել ՀՀ ՔԿ ԶՔԳՎ պետի թիվ 8-Լ հրամանի 2-րդ մասի պահանջը:

Հիշյալ դրվագով առերևույթ կարգապահական խախտման վերաբերյալ Գ.Ֆ-ն և Կ.Ա-ն Կարգապահական հանձնաժողովին ըստ էության տված բացատրությամբ չընդունեցին իրենց մեղավորությունը՝ հավելելով, որ տեղյակ չեն եղել, որ քննիչը նախաքննության ավարտ է հայտնել կողմին, իսկ հիշյալ փորձաքննությունը նշանակելու վերաբերյալ քննիչի հետ ունեցել են բանավոր քննարկում, վերջինս հայտնել է, որ անհրաժեշտ է եղել նշանակել նշված փորձաքննությունը, համաձայնության են եկել նաև Գ.Ֆ-ի հետ, սակայն, վերջինս փորձաքննության որոշումը չի տեսել:

Ուսումնասիրելով նյութերը, լսելով Դ.Ֆ-ին և Կ.Ա-ին, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչի կողմից թույլ տրված կարգապահական խախտումների մեջ նրանց անմիջական մեղավորությունը և պատճառահետևանքային կապը չկա: Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ Դ.Ֆ-ի և Կ.Ա-ի արարքում բացակայում է մեղքը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի

աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով, 48-50-րդ կետերով,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Թիվ 90756418 քրեական գործով նախաքննության ընթացքում քրեադատավարական օրենքի առերևույթ խախտումներ թույլ տալու փաստն առկա է, սակայն, դրանցում բացակայում է ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության վեցերորդ կայազորային քննչական բաժնի պետի տեղակալ Կ.Ա-ի և նույն բաժնի պետ Դ.Ֆ-ի մեղքը:

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*
Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ՔԿ Երևան քաղաքի քննչական վարչության Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Լ.Հ-ի վերաբերյալ
(Կարգապահական խախտման փաստի բացակայության մասին)

11 մարտի 2020թ. ԿՀՈ 9
ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) Կարգապահական հանձնաժողովը (այսուհետ՝ Կարգապահական հանձնաժողով), ՀՀ ՔԿ Երևան քաղաքի քննչական վարչության Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Լ.Հ-ի (այսուհետ՝ նաև քննիչ) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

ՀՀ դատախազության Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազության դատախազ Հ.Ս-ի միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Լ.Հ-ի վարույթում քննված թիվ 14188519 քրեական գործով նախաքննության ընթացքում, վերջինս իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է ավագ քննիչ Լ. Հ-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագների.

1. Քննիչի կողմից խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը, ըստ որի՝ գործում եղած յուրաքանչյուր փաստաթուղթ գործին կցվելով՝ անմիջապես պետք է ըստ էջերի համարակալվի: Քրեական վարույթն իրականացնող մարմիններն իրականացնում են գործի էջերի հերթական համարակալումը՝ դրանց կցման ժամանակագրական կարգով: Քննարկվող դեպքում քրեական գործում առկա փաստաթղթերից համարակալված են եղել մինչ 4-րդ հատորի 286-րդ էջը, իսկ մնացած 144 էջերը քննիչը չի համարակալել և քրեական գործը այդ վիճակում նախաքննության ժամկետը երկարացնելու միջնորդությամբ 13.12.2019թ. ուղարկել է դատախազին:

Հիշյալ առերևույթ կարգապահական խախտման վերաբերյալ Լ.Հ-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց, որ քրեական գործի չորս հատորները համարակալել է, սակայն 144 էջ չի համարակալել, քանի որ ցանկացել է դրանք առանձնացնել առանձին հատորում, սակայն նախաքննության ժամկետները չխախտելու պատճառով չի հասցրել և քրեական գործն այդ վիճակով ուղարկել է վարչական շրջանների դատախազություն:

ՈՒսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչը համարակալել է քրեական գործի չորս հատորները, իսկ մնացած 144 էջերը չի հասցրել համարակալել և այդ վիճակով քրեական գործն ուղարկել է վարչական շրջանների դատախազություն, որպիսի պայմաններում թեև առկա է կարգապահական խախտման փաստը, սակայն այն կոպիտ չէ:

2. Քննիչի կողմից խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 282-րդ հոդվածի 3-րդ մասի, 283-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջները: Մասնավորապես՝ 2019 թվականի դեկտեմբերի 9-ին կայացրած հեռախոսահամարների բաժանորդների տվյալները ստանալու և հեռախոսազանգերը վերծանելու թույլտվություն ստանալու

միջնորդություն հարուցելու մասին և բանկային գաղտնիք հանդիսացող տեղեկություններ առգրավելու թույլտվություն ստանալու միջնորդություն հարուցելու մասին որոշումների, այնպես էլ միջնորդությունները բավարարելու մասին որոշումների պատճենները ընդհանրապես չի ուղարկել քրեական գործի մինչդատական վարույթի նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազին, ինչով զրկել է դատախազին հիշյալ որոշումներին ծանոթանալու, դրանք հետ վերցնելու կամ բողոքարկելու իր իրավունքը իրացնելուց:

Հիշյալ առերևույթ կարգապահական խախտման վերաբերյալ Լ.Հ-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում վերը հիշատակված հոդվածներում կատարված փոփոխություններն ուժի մեջ են մտել 2019թ. դեկտեմբերի 9-ին և նույն օրն էլ իր կողմից ներկայացվել են միջնորդությունները: Կատարված փոփոխությունների մասին տեղեկացել է միայն 2019թ. դեկտեմբերի 19-ին, երբ քննչական բաժնի պետի կողմից այդ կապակցությամբ հրավիրվել է օպերատիվ խորհրդակցություն:

ՈՒսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում վերոգրյալ հոդվածներում կատարված փոփոխությունները ուժի մեջ եմ մտել 2019թ. դեկտեմբերի 9-ին և նույն օրը քննիչի կողմից ներկայացվել են հիշյալ միջնորդությունները, որոնք բավարարվել են դատարանի կողմից, սակայն քննիչն այդ փոփոխությունների մասին փաստացի իրազեկվել է միայն 2019թ. դեկտեմբերի 19-ին՝ քննչական բաժնում հրավիրված օպերատիվ խորհրդակցության ընթացքում: Բացի այդ, «Առլիս» տեղեկատվական համակարգում ևս հաճախ նույն օրը տեղադրված չի լինում արդեն իսկ ուժի մեջ մտած օրենսդրական փոփոխությունները և քննիչը ֆիզիկապես հնարավորություն չի ունենում իրազեկվելու փոփոխությունների մասին: Վերը նկարագրվածի պայմաններում թեև առկա է կարգապահական խախտման փաստը, սակայն բացակայում է քննիչի մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 2-րդ ենթակետով և 48-50-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը խախտելու դրվագով Լ.Հ-ի արարքում բացակայում է կարգապահական խախտման փաստը:

2. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 282-րդ հոդվածի 3-րդ մասի, 283-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջները խախտելու դրվագով Լ.Հ-ի արարքներում առկա է կարգապահական խախտման փաստը, սակայն բացակայում է վերջինիս մեղավորությունը:

3. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*
Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության 4-րդ կայազորային քննչական բաժնի ՀԿԳ քննիչ Գ.Թ-ի վերաբերյալ

11 մարտի 2020թ. ԿՀՈ 10
ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կարգապահական հանձնաժողովը (այսուհետ՝ Կարգապահական հանձնաժողով), ՀՀ քննչական կոմիտեի ԶՔԳՎ 4-րդ կայազորային քննչական բաժնի ՀԿԳ քննիչ Գ.Թ-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Նախնական ուսումնասիրության առիթ է հանդիսացել ՀՀ դատախազության Երևանի կայազորի զինվորական դատախազության դատախազ Է.Շ-ի միջնորդությունը՝ ՀՀ քննչական կոմիտեի ԶՔԳՎ 4-րդ կայազորային քննչական բաժնի ՀԿԳ քննիչ Գ.Թ-ի վարույթում քննված թիվ 90299317 քրեական գործով վերջինիս կողմից իր լիազորություններն իրականացնելիս քրեադատավարական օրենքի կոպիտ խախտումներ թույլ տալու վերաբերյալ:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է Գ.Թ-ի վերագրվող օրենքի առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագի.

Թիվ 90299317 քրեական գործով 31.10.2019թ. մեղադրյալ Լ.Ս-ին մեղադրանք առաջադրելուց հետո ՀՀ ոստիկանության համապատասխան գերատեսչական մարմիններ մեղադրյալի սահմանային տեղաշարժը սահմանափակելու գործընթացին ուղղված գրություններն ուղարկել է ուշացումով՝ մոտ 18 օր անց, որի արդյունքում մեղադրյալ Լ.Ս-ն 31.10.2019թ. լքել է Հայաստանի Հանրապետությունը:

Արդյունքում՝ քննիչ Գ.Թ-ն թույլ է տվել ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 01.10.2015թ. N 91 հանձնարականի և ՀՀ կառավարության 22.06.2006թ. թիվ 884-Ն որոշման 5-րդ մասի պահանջների առերևույթ խախտում:

Առերևույթ կարգապահական խախտումներ թույլ տալու վերաբերյալ ՀԿԳ քննիչ Գ.Թ-ն Կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ հայտնեց, որ ընդունում է իր կողմից առերևույթ թույլ տրված խախտումը, նշեց որ 31.10.2019թ.՝ մեղադրյալ Լ.Ս-ին մեղադրանք առաջադրելուց հետո ժամանակին միջոցներ չի ձեռնարկել վերջինիս անձնագիրը վերցնելու ուղղությամբ, իսկ ՀՀ ոստիկանության համապատասխան գերատեսչական մարմիններ մեղադրյալի սահմանային տեղաշարժը և վերջինիս կողմից անձնագրային որևէ գործարք կատարելը սահմանափակելու գործընթացին ուղղված գրություններն ուղարկել է ուշացումով՝ մոտ 18 օր անց, որի արդյունքում մեղադրյալ Լ.Ս-ն 31.10.2019թ. լքել է Հայաստանի Հանրապետությունը:

Ուսումնասիրելով նյութերը՝ Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ ՀԿԳ քննիչ Գ.Թ-ն խախտել է ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 01.10.2015թ. N 91-Լ հանձնարականի և ՀՀ կառավարության 22.06.2006թ. թիվ 884-Ն որոշման 5-րդ մասի սահմանված պահանջները:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ քննիչ ՀԿԳ Գ.Թ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի

1-ին մասի 1-ին կետով և 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով, 48-50-րդ կետերով,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Թիվ 90299317 քրեական գործով մեղադրյալ Լ.Ս-ին մեղադրանք առաջադրելուց հետո ՀՀ ոստիկանության համապատասխան գերատեսչական մարմիններ մեղադրյալի սահմանային տեղաշարժը սահմանափակելու գործընթացին ուղղված գրություններն ուշացումով ուղարկելու մասով վարույթն իրականացրած ՀԿԳ քննիչ Գ.Թ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրան մեղավորությունը:

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*
Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ Հ.Գ-ի վերաբերյալ

11 մարտի 2020թ. ԿՀՈ 11
ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կարգապահական հանձնաժողովը (այսուհետ՝ Կարգապահական հանձնաժողով), ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ, երրորդ դասի խորհրդական Հ.Գ-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

ՀՀ դատախազության Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազության ավագ դատախազ Ա.Վ-ի միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով հարուցված և ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ Հ.Գ-ի վարույթում քննված թիվ 14131619 քրեական գործով նախաքննության ընթացքում, վերջինս իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել է ՀՀ քրեա-

կան դատավարության օրենսգրքով սահմանված նորմերի պահանջները:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է Հ.Գ-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումն ըստ ստորև նշված դրվագի.

Թիվ 14131619 քրեական գործով քննիչ Հ.Գ-ի 2019թ. դեկտեմբերի 17-ին կայացրած՝ Լ.Ա-ի և Հ.Ա-ի հաշվառման և փաստացի բնակության վայրերում խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու միջնորդություն հարուցելու մասին որոշումների, 2019թ. դեկտեմբերի 17-ին կայացրած՝ Լ. Ա-ի և Հ.Ա-ի կողմից օգտագործվող բջջային հեռախոսահամարների մուտքային և ելքային զանգերի վերծանումները և հեռախոսահամարների բաժանորդների տվյալները ստանալու թույլտվություն ստանալու միջնորդություն հարուցելու մասին որոշման, 2019թ. դեկտեմբերի 20-ին կայացրած՝ Լ.Ա-ի հաշվառման և փաստացի բնակության վայրում խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու միջնորդություն հարուցելու մասին որոշման, ինչպես նաև միջնորդությունները բավարարելու դատարանի որոշումների պատճեններն ընդհանրապես չի ուղարկել քրեական գործի մինչդատական վարույթի նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազին, ինչով զրկել է վերջինիս հիշյալ որոշումներին ծանոթանալու, դրանք հետ վերցնելու կամ բողոքարկելու իր իրավունքը իրացնելուց:

Արդյունքում՝ քննիչը առերևույթ կոպիտ կերպով խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 282-րդ հոդվածի 3-րդ մասի և 283-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջները:

Հիշյալ առերևույթ կարգապահական խախտման վերաբերյալ Հ.Գ-ն Կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ հայտնեց, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 282-րդ և 283-րդ հոդվածներում կատարված փոփոխություններին ծանոթացել է ՀՀ ՔԿ ԵՔՔՎ Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնում 19.12.2019 թվականին հրավիրված օպերատիվ խորհրդակցության ժամանակ, իսկ մինչ այդ այդ փոփոխությունների մասին տեղյակ չի եղել: Ինչ վերաբերում է դրանից հետո՝ 2019թ.

դեկտեմբերի 20-ին կայացրած՝ խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու միջնորդություն հարուցելու մասին որոշման, ինչպես նաև այդ կապակցությամբ դատարանի միջնորդությունը դատախազին չուղարկելուն, հայտել է, որ դա արդյունք է նշված ժամանակ իր աշխատանքային ծանրաբեռնվածության:

ՈՒսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում վերոգրյալ հոդվածներում կատարված փոփոխություններն ուժի մեջ են մտել 2019թ. դեկտեմբերի 9-ին, իսկ քննիչի կողմից միջնորդությունները ներկայացվել են 2019թ. դեկտեմբերի 17-ին, որոնք բավարարվել են դատարանի կողմից, սակայն քննիչն այդ փոփոխությունների մասին փաստացի իրազեկվել է միայն 2019թ. դեկտեմբերի 19-ին՝ քննչական բաժնում հրավիրված օպերատիվ խորհրդակցության ընթացքում: Բացի այդ, «Առլիս» տեղեկատվական համակարգում ևս հաճախ ժամանակին զետեղված չեն լինում արդեն իսկ ուժի մեջ մտած օրենսդրական փոփոխությունները և քննիչը ֆիզիկապես հնարավորություն չի ունենում ժամանակին իրազեկվելու փոփոխությունների մասին: Վերը նկարագրվածի պայմաններում թեև առկա է կարգապահական խախտման փաստը, որը կոպիտ համարվել չի կարող, սակայն բացակայում է քննիչի մեղավորությունը:

Ինչ վերաբերում է 2019թ. դեկտեմբերի 20-ին կայացրած՝ խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու միջնորդություն հարուցելու մասին որոշման, ինչպես նաև այդ կապակցությամբ դատարանի միջնորդությունը դատախազին չուղարկելու դրվագին, ապա Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը, նկատի ունենալով, որ հրավիրված օպերատիվ խորհրդակցությունից և փոփոխությունների մասին պատշաճ իրազեկվելուց հետո թույլ է տվել նույնաբնույթ առերևույթ կարգապահական խախտումը՝ կոպիտ կերպով խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 282-րդ հոդվածի 3-րդ մասի և 283-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 2-րդ ենթակետով և 48-50-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Թիվ 14131619 քրեական գործով 2019թ. դեկտեմբերի 17-ին կայացրած՝ խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու միջնորդություն հարուցելու մասին որոշումների, բջջային հեռախոսահամարների մուտքային և ելքային զանգերի վերծանումները և հեռախոսահամարների բաժանորդների տվյալները ստանալու թույլտվություն ստանալու միջնորդություն հարուցելու մասին որոշման, ինչպես նաև միջնորդությունները բավարարելու մասին դատարանի որոշումների պատճենները քրեական գործի մինչդատական վարույթի նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազին չուղարկելու դրվագով քննիչի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը, սակայն բացակայում է մեղավորությունը:

2. 2019թ. դեկտեմբերի 20-ին կայացրած՝ բնակության վայրում խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու միջնորդություն հարուցելու մասին որոշման, ինչպես նաև միջնորդությունը բավարարելու մասին դատարանի որոշման պատճենը քրեական գործի մինչդատական վարույթի նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազին չուղարկելու դրվագով քննիչի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և մեղավորությունը:

3. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*
Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության տասներորդ կայազորային քննչական բաժնի քննիչ Վ. Մ-ի վերաբերյալ

11 մարտի 2020թ. ԿՀՈ 12
ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կարգապահական հանձնաժողովը (այսուհետ՝ Կարգապահական հանձնաժողով), ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության տասներորդ կայազորային քննչական բաժնի քննիչ, երրորդ դասի խորհրդական Վ.Մ-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

ՀՀ դատախազության Շիրակի կայազորի զինվորական դատախազի տեղակալ Հ.Ա-ի միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության տասներորդ կայազորային քննչական բաժնի քննիչ Վ.Մ-ի վարույթում ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցված և քննված թիվ 90360919 քրեական գործով նախաքննության ընթացքում, վերջինս իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է Վ.Մ-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումն ըստ ստորև նշված դրվագների.

Թիվ 90360919 քրեական գործով քննիչ Վ.Մ-ն թիվ 90360919 քրեական գործի նյութերին 20.12.2019թ. չի կցել և գործում չի պահել՝ քրեական գործով կասեցված վարույթը վերսկսելու մասին 20.12.2019թ. որոշումը, խափանման միջոցը փոփոխելու մասին 20.12.2019թ. միջնորդությունը, խափանման միջոցը փոփոխելու մասին 20.12.2019թ. որոշումը և ստորագրություն չհեռանալու մասին 20.12.2019թ. արձանագրությունը, Հ.Կ-ին հայտնաբերելու վերաբերյալ կազմված փաստաթղթերը, մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը մեղադրյալին հանձնելու, մեղադրանք առաջադրելու և մեղադրյալի իրավունքները բացատրելու մասին 20.12.2019թ. արձանագրությունը, մեղադրյալին նրա պաշտպանության և պաշտպան ունենալու իրավունքը բացատրելու մասին 20.12.2019թ. արձանագրությունը, մեղադրյալ Հ.Կ-ի 20.12.2019թ. հարցաքննության արձանագրությունը:

Արդյունքում՝ քննիչը կոպիտ կերպով խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջները:

Վ.Մ-ն գրավոր դիմում է ներկայացրել Կարգապահական հանձնաժողովին, որով հայտնել է, որ ծանոթացել է նախնական ուսումնասիրության նյութերին և եզրակացությանը, ընդունում է իր կողմից վերոհիշյալ դատավարական նորմերի պահանջները խախտելու հանգամանքը և խնդրել է այդ կապակցությամբ Կարգապահական հանձնաժողովի նիստը՝ հնարավորության դեպքում, անցկացնել իր բացակայությամբ:

ՈՒսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության տասներորդ կայազորային քննչական բաժնի քննիչ Վ.Մ-ն իր լիազորություններն իրականացնելիս կոպիտ կերպով խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջները, այն է՝ թիվ 90360919 քրեական գործի նյութերին 20.12.2019թ. չի կցել և գործում չի պահել՝ քրեական գործով կասեցված վարույթը վերսկսելու մասին 20.12.2019թ. որոշու-

մը, խափանման միջոցը փոփոխելու մասին 20.12.2019թ. միջնորդությունը, խափանման միջոցը փոփոխելու մասին 20.12.2019թ. որոշումը և ստորագրություն չհեռանալու մասին 20.12.2019թ. արձանագրությունը, Հ.Կ-ին հայտնաբերելու վերաբերյալ կազմված փաստաթղթերը, մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը մեղադրյալին հանձնելու, մեղադրանք առաջադրելու և մեղադրյալի իրավունքները բացատրելու մասին 20.12.2019թ. արձանագրությունը, մեղադրյալին նրա պաշտպանության և պաշտպան ունենալու իրավունքը բացատրելու մասին 20.12.2019թ. արձանագրությունը, մեղադրյալ Հ.Կ-ի 20.12.2019թ. հարցաքննության արձանագրությունը:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ հիշյալ դրվագներով Վ.Մ-ի արարքում առերևույթ առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 2-րդ ենթակետով և 48-50-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջները խախտելու դրվագներով Վ.Մ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և մեղավորությունը:

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*
Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության Ստեփանավանի քննչական բաժնի պետ Դ.Ղ-ի և նույն վարչության ավագ քննիչ Է.Վ-ի (գործուղված Ստեփանավանի քննչական բաժին) վերաբերյալ

14 մայիսի 2020թ. ԿՀՈ 13
ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կարգապահական հանձնաժողովը (այսուհետ՝ Կարգապահական հանձնաժողովը), ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության Ստեփանավանի քննչական բաժնի պետ Դ.Ղ-ի (այսուհետ՝ նաև անմիջական վերադաս), նույն վարչության ավագ քննիչ Է.Վ-ի՝ գործուղված Ստեփանավանի քննչական բաժին (այսուհետ՝ նաև քննիչ), հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրությունների նյութերը, կազմված եզրակացությունները.

Պ Ա Ր Զ Ե Ց

Նախնական ուսումնասիրությունների առիթ են հանդիսացել քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալ, ՀԿԳ քննության գլխավոր վարչության պետ Ա.Մ-ի, ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչության պետ Հ.Հ-ի, ՀՀ գլխավոր դատախազի միջնորդությունները՝ քննիչ Է.Վ-ի և վերջինիս անմիջական վերադաս Դ.Ղ-ի կողմից իրենց լիազորություններն իրականացնելիս խախտել

են քրեադատավարական օրենքի և ներքին իրավական ակտերի վերաբերյալ:

ՀՀ քննչական կոմիտեի նախագահը քննիչ Է.Վ-ի և վերջինիս անմիջական վերադաս Դ.Ղ-ի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու համար Կարգապահական հանձնաժողովին միջնորդություններ է հարուցել օրենքի առերևույթ խախտումներ թույլ տալու վերաբերյալ, ըստ ստորև նշված դրվագների.

1. ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության Ստեփանավանի քննչական բաժնի պետ Դ.Ղ-ն, հանդիսանալով նշված՝ հանրային հետաքրքրություն ներկայացնող, հնչեղություն ստացած, բարդ և մեծածավալ թիվ 53155018, 53100119 և 53100719 քրեական գործերով վարույթն իրականացրած քննիչի անմիջական վերադաս, «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 10.06.2015թ. թիվ 55Լ հրամանով հաստատված հավելվածի 14-րդ կետի 2-3-րդ ենթակետերի և «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության ծառայողների միջև աշխատանքի բաժանում կատարելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալի 31.08.2018թ. թիվ 138-Ա հրամանի 2-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ չի վերահսկել իր անմիջական համակարգման ոլորտում գտնվող ծառայողի կողմից կատարված աշխատանքները, թույլ տալով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասի 2-3-րդ կետերի պահանջների խախտումներ՝ չի հետևել իրեն անմիջական ենթակա քննիչի վարույթում քննված քրեական գործերով, ակնհայտ փաստական հիմքերի առկայության պայմաններում՝ քննիչի կողմից համապատասխան քննչական գործողություններ կատարելուն և այդպիսիք կատարելու ցուցում չի տվել, որպիսի պայմաններում՝ հիշյալ քրեական գործերով 06.07.2018թ-ին Ստեփանավան քաղաքի Ս.Ն-շան 36 հասցեում կատարված խուզարկությամբ հայտնաբերված և առգրավված առարկաները (փաստաթղթերը), 19.07.2018թ-ին Ստեփանավան քաղաքի Մատրոսով փողոցի 30 հասցեում կատարված

խուզարկությամբ հայտնաբերված և առգրավված առարկաները, նույն օրը Ստեփանավան քաղաքի Միքայելյան փողոց 1-ին փակուղի 9-րդ հասցեում կատարված խուզարկությամբ հայտնաբերված և առգրավված թղթապանակը, որի մեջ առկա է եղել 6 ցուցակ, 5 անձնական գործեր, 2 տետր, 04.05.2018թ-ին «Հայփոստ» ՓԲԸ-ից առգրավված թիվ 1910 փոստային բաժանմունքի տեսաձայնագրող սարքը, 27.08.2018թ-ին ՀՀ Լոռու մարզպետարանից առգրավված սոցիալական աջակցության Ստեփանավանի գործակալության նախկին պետ Մ.Ղ-ի անձնական գործը, 07.09.2018թ-ին Ստեփանավանի ՍԱՏԳ-ից առգրավված Ա.Մ-ի, Ս.Ս-ի, Ս.Մ-ի, Է.Հ-ի, Ռ.-ի, Մ.Զ-ի անձնական գործերը, 22.10.2018թ-ին սոցիալական աջակցության Ստեփանավանի տարածքային գործակալությունից առգրավված Պ.Ա-ի անձնական գործը քննիչի կողմից չեն զննվել, պատշաճ դատավարական ընթացակարգի շրջանակներում չեն արձանագրվել դրանց քրեական գործերով ապացուցման առարկայի հետ առնչություն չունենալու հանգամանքները, քրեական գործին չեն կցվել դրանք իրավատերերին վերադարձնելու վերաբերյալ ստացականները կամ գրավոր այլ փաստաթղթեր, իսկ 22.05.2018թ-ին Գոհար Մատինյանից առգրավված Գյուլագարակ գյուղում գործող խանութի պարտքերի մասին տետրն իրավատիրոջը վերադարձնելու վերաբերյալ համապատասխան ստացականը կամ գրավոր կազմված այլ փաստաթուղթը չի կցվել քրեական գործի նյութերին: Արդյունքում՝ Ստեփանավանի քննչական բաժնի պետ Դ.Ղ-ն խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասի 2-3-րդ կետերի, «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 10.06.2015թ. թիվ 55Լ հրամանով հաստատված հավելվածի 14-րդ կետի 2-3-րդ ենթակետերի և «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության ծառայողների միջև աշխատանքի բաժանում կատարելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալի 31.08.2018թ. թիվ 138-Ա հրամանի 2-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները:

Հիշյալ դրվագով առերևույթ կարգապահական խախտման վերաբերյալ Դ.Ղ-ն Կարգապահական հանձնաժողովին ըստ էության տված բացատրությամբ չընդունեց իր մեղավորությունը՝ հավելելով, որ հիշյալ գործերով կատարված նախաքննության արդյունքներով դատավարության մասնակիցների կողմից վերականգնվել է պետությանը պատճառված վնասի մի մասը, նախկին քննիչ Է.Պ-ի քննարկել են մայր՝ թիվ 53155018 քրեական գործով հավաքված ապացույցները, մտածել է, որ հիշյալ փաստաթղթերն անջատված՝ թիվ 53100119 և 53100719 քրեական գործերում են գտնվել, քանի որ դրանց են վերաբերել և եղել են մեծ ծավալի փաստաթղթեր, իսկ թիվ 53100719 քրեական գործը հետագայում ուղարկվել է ՀՀ ՔԿ ՀԿԳ քննության վարչություն՝ նախաքննությունը շարունակելու համար, որով ներկայացրել է այն իրեղեն ապացույցները և առարկաները, որոնք պահպանվել են Ստեփանավանի քննչական բաժնում: Միաժամանակ, Դ.Ղ-ն հայտնեց, որ եթե Կարգապահական հանձնաժողովը կգտնի, որ առկա է օրենքի խախտում, ապա՝ միջնորդեց քննարկել հայտնաբերված կարգապահական խախտման օրվանից 12 ամիսն անցնելու հանգամանքը:

Ուսումնասիրելով նյութերը, լսելով Դ.Ղ-ին, Կարգապահական հանձնաժողովը, նախ՝ նկատեց, որ եթե հիշյալ փաստաթղթերն առգրավվել են, ուրեմն կարևոր նշանակություն ունեին, ապա՝ ինչու չեն զննվել, ու պարզեց, որ անմիջական վերադաս Դ.Ղ-ի կողմից թույլ են տրվել կարգապահական խախտումներ, իսկ հայտնաբերված կարգապահական խախտումները շարունակական բնույթի են, քանի որ դրանք թույլ են տրվել թիվ 53100119 և 53100719 քրեական գործերով, ուստի, 12 ամիսն անցնելու հանգամանքով պայմանավորված վարույթը մերժելու հիմքեր առկա չեն: Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ Դ.Ղ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

2. Քննիչ Է.Վ-ն թիվ 53154217 քրեական գործը 30.12.2019թ-ին վարույթ ընդունելուց հետո առ 18.02.2020թ-ը՝ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններն առգրավելու համար թույլտվություն ստա-

նալու քննիչ Է.Պ-ի միջնորդությունը դատարանի կողմից բավարարելու մասին որոշման հիման վրա 09.01.2018թ-ին ՀՀ կենտրոնական բանկից ստացված՝ Ն.Մ-ի վերաբերյալ պահանջված բանկային փաստաթղթերը բանկերից հավաքագրված և առգրավման պատրաստ լինելու վերաբերյալ գրության առկայության պայմաններում, քննչական և այլ դատավարական գործողություն կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող հիմքերի առկայության պայմաններում, առանց իրավաչափ նպատակի, տևական ժամանակ դրսևորել է անգործություն, այն է՝ 49 օր հիշյալ փաստաթղթերը չի առգրավվել: Արդյունքում՝ քննիչ Է.Վ-ն չի պահպանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

Հիշյալ դրվագով առերևույթ կարգապահական խախտման վերաբերյալ քննիչ Է.Վ-ն Կարգապահական հանձնաժողովին ըստ էության տված բացատրությամբ հայտնեց, որ 2020թ. հունվար ամսին, կոնկրետ օրը չհիշեց, եկել է Երևան՝ հիշյալ առգրավումը կատարելու համար, սակայն, աշխատանքային ժամի ավարտից հետո է հասել, ուստի, չի կարողացել հիշյալ գործողությունը կատարել: Պայմանավորվածության համաձայն՝ մեկ անգամ էլ 2020թ. փետրվար ամսին է պլանավորել և շարժվել դեպի Երևան՝ հիշյալ առգրավումը կատարելու համար, սակայն, ճանապարհի կեսին ահազանգ է ստացել տեղի ունեցած դեպքի վերաբերյալ, որից հետո հետ է վերադարձել և զբաղվել այդ դեպքով, ուստի, չի կարողացել հիշյալ ժամանակահատվածում նշված առգրավումը կատարել:

Ուսումնասիրելով նյութերը, լսելով Է.Վ-ին, Կարգապահական հանձնաժողովը, նախ՝ նկատեց, որ կարծիք է ձևավորվում, որ անձի վերաբերյալ բանկային գաղտնիք պարունակող տեղեկություններ են պահանջվել, սակայն, դա չի կատարվել և անձի իրավունքն է խախտվել, ու պարզեց, որ քննիչ Է.Վ-ի կողմից թույլ են տրվել կարգապահական խախտումներ: Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ Է.Վ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

3. Քննիչներ Է.Պ-ի և Է.Վ-ի անմիջական վերադաս Դ.Ղ-ն , ծանոթ լինելով թիվ 53154217 քրեական գործի նյութերին և ՀՀ քննչական կոմիտեի նախագահի հանձնարարությամբ՝ 2019թ. դեկտեմբերի 23-ից 29-ը, հատուկ հանձնարարությունների, կազմակերպական-վերլուծական և քրեագիտական գլխավոր, տարածքային քննչական վարչությունների գործունեության վերահսկողության գլխավոր և ներքին անվտանգության վարչությունների ծառայողների համատեղ, Լոռու մարզային քննչական վարչության Ստեփանավանի քննչական բաժնում կատարված ուսումնասիրությունների ընթացքում վերոհիշյալ քրեական գործով հայտնաբերված խախտմանը, չի հետևել իրեն անմիջականորեն ենթակա քննիչներ՝ Է.Պ-ի և Է.Վ-ի վարույթում քննված վերոհիշյալ քրեական գործով քննչական գործողություն կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող հիմքերի առկայության պայմաններում նրանց կողմից համապատասխան քննչական գործողությունը ժամանակին կատարելուն, այն է՝ քաջատեղյակ լինելով դատարանի թույլտվության հիման վրա գործով որպես մեղադրյալ ներգրավված և հետախուզման մեջ գտնվող Ն.Մ-ի վերաբերյալ ՀՀ կենտրոնական բանկից պահանջված բանկային փաստաթղթերի առգրավման անհրաժեշտության վերաբերյալ ՀՀ կենտրոնական բանկին հասցեագրված քննիչի գրության մասին, անհրաժեշտ հետևողականություն չի ցուցաբերել քննիչ Է.Պ-ի, այնուհետև՝ քննիչ Է.Վ-ի կողմից անհրաժեշտ փաստաթղթերի առգրավումը կատարելու հարցում: Արդյունքում՝ տևական ժամանակ՝ ավելի քան 2 տարի, պահանջված և հավաքագրված վերոհիշյալ փաստաթղթերը չեն առգրավվել, այսինքն՝ անմիջական վերադաս Դ.Ղ-ն պատշաճ չի իրականացրել քրեադատավարական օրենքով նախատեսված իր լիազորությունները, պատշաճ վերահսկողություն չի իրականացրել իր անմիջական համակարգման ոլորտում գտնվող ծառայողների կատարած աշխատանքների նկատմամբ՝ խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի

10.06.2015թ. թիվ 55Լ հրամանով հաստատված հավելվածի 14-րդ կետի 2-3-րդ ենթակետերի և «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության ծառայողների միջև աշխատանքի բաժանում կատարելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալի 31.08.2018թ. թիվ 138-Ա հրամանի 2-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները:

Հիշյալ դրվագով առերևույթ կարգապահական խախտման վերաբերյալ Դ.Ղ-ն Կարգապահական հանձնաժողովին ըստ էության տված բացատրությամբ հայտնեց, որ նախկին քննիչ Է.Պ-ի վարույթում հիշյալ քրեական գործը եղել է կասեցված վիճակում, իսկ ՀՀ կենտրոնական բանկի գրությունը հասցեագրված է եղել քննիչին, ուստի, ինքը տեղյակ չի եղել այդ մասին: Իսկ քննիչ Է.Վ-ի մասով ըստ էության տվեց վերջինիս բացատրությանը նույնաբովանդակ բացատրություններ:

Ուսումնասիրելով նյութերը, լսելով Դ.Ղ-ին, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ անմիջական վերադաս Դ.Ղ-ի կողմից թույլ են տրվել կարգապահական խախտումներ: Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ Դ.Ղ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

4. Քննիչ Է.Վ-ն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով, 311-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով, 311-րդ հոդվածի 1-ին մասով, 312-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 312-րդ հոդվածի 2-րդ մասով, 312-րդ հոդվածի 1-ին մասով, 313-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 313-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 313-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով հարուցված, 14.10.2019-31.12.2019թ. վարույթում քննված թիվ 53157019 քրեական գործով, տևական ժամանակ, քննչական և դատավարական այլ գործողություններ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում առանձին գործողություններ չի կատարել, մասնավորապես՝ Լ.Ս-ի կողմից լրացուցիչ բացատրությամբ հայտնած տեղեկությունները՝ իր բացատրություն տալուց հետո Ս.Թ-ի կողմից իրեն զանգահարելու և հանդի-

պելու, դրանք ստուգելու նպատակով սահմանված կարգով չի ստացել բացատրությամբ նշված, ինչպես նաև Լ.Ս-ի և Ս.Թ-ի անվամբ հաշվառված և /կամ/ նրանց կողմից շահագործվող այլ բջջային հեռախոսահամարների, այդ թվում՝ նրանց բնակարանների հեռախոսահամարների, վերծանումները, չի պարզել վերջիններիս միջև քննարկվող ժամանակահատվածում, հատկապես՝ 04.09.2019 թվականին տեղի ունեցած հեռախոսազանգերի առկայությունը, դրանց քանակը, տևողությունը, հեռախոսազանգերը սպասարկած ալեհավաք կայանների տեղակայման հասցեները, չի զննել դրանք, Ս.Թ-ին պատկանող հեռախոսահամարների հեռախոսազանգերի զննությամբ չի պարզել նաև վերջինիս և Ա.Ա-ի, Լ.Մ-ի ու Ա.Բ-ի միջև տեղի ունեցած հեռախոսազանգերի առկայությունը, չի պարզել նաև, թե ինչ հանգամանքներում է Ս.Թ-ն տեղեկացել, որ Լ. Ս-ն ոստիկանությունում տվել է հանցագործության մասին հաղորդում, կաշառք տալու ձևով դրսևորված կոռուպցիոն բնույթի հանցագործության ենթադրյալ հատկանիշների առկայության պայմաններում՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցառումները ձեռնարկելու պարտավորություն կրելով՝ սահմանափակվել է միայն հաղորդմամբ նշված դեպքերի բացահայտմանն ուղղված քննչական և դատավարական գործողությունների կատարմամբ՝ անտեսելով հիշյալ դպրոցում կոռուպցիոն համասեռ չարաշահումների առկայության հնարավոր հանգամանքը, մասնավորապես՝ դպրոցի աշխատակիցների վերաբերյալ տվյալները ստանալուց հետո չի ստացել նաև նրանց կողմից աշխատանքի հաճախելու վերաբերյալ ցուցակները, ինչպես նաև՝ ՍԷԿՏ համակարգում առկա տեղեկությունները՝ դրանք համադրության մեջ զննության ենթարկելու միջոցով պարզելու որևէ աշխատակցի կողմից փաստացի աշխատանքի չներկայանալու, սակայն վարձատրվելու հնարավոր հանգամանքի առկայությունը, չի կատարել դրանից բխող անհրաժեշտ քննչական և դատավարական այլ գործողություններ, ինչը ողջամտորեն կարող էր հանգեցնել ապացույցների կորստի և անհարկի ձգձգվել են նա-

խաքննության ժամկետները, որպիսի պայմաններում՝ քննիչ Է.Վ-ն խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ և 55-րդ հոդվածների 3-րդ մասերի պահանջները:

Հիշյալ դրվագով առերևույթ կարգապահական խախտման վերաբերյալ քննիչ Է.Վ-ն Կարգապահական հանձնաժողովին ըստ էության տված բացատրությամբ չընդունեց իր մեղավորությունը:

Ուսումնասիրելով նյութերը, լսելով Է.Վ-ին, Կարգապահական հանձնաժողովը, պարզեց, որ քննիչ Է.Վ-ի կողմից թույլ են տրվել կարգապահական խախտումներ: Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ Է.Վ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

5. ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության Ստեփանավանի քննչական բաժնի նախկին քննիչ Է.Պ-ի և քննիչ Է.Վ-ի անմիջական վերադաս Դ.Ղ-ն, ծանոթ լինելով թիվ 53157019 քրեական գործի նյութերին, «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 10.06.2015թ. թիվ 55Լ հրամանով հաստատված հավելվածի 14-րդ կետի 2-3-րդ ենթակետերի, «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության ծառայողների միջև աշխատանքի բաժանում կատարելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալի 31.08.2018թ. թիվ 138-Ա հրամանի 2-րդ կետի 5-րդ ենթակետի և «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության ծառայողների միջև աշխատանքի բաժանում կատարելու մասին» «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի տեղակալի 2018 թվականի օգոստոսի 31-ի թիվ 137-Ա հրամանում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալի 29.10.2019թ. թիվ 143-Ա հրամանի 1-ին կետի 5-րդ ենթակետի պահանջների համաձայն՝ չի վերահսկել իր անմիջական համակարգման ոլորտում գտնվող ծառայողներ՝ Է.Պ-ի և Է.Վ-ի կողմից կատարված աշխատանքները, թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի

193-րդ հոդվածի 1-ին մասի 2-3-րդ կետերի պահանջների խախտումներ՝ չի հետևել իրեն անմիջական ենթակա քննիչների վարույթում քննված թիվ 53157019 քրեական գործով քննչական և դատավարական այլ գործողություններ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում, քննիչների կողմից համապատասխան քննչական գործողություններ կատարելուն և այդպիսիք կատարելու ցուցումներ չի տվել, որպիսի պայմաններում՝ Լ.Ս-ի կողմից լրացուցիչ բացատրությամբ հայտնած տեղեկությունները՝ իր բացատրություն տալուց հետո Ս.Թ-ի կողմից իրեն զանգահարելու և հանդիպելու, դրանք ստուգելու նպատակով սահմանված կարգով չեն ստացվել բացատրությամբ նշված, ինչպես նաև Լ.Ս-ի և Ս.Թ-ի անվամբ հաշվառված և /կամ/ նրանց կողմից շահագործվող այլ բջջային հեռախոսահամարների, այդ թվում՝ նրանց բնակարանների հեռախոսահամարների, վերծանումները, չեն պարզվել վերջիններիս միջև քննարկվող ժամանակահատվածում, հատկապես՝ 04.09.2019 թվականին տեղի ունեցած հեռախոսազանգերի առկայությունը, դրանց քանակը, տևողությունը, հեռախոսազանգերը սպասարկած ալեհավաք կայանների տեղակայման հասցեները, չեն զննվել դրանք, Ս.Թ-ին պատկանող հեռախոսահամարների հեռախոսազանգերի զննությամբ չի պարզվել նաև վերջինիս և Ա.Ա-ի, Լ.Մ-ի ու Ա.Բ-ի միջև տեղի ունեցած հեռախոսազանգերի առկայությունը, չի պարզվել նաև, թե ինչ հանգամանքներում է Ս.Թ-ն տեղեկացել, որ Լ.Ս-ն ոստիկանությունում տվել է հանցագործության մասին հաղորդում, կաշառք տալու ձևով դրսևորված կոռուպցիոն բնույթի հանցագործության ենթադրյալ հատկանիշների առկայության պայմաններում՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցառումները ձեռնարկելու պարտավորություն կրելով՝ քննիչները սահմանափակվել են միայն հաղորդմամբ նշված դեպքերի բացահայտմանն ուղղված քննչական և դատավարական գործողությունների կատարմամբ՝ անտեսելով հիշյալ դպրոցում կոռուպցիոն համասեռ չարաշահումների առ-

կայության հնարավոր հանգամանքը, մասնավորապես՝ դպրոցի աշխատակիցների վերաբերյալ տվյալները ստանալուց հետո չեն ստացվել նաև նրանց կողմից աշխատանքի հաճախելու վերաբերյալ ցուցակները, ինչպես նաև՝ ՍԷԿՏ համակարգում առկա տեղեկությունները՝ դրանք համադրության մեջ զննության ենթարկելու միջոցով պարզելու որևէ աշխատակցի կողմից փաստացի աշխատանքի չներկայանալու, սակայն վարձատրվելու հնարավոր հանգամանքի առկայությունը, չեն կատարվել դրանից բխող անհրաժեշտ քննչական և դատավարական այլ գործողություններ, ինչը ողջամտորեն կարող էր հանգեցնել ապացույցների կորստի և անհարկի ձգձգվել են նախաքննության ժամկետները:

Հիշյալ դրվագով առերևույթ կարգապահական խախտման վերաբերյալ Դ.Ղ-ն Կարգապահական հանձնաժողովին ըստ էության տված բացատրությամբ չընդունեց իր մեղավորությունը՝ պնդելով ՀՀ ՔԿ ՆԱՎ վարչությունում տված բացատրությամբ նշված հանգամանքները, և հավելելով որ քննիչների կողմից կատարվել է պատշաճ քննություն, իսկ հիշատակված գործողությունները կատարելու անհրաժեշտությունը և հիմքերը չեն եղել:

Ուսումնասիրելով նյութերը, լսելով Դ.Ղ-ին, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ անմիջական վերադաս Դ.Ղ-ի կողմից թույլ են տրվել կարգապահական խախտումներ: Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ Դ.Ղ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

6. Քննիչ Է.Վ-ն 2020թ. ապրիլի 28-ին իր նկատմամբ իրականացվող նախնական ուսումնասիրության շրջանակներում բացատրություն տալու նպատակով հրավիրվել է ՀՀ ՔԿ ներքին անվտանգության վարչություն և ներկայացել է սև գույնի ջեմբրով, /առանց փողկապ/ այսինքն՝ աշխատավայրից դուրս ծառայողական պարտականությունները կատարելիս չի պահպանել ՀՀ քննչական կոմիտեի նախագահի՝ «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ներքին կարգապահական կանոնները հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 20.08.2018թ. թիվ 114-Լ հրամանով

հաստատված հավելվածի 3-րդ գլխի 27-րդ կետի 9-րդ ենթակետի և 16.04.2020թ. թիվ 71-Լ հանձնարարականի 1-ին կետի 2-րդ ենթակետի պահանջները:

Հիշյալ դրվագով առերևույթ կարգապահական խախտման վերաբերյալ քննիչ Է.Վ-ն Կարգապահական հանձնաժողովին պատճառաբանություններ չներկայացրեց:

Ուսումնասիրելով նյութերը, լսելով Է.Վ-ին, Կարգապահական հանձնաժողովը, պարզեց, որ թեև քննիչ Է.Վ-ի կողմից թույլ է տրվել կարգապահական խախտում, սակայն, դա հետևանքներ չի առաջացրել: Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ Է.Վ-ի արարքում բացակայում է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

14.03.2020թ.՝ ՀՀ քննչական կոմիտեի նախագահի միջնորդությունը՝ քննիչ Է.Պ-ի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ, քննելիս Կարգապահական հանձնաժողովը պարզել է, որ ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 04.03.2020թ. թիվ 179-Ա հրամանով Է.Պ-ն իր գրավոր դիմումի հիման վրա ազատվել է զբաղեցրած պաշտոնից, ուստի, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ.՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին որոշմամբ հաստատված հավելվածի 34-35-րդ կետերով՝ Կարգապահական հանձնաժողովը որոշել է մերժել նախկին քննիչ Է.Պ-ի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ միջնորդությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով, 48-50-րդ կետերով,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Թիվ 53155018, 53100119 և 53100719 քրեական գործերով իրեն անմիջականորեն ենթակա քննիչի կողմից, ակնհայտ փաստական հիմքերի առկայության պայմաններում՝ համապատասխան քննչական գործողություններ կատարելուն չհետևելու և այդպիսիք կատարելու ցուցում չտալու դրվագով ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության Ստեփանավանի քննչական բաժնի պետ Դ.Ղ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

2. Թիվ 53154217 քրեական գործով իրեն անմիջականորեն ենթակա քննիչների կողմից, ակնհայտ փաստական հիմքերի առկայության պայմաններում՝ համապատասխան քննչական գործողություններ կատարելուն չհետևելու դրվագով ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության Ստեփանավանի քննչական բաժնի պետ Դ.Ղ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

3. Թիվ 53157019 քրեական գործով իրեն անմիջականորեն ենթակա քննիչների կողմից, ակնհայտ փաստական հիմքերի առկայության պայմաններում՝ համապատասխան քննչական գործողություններ կատարելուն չհետևելու և այդպիսիք կատարելու ցուցում չտալու դրվագներով ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության Ստեփանավանի քննչական բաժնի պետ Դ.Ղա-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

4. Թիվ 53154217 քրեական գործով քննչական և այլ դատավարական գործողություն կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում, առանց իրավաչափ նպատակի, տևական ժամանակ անգործություն դրսևորելու՝ 49 օր պահանջված փաստաթղթերը չառգրավվելու և թիվ 53157019 քրեական գործով՝ տևական ժամանակ, քննչական և դատավարական այլ գործողություններ կատարելու անհրաժեշտու-

թյունը պայմանավորող փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում առանձին գործողություններ չկատարելու դրվագներով ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության ավագ քննիչ Է.Վ-ի՝ գործուղված Ստեփանավանի քննչական բաժին, արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

5. 2020թ. ապրիլի 28-ին՝ աշխատավայրից դուրս ծառայողական պարտականությունները կատարելիս ՀՀ քննչական կոմիտեի նախագահի՝ «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ներքին կարգապահական կանոնները հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 20.08.2018թ. թիվ 114-Լ հրամանով հաստատված հավելվածի 3-րդ գլխի 27-րդ կետի 9-րդ ենթակետի և 16.04.2020թ. թիվ 71-Լ հանձնարարականի 1-ին կետի 2-րդ ենթակետի պահանջների չպահպանելու և խախտումներ թույլ տալու դրվագով ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության ավագ քննիչ Է.Վ.ի՝ գործուղված Ստեփանավանի քննչական բաժին, արարքում բացակայում է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

6. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*
Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության կիբեռհանցագործությունների և բարձր տեխնոլոգիաների ոլորտում կատարված հանցագործությունների քննության վարչության պետի տեղակալ (հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ) Վ. Ս-ի վերաբերյալ

14 մայիսի 2020թ. ԿՀՈ 14
ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կարգապահական հանձնաժողովը (այսուհետ՝ Կարգապահական հանձնաժողովը), ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության կիբեռհանցագործությունների և բարձր տեխնոլոգիաների ոլորտում կատարված հանցագործությունների քննության վարչության պետի տեղակալ (հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ) Վ.Ս-ի (այսուհետ՝ նաև քննիչ) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Նախնական ուսումնասիրության առիթ է հանդիսացել ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալ, ՀԿԳ քննության գլխավոր վարչության պետ Ա.Մ-ի միջնորդությունը՝ ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության կիբեռհանցագործության և բարձր տեխնոլոգիաների քննության վարչության պետի տեղակալ Վ.Ս-ի վարույթում քննված թիվ 14825514 քրեական գործով վերջինիս

կողմից իր լիազորություններն իրականացնելիս <<Փաստաբանության մասին>> ՀՀ օրենքի խախտումներ թույլ տալու վերաբերյալ:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է Վ.Ս-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագի.

Վարույթում քննվող թիվ 14825514 քրեական գործով փաստաբան Ա.Դ-ի հարցմանը պատասխանել է օրենքով սահմանված ժամկետից ուշ՝ շուրջ 2 ամիս անց:

Արդյունքում՝ քննիչ Վ.Ս-ն թույլ է տվել «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջների առերևույթ խախտում, այն է տասնօրյա ժամկետում փաստաբան Ա.Դ-ին չի տրամադրել պահանջվող տեղեկությունները:

Առերևույթ կարգապահական խախտումներ թույլ տալու վերաբերյալ Վ.Ս-ն Կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ հայտնեց, որ ընդունում է իր կողմից առերևույթ թույլ տրված խախտումը, որի վերաբերյալ պնդեց նախնական ուսումնասիրության ընթացքում տված բացատրությունում նշած հանգամանքները:

Ուսումնասիրելով նյութերը՝ Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ Վ.Ս-ն խախտել է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ կետի սահմանված պահանջները:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ քննիչ Վ.Ս-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով, 48-50-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Թիվ 14825514 քրեական գործով փաստաբանի հարցմանը օրենքով սահմանված տասնօրյա ժամկետում չպատասխանելու մասով վարույթն իրականացրած քննիչ Վ.Ս-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրան մեղավորությունը:

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*

Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Ս.Խ-ի վերաբերյալ

14 մայիսի 2020թ. ԿՀՈ 15
ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կարգապահական հանձնաժողովը (այսուհետ՝ Կարգապահական հանձնաժողով), ՀՀ քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ, երկրորդ դասի խորհրդական Ս.Խ-ի (այսուհետ՝ նաև քննիչ) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

ՀՀ քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչության պետ Կ.Թ-ի 17.02.2020թ. զեկուցագրի կապակցությամբ ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալ Ա.Պ-ի 20.02.2020թ. միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ ՀՀ քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Ս. Խ-ն պատշաճ չի պահպանել իրեն հատկացված 434 համարի ծառայողական վկայականը, ինչի արդյունքում անհայտ հանգամանքներում կորցրել է այն, խախտելով «ՀՀ քննչական կոմիտեի ծառայողի անձնական կնիքների, ծառայողական վկայականի նկարագրերը, դրանց հատկացնելու կարգը, անձնական կնիքների ուրվագծերը, ծառայողական վկայականի ներդիրի ձևը հաստատելու կարգ»-ի ՀՀ քննչական կոմիտեի նախագահի

03.07.2015թ. թիվ 61-Ա հրամանով հաստատված՝ 6-րդ կետի պահանջը:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է Ս.Խ-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումն ըստ ստորև նշված դրվագի.

ՀՀ քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Ս.Խ-ն պատշաճ չի պահպանել իրեն հատկացված 434 համարի ծառայողական վկայականը, ինչի արդյունքում անհայտ հանգամանքներում կորցրել է այն, խախտելով «ՀՀ քննչական կոմիտեի ծառայողի անձնական կնիքների, ծառայողական վկայականի նկարագրերը, դրանք հատկացնելու կարգը, անձնական կնիքների ուրվագծերը, ծառայողական վկայականի ներդիրի ձևը հաստատելու կարգ»-ի ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 03.07.2015թ. թիվ 61-Ա հրամանով հաստատված՝ 6-րդ կետի պահանջը, այն է՝ կոմիտեի ծառայողը պարտավոր է պահպանել իրեն ամրագրված վկայականը և կնիքները, պաշտպանել դրանք վնասումից և ոչնչացումից:

Հիշյալ առերևույթ կարգապահական խախտման վերաբերյալ Ս.Խ-ն գրավոր դիմում է ներկայացրել Կարգապահական հանձնաժողովին, որով հայտնել է, որ ծանոթացել է նախնական ուսումնասիրության նյութերին և եզրակացությանը, ընդունում է իր մեղավորությունը ծառայողական վկայականը կորցնելու հարցում, ինչն իր անուշադրության արդյունք է և խնդրել է այդ կապակցությամբ Կարգապահական հանձնաժողովի նիստը՝ հնարավորության դեպքում, անցկացնել իր բացակայությամբ:

ՈՒսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, ՀՀ քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Ս.Խ-ն խախտել է «ՀՀ քննչական կոմիտեի ծառայողի անձնական կնիքների, ծառայողական վկայականի նկարագրերը, դրանց հատկացնելու կարգը, անձնական կնիքների ուրվագծերը, ծառայողական վկայականի ներդիրի ձևը հաստատելու կարգ»-ի ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 03.07.2015թ. թիվ 61-Ա հրամանով հաստատված՝ 6-րդ կետի պահանջը, այն է՝ կոմիտեի ծա-

ռայողը պարտավոր է պահպանել իրեն ամրագրված վկայականը և կնիքները, պաշտպանել դրանք վնասումից և ոչնչացումից:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ հիշյալ դրվագով Ս.Խ-ի արարքում առերևույթ առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով, 48-50-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Ս.Խ-ի կողմից իրեն հատկացված 434 համարի ծառայողական վկայականի կորստյան դրվագով Ս.Խ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և մեղավորությունը:

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*
Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության ՀԿԳ քննիչ Ս.Վ-ի վերաբերյալ

21 մայիսի 2020թ. ԿՀՈ 16
ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կարգապահական հանձնաժողովը (այսուհետ՝ Կարգապահական հանձնաժողով), ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության չորրորդ կայազորային քննչական բաժնի հատկապես կարևոր գործերով քննիչ Ս.Վ-ի (այսուհետ՝ նաև քննիչ) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Կոմիտեի ներքին անվտանգության վարչության պետի՝ 17.04.2020թ. միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության չորրորդ կայազորային քննչական բաժնի հատկապես կարևոր գործերով քննիչ Ս.Վ-ն իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել է Կոմիտեի նախագահի 2018 թվականի օգոստոսի 20-ի «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ներքին կարգապահական կանոնները հաստատելու մասին» թիվ 114-Լ հրամանով հաստատված հավելվածի 3-րդ գլխի 27-րդ կետի 9-րդ ենթակետի և Կոմիտեի նախագահի 2020 թվականի ապրիլի 16-ի «Դեպքի վայր Հայաստանի Հանրապետության քննչական կոմի-

տեի ծառայողի համազգեստով մեկնելու և հագուստին ներկայացվող պահանջները պահպանելու մասին» թիվ 71-Լ հանձնարարականի 1-ին մասի 2-րդ կետի պահանջները: Կարգապահական հանձնաժողովը քննարկել է ՀԿԳ քննիչ Ս.Վ-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումն ըստ ստորև նշված դրվագի.

Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության չորրորդ կայազորային քննչական բաժնի ՀԿԳ քննիչ Ս.Վ-ն իր նկատմամբ իրականացվող ծառայողական քննության շրջանակներում բացատրություն տալու նպատակով 17.04.2020թ. ժամը 11.00-ի սահմաններում Կոմիտեի ներքին անվտանգության վարչություն է ներկայացել ոչ պատշաճ արտաքին տեսքով՝ կրելով մուգ կապույտ գույնի միատոն, ոչ դասական, ջինսե անդրավարտիք (տաբատ) և նույն գույնի վերնաշապիկ, նման կերպ խախտելով վերոնշյալ իրավական ակտերի պահանջները, այն է՝ աշխատողներն իրենց աշխատանքային կարգապահության պահպանման նպատակով պարտավոր են ներկայանալ աշխատանքի վայր սև, սպիտակ, մուգ կապույտ կամ մեղմ գույնի դասական ոճի հագուստով և կոշիկներով, տղամարդիկ՝ փողկապով, իսկ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված դեպքերում և կարգով կրել համազգեստ, աշխատավայրում, ինչպես նաև աշխատավայրից դուրս ծառայողական պարտականությունները կատարելիս հետևողականորեն պահպանել Կոմիտեի նախագահի համապատասխան հրամաններով սահմանված հագուստին ներկայացվող պահանջները:

Հիշյալ առերևույթ կարգապահական խախտման վերաբերյալ Ս.Վ-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ մինչև Կոմիտեի ներքին անվտանգության վարչություն այցելելը, եղել է բժիշկի մոտ, ում ցուցումով այդ օրը՝ 17.04.2020թ. պետք է ներկայանար նաև ախտորոշիչ լաբորատորիա՝ համապատասխան հետազոտություններ անցնելու համար: Կոմիտեի ներքին անվտանգության վարչություն ներկայացել է բժշկի մոտից, ուստի Կոմիտեի համազգեստով կամ քաղաքացիական դասական հագուստով չի եղել, քանի որ հետազոտություններ պետք է անցներ և նախկինում

եղել են դեպքեր, երբ իրականացվող հետազոտությունների ժամանակ իր հագուստը բժշկական նյութերի օգտագործման ժամանակ վնասվել է և դարձել կրման համար ոչ պիտանի, այդ պատճառով բժշկի մոտից այցելել է Կոմիտեի ներքին անվտանգության վարչություն:

Ուսումնասիրելով նյութերը Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության չորրորդ կայազորային քննչական բաժնի հատկապես կարևոր գործերով քննիչ Ս.Վ-ն չի պահպանել «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով ամրագրված ծառայողական կարգապահությունը՝ ծառայողական պարտականությունները կատարելիս Կոմիտեի ներքին անվտանգության վարչություն է ներկայացել ոչ պատշաճ արտաքին տեսքով՝ կրելով մուգ կապույտ գույնի միատոն, ոչ դասական, ջինսե անդրավարտիք և նույն գույնի վերնաշապիկ, նման կերպ խախտելով Կոմիտեի նախագահի 2018 թվականի օգոստոսի 20-ի «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ներքին կարգապահական կանոնները հաստատելու մասին» թիվ 114-Լ հրամանով հաստատված հավելվածի 3-րդ գլխի 27-րդ կետի 9-րդ ենթակետի և Կոմիտեի նախագահի 2020 թվականի ապրիլի 16-ի «Դեպքի վայր Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ծառայողի համազգեստով մեկնելու և հագուստին ներկայացվող պահանջները պահպանելու մասին» թիվ 71-Լ հանձնարարականի 1-ին մասի 2-րդ կետի պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 2-րդ ենթակետով, 48-50-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության չորրորդ կայազորային քննչական բաժնի հատկապես կարևոր գործերով քննիչ Ս.Վ-ի կողմից ոչ պատշաճ արտաքին տեսքով Կոմիտեի ներքին անվտանգության վարչություն ներկայանալու դրվագով Ս.Վ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և վերջինիս մեղավորությունը:

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*

Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության Աբովյանի քննչական բաժնի քննիչ Գ. Կ-ի և նույն բաժնի պետի տեղակալ Հ.Ա-ի վերաբերյալ

21 մայիսի 2020թ. ԿՀՈ 17
ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կարգապահական հանձնաժողովը (այսուհետ՝ Կարգապահական հանձնաժողով), Կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության Աբովյանի քննչական բաժնի քննիչ, երկրորդ դասի խորհրդական Գ.Կ-ի (այսուհետ՝ նաև քննիչ) և նույն բաժնի պետի տեղակալ, արդարադատության երրորդ դասի խորհրդական Հ.Ա-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով Կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Փաստաբան Մ.Դ-ի դիմումի առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցված և քննիչ Գ.Կ-ի վարույթում քննված թիվ 20858018 քրեական գործով Գ.Կ-ն իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ կոպիտ կերպով խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 98-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջը, իսկ վերջինիս անմիջական վերադաս Հ.Ա-ն չի պահպանել «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի

10.06.2015թ. թիվ 55Լ հրամանով հաստատված հավելվածի 14-րդ կետի 2-3-րդ ենթակետերի պահանջները, առերևույթ կոպիտ կերպով խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը:

Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը քննարկել է Գ.Կ-ին և Հ.Ա-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումն ըստ ստորև նշված դրվագի.

Թիվ 20858018 քրեական գործով քննիչ Գ.Կ-ն 29.04.2019թ. ստանալով տուժող Մ.Ղ-ի և վերջինիս ներկայացուցիչ, փաստաբան Մ.Ղ-ի 29.04.2019թ. գրավոր դիմումները՝ Մ.Ղ-ի և նրա ընտանիքի անդամների անվտանգությունն ապահովելու խնդրանքի վերաբերյալ, դիմումների քննարկման արդյունքում համապատասխան որոշում չի կայացրել՝ խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 98-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջը:

Իր հերթին Կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության Աբովյանի քննչական բաժնի պետի տեղակալ Հ.Ա-ն չի պահպանել «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 10.06.2015թ. թիվ 55Լ հրամանով հաստատված հավելվածի 14-րդ կետի 2-3-րդ ենթակետերի պահանջները, առերևույթ կոպիտ կերպով խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը, մասնավորապես՝ իր լիազորություններն իրականացնելիս չի հետևել ենթակա քննիչի՝ Գ.Կ-ի կողմից թիվ 20858018 քրեական գործով վերոհիշյալ համապատասխան գործողությունը ժամանակին կատարելուն:

Հիշյալ առերևույթ կարգապահական խախտման վերաբերյալ Գ.Կ-ն Կոմիտեի կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ հայտնեց, որ 29.4.2019թ. ստանալով դիմումները, դրանց քննարկման արդյունքների վերաբերյալ համապատասխան որոշում չի կայացրել, քանի որ անհրաժեշտ էր նախ ստուգել և օբյեկտիվ իրականությունը պարզել, որի կապակցությամբ անմիջապես համապատասխան գրությամբ հասցեագրված Մ.Ղ-ին հայտնել է, որ իր դի-

մումի քննարկումը հետաձգվում է, որից հետո Մ.Ղ-ին լրացուցիչ հարցաքննության է հրավիրել և մանրամասն հարցադրումներ կատարել դիմումում նշված հանգամանքների շուրջ, սակայն վերջինս տվել է վերացական բնույթի պատասխաններ՝ չնշելով կոնկրետ անուններ: Մ.Ղ-ի հիշյալ դիմումն անուշադրության չի մատնվել, այդ կապակցությամբ իր կողմից ձեռնարկվել են միջոցներ, մասնավորապես հարցաքննվել է Մ.Ղ-ն, օպերատիվ միջոցառումներ ձեռնարկելու վերաբերյալ համապատասխան հանձնարարություն է տրվել հետաքննության մարմնին, սակայն դրական արդյունքներ չեն ստացվել: Ըստ իր պլանավորածի, քրեական գործով վարույթը կարճման որոշման եզրափակիչ մասում պետք է նշեր նաև վերոհիշյալ դիմումի լուծման հարցը, սակայն մոռացել է այդ հանգամանքին անդրադառնալ, թեև ինչպես ակներև է որոշումից, դրա նկարագրական մասում անդրադարձել է նաև Մ.Ղ-ի կողմից նախաքննության ընթացքում հայտնած, միմյանց հակասող տվյալներին, այդ թվում ենթադրյալ սպառնալիքներին ինչով իսկ իր կարծիքով լուծել է նաև հիշյալ դիմումով բարձրացված հարցը:

Գ.Կ-ի բացատրությանը նույնաբովանդակ բացատրություն է տվել նաև վերջինիս անմիջական վերադաս Հ.Ա-ն:

ՈՒսումնասիրելով նյութերը, Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ Կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության Աբովյանի քննչական բաժնի քննիչ Գ.Կ-ն իր լիազորություններն իրականացնելիս կոպիտ կերպով խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 98-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջը, այն է՝ պաշտպանության միջոց ձեռնարկելու մասին պաշտպանվող անձի դիմումը քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից քննարկվում է անհապաղ, բայց ոչ ուշ, քան դա ստանալու պահից 24 ժամվա ընթացքում: Կայացված որոշման մասին անմիջապես հայտնվում է դիմողին, և նրան է ուղարկվում համապատասխան որոշման պատճենը:

Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ հիշյալ դրվագով Գ.Կ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

Իր հերթին Կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության Աբովյանի քննչական բաժնի պետի տեղակալ Հ.Ա-ն չի պահպանել «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կանոնադրությունը հաստատելու մասին» Կոմիտեի նախագահի 10.06.2015թ. թիվ 55Լ հրամանով հաստատված հավելվածի 14-րդ կետի 2-3-րդ ենթակետերի պահանջները, առերևույթ կոպիտ կերպով խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը, այն է՝ քննչական բաժնի պետը հետևում է իրեն անմիջականորեն ենթակա քննիչների կողմից իրենց վարույթում գտնվող քրեական գործերով քննչական գործողությունները ժամանակին կատարելու, նախաքննության և կալանքի տակ պահելու ժամկետները պահպանելու, դատախազի ցուցումները և այլ քննիչների հանձնարարությունները կատարելու նկատմամբ:

Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ հիշյալ դրվագով Հ.Ա-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 2-րդ ենթակետով և 48-50-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Թիվ 20858018 քրեական գործով տուժող Մ.Ղ-ի և նրա ընտանիքի անդամների անվտանգությունն ապահովելու խնդրանքի վերաբերյալ Մ.Ղ-ի և վերջինիս ներկայացուցիչ, փաստաբան Մ. Ղ-ի 29.04.2019թ. գրավոր դիմումների քննարկման արդյունքում համա-

պատասխան որոշում չկայացնելու դրվագով Կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության Աբովյանի քննչական բաժնի քննիչ Գ.Կ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրանց մեղավորությունը:

2. Թիվ 20858018 քրեական գործով անմիջականորեն ենթակա քննիչի կողմից տուժող Մ.Ղ-ի և նրա ընտանիքի անդամների անվտանգությունն ապահովելու խնդրանքի վերաբերյալ Մ.Ղ-ի և վերջինիս ներկայացուցիչ, փաստաբան Մ.Ղ-ի 29.04.2019թ. գրավոր դիմումների քննարկման արդյունքում համապատասխան որոշում չկայացնելու չհետևելու դրվագով Կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության Աբովյանի քննչական բաժնի պետ Հ.Ա-ի արարքներում առկա է կարգապահական խախտման փաստը և նրանց մեղավորությունը:

3. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*
Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչության Դիլիջանի քննչական բաժնի պետ Վ.Գ-ի և նույն բաժնի պետի տեղակալ Է.Կ-ի վերաբերյալ

21 մայիսի 2020թ. ԿՀՈ 18
ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կարգապահական հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Կարգապահական հանձնաժողովը), ՀՀ քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչության Դիլիջանի քննչական բաժնի պետ Վ.Գ-ի (այսուհետ՝ նաև անմիջական վերադաս) և նույն բաժնի պետի տեղակալ Է.Կ-ի (այսուհետ՝ նաև քննիչ), հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրությունների նյութերը, կազմված եզրակացությունները.

Պ Ա Ր Զ Ե Ց

Նախնական ուսումնասիրությունների առիթ են հանդիսացել ՀՀ դատախազության Տավուշի մարզի դատախազության դատախազ Ա.Մ-ի միջնորդության առթիվ՝ քննիչ Է.Կ-ի և վերջինիս անմիջական վերադաս Վ.Գ-ի կողմից իրենց լիազորություններն իրականացնելիս խախտել են քրեադատավարական օրենքի և ներքին իրավական ակտերի վերաբերյալ:

ՀՀ քննչական կոմիտեի նախագահը քննիչ Է.Կ-ի և վերջինիս անմիջական վերադաս Վ.Գ-ի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու համար Կարգապահական հանձնաժողովին միջնորդու-

թյուններ է հարուցել օրենքի առերևույթ խախտումներ թույլ տալու վերաբերյալ, ըստ ստորև նշված դրվագների.

1. Քննչական խմբի ղեկավար Է.Կ-ն 26.08.2019թ-ից վարույթում քննված թիվ 36100819 քրեական գործով, տևական ժամանակ, քննչական գործողություններ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում առանձին գործողություններ՝ գործով մեղադրյալներ Ա.Ս-ի, Ա.Զ-ի և Ա.Պ-ի, ինչպես նաև՝ Ա.Ս-ի և գործով մեղադրյալ Վ.Մ-ի ցուցմունքներում առկա էական հակասությունների շուրջ նրանց միջև առերես հարցաքննություններ չի կատարել, ինչը ողջամտորեն կարող էր հանգեցնել ապացույցների կորստի, քանզի մեղադրյալ Ա.Զ-ն 16.10.2019թ-ից գտնվում է հետախուզման մեջ և մինչ օրս չի հայտնաբերվել, որպիսի պայմաններում՝ քննչական խմբի ղեկավար Է.Կ-ն խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ և 55-րդ հոդվածների 3-րդ մասերի պահանջները:

2. Քննչական խմբի ղեկավար Է.Կ-ն 26.08.2019թ-ից վարույթում քննված թիվ 36100819 քրեական գործով, տևական ժամանակ, քննչական գործողություններ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում առանձին գործողություններ չի կատարել, այն է՝ 22.08.2019թ-ին Ֆ.Ս-ի առանձնատանը կատարված դեպքի վայրի զննության ընթացքում հայտնաբերված և վերցված ձեռքի հետքերի պիտանելիությունը և մեղադրյալների կողմից թողնված լինելու հանգամանքը, ինչպես նաև՝ 02.07.2019թ-ին Բ.Ս-ի բնակարանում կատարված դեպքի վայրի զննության ընթացքում հայտնաբերված և վերցված ձեռքի հետքերի մեղադրյալների կողմից թողնված լինելու հանգամանքը պարզելու՝ ապացույցներ ձեռք բերելու նպատակով դատամատնադրոշմային փորձաքննություններ չի նշանակել, որպիսի պայմաններում՝ քննչական խմբի ղեկավար Է.Կ-ն խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ և 55-րդ հոդվածների 3-րդ մասերի պահանջները:

3. Քննչական խմբի ղեկավար Է.Կ-ն 26.08.2019թ-ից վարույթում

քննված թիվ 36100819 քրեական գործով 15.08.2019թ-ին ստացված՝ Բ.Ս-ի բնակարանում կատարված դեպքի վայրի զննության ընթացքում հայտնաբերված և վերցված ձեռքի հետքերի պիտանելիությունը և պատկանելիությունը պարզելու նպատակով նշանակված դատամատնադրոշմային փորձաքննության թիվ 2037-19 եզրակացությանը չի ծանոթացրել մեղադրյալներ՝ Ա.Ս-ին, Ա.Չ-ին, Ա.Պ-ին և Վ.Մ-ին, 03.09.2019թ.՝ Ա.Ս-ի անձնական խուզարկությամբ հայտնաբերված <<Lyrica>> գրառմամբ 5 դեղահաբի և <<Pregabalin>> գրառմամբ 10 դեղահաբերի, Ա.Ս-ի վարած <<NISSAN TIDA 1.5>> մակնիշի ավտոմեքենայում կատարված խուզարկությամբ հայտնաբերված դեղնականաչավուն զանգվածների և կաթոցիչի, <<Lyrica>> գրառմամբ 23 և 9 առանձին դեղահաբերի ու <<Pregabalin>> գրառմամբ 40 դեղահաբերի, <<B8>> գրառմամբ 1 դեղահաբի վերաբերյալ նշանակված դատանյութագիտական փորձաքննության որոշումը չի ծանոթացրել տուժող Բ.Ս-ին և մեղադրյալներ՝ Ա.Ս-ին, Ա.Չ-ին, Ա.Պ-ին և Վ.Մ-ին, 04.10.2019թ.՝ թմրամիջոցների, հոգեմետ /հոգեներգործուն/ նյութեր օգտագործելու փաստը ստուգելու նպատակով մեղադրյալներ Ա.Ս-ից, Ա.Չ-ից և Ա.Պ-ից ստացված արյան ու մազի փորձանմուշներով նշանակված դատատոկսիկոքիմիական փորձաքննության որոշմանը չի ծանոթացրել տուժող Բ.Ս-ին և մեղադրյալներ՝ Ա.Ս-ին, Ա.Չ-ին, Ա.Պ-ին և Վ.Մ-ին, վերջինիս պաշտպան Ս.Ջ-ին, այդ փորձաքննությունների կատարման վերաբերյալ 22.11.2019թ. ստացված եզրակացություններին՝ տուժող Բ.Ս-ին և մեղադրյալներ՝ Ա.Ս-ին, Ա.Պ-ին և Վ.Մ-ին, վերջինիս պաշտպան Ս.Ջ-ին, 17.12.2019թ.՝ Ա.Պ-ի վարած <<Վազ 21214>> մակնիշի ավտոմեքենայում 23.08.2019թ. կատարված խուզարկությամբ հայտնաբերված և Ֆ.Ս-ի առանձնատնից գողացված 4 դանակների ու <<DEXP>> ապրանքանիշի բջջային հեռախոսի արժեքը որոշելու համար նշանակված դատաապրանքագիտական փորձաքննության որոշմանը չի ծանոթացրել տուժող Բ.Ս-ին և մեղադրյալներ՝ Ա.Ս-ին, Ա.Չ-ին, Ա.Պ-ին և Վ.Մ-ին, վերջինիս պաշտպան Ս.Ջ-ին: Արդյունքում՝ քննչական խմբի ղեկավար Է.Կ-ն խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 247-րդ հոդվածի պա-

հանջները:

4. Քննչական խմբի ղեկավար Է.Կ-ն 26.08.2019թ-ից վարույթում քննված թիվ 36100819 քրեական գործով, տևական ժամանակ՝ շուրջ 4 ամիս, քննչական գործողություններ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում առանձին գործողություններ չի կատարել, այն է՝ մեղադրյալ Ա.Պ-ի վարած <<Վազ 21214>> մակնիշի ավտոմեքենայում 23.08.2019թ. կատարված խուզարկությամբ հայտնաբերված և Ֆ.Ս-ի առանձնատնից գողացված 4 դանակները տուժող Ֆ.Ս-ին ճանաչման է ներկայացրել միայն 17.12.2019թ-ին, իսկ այդ դանակների և նույն խուզարկությամբ հայտնաբերված և Ֆ.Ս-ի առանձնատնից գողացված <<DEXP>> ապրանքանիշի բջջային հեռախոսի արժեքը որոշելու համար դատաապրանքագիտական փորձաքննությունը նշանակել է 17.12.2019թ-ին, ինչը հանգեցրել է նախաքննության ժամկետների անհարկի ձգձգումների, որպիսի պայմաններում՝ քննչական խմբի ղեկավար Է.Կ-ն խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ և 55-րդ հոդվածների 3-րդ մասերի պահանջները:

5. Իր հերթին՝ Դիլիջանի քննչական բաժնի պետ Վ.Գ-ն, հանդիսանալով նույն բաժնի պետի տեղակալ՝ թիվ 36100819 քրեական գործով վարույթն իրականացրած քննիչ Է.Կ-ի անմիջական վերադասը, «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 10.06.2015թ. թիվ 55Լ հրամանով հաստատված հավելվածի 14-րդ կետի 2-3-րդ ենթակետերի և «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչության ծառայողների միջև աշխատանքի բաժանում կատարելու մասին» «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի տեղակալի 2018 թվականի օգոստոսի 31-ի թիվ 141-Ա հրամանում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալի 29.10.2019թ. թիվ 145-Ա հրամանի 2-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջների համաձայն՝ չի վերահսկել իր անմիջական համակարգման ոլորտում գտնվող ծառայողի՝ Է.Կ-ի կողմից կատար-

ված աշխատանքները, թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասի 2-3-րդ կետերի պահանջների խախտումներ՝ չի հետևել իրեն անմիջական ենթակա քննիչի վարույթում քննված քրեական գործերով, քննչական և դատավարական այլ գործողություններ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող ակնհայտ փաստական հիմքերի առկայության պայմաններում, քննիչի կողմից համապատասխան քննչական գործողություններ կատարելուն և այդպիսիք կատարելու ցուցումներ չի տվել, որպիսի պայմաններում՝ գործով մեղադրյալներ Ա.Ս-ի, Ա.Զ-ի և Ա.Պ-ի, ինչպես նաև՝ Ա.Ս-ի և գործով մեղադրյալ Վ.Մ-ի ցուցմունքներում առկա էական հակասությունների շուրջ նրանց միջև առերես հարցաքննություններ չի կատարվել, 22.08.2019թ-ին Ֆ.Ս-ի առանձնատանը կատարված դեպքի վայրի զննության ընթացքում հայտնաբերված և վերցված ձեռքի հետքերի պիտանելիությունը և մեղադրյալների կողմից թողնված լինելու հանգամանքը, ինչպես նաև՝ 02.07.2019թ-ին Բ.Ս-ի բնակարանում կատարված դեպքի վայրի զննության ընթացքում հայտնաբերված և վերցված ձեռքի հետքերի մեղադրյալների կողմից թողնված լինելու հանգամանքը պարզելու՝ ապացույցներ ձեռք բերելու նպատակով դատամատնադրոշմային փորձաքննություններ չի նշանակվել, մեղադրյալ Ա.Պ-ի վարած <<Վազ 21214>> մակնիշի ավտոմեքենայում 23.08.2019թ. կատարված խուզարկությամբ հայտնաբերված և Ֆ.Ս-ի առանձնատնից գողացված 4 դանակները տուժող Ֆ.Ս-ին ճանաչման է ներկայացրել միայն 17.12.2019թ-ին, իսկ այդ դանակների և նույն խուզարկությամբ հայտնաբերված և Ֆ.Ս-ի առանձնատնից գողացված <<DEXP>> ապրանքանիշի բջջային հեռախոսի արժեքը որոշելու համար դատաապրանքագիտական փորձաքննությունը նշանակվել է 17.12.2019թ-ին:

Հիշյալ դրվագով առերևույթ կարգապահական խախտման վերաբերյալ քննիչ Է.Կ-ն Կարգապահական հանձնաժողովին տված ըստ էության հայտնեց, որ գործով մեղադրյալներ՝ Ա.Ս-ի, Ա.Զ-ն և Ա.Պ-ն ընդունել են իրենց առաջադրված մեղադրանքը, պնդել, որ որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման մեջ նշված փաստա-

կան կողմերը, այդ թվում՝ յուրաքանչյուրի գործողությունները՝ ըստ դերաբաշխման համապատասխանում են իրականությանը, ուստի, առերեսումներն անցկացնելու նպատակահարմարությունը չի գտել, իսկ մեղադրյալներ՝ Ա.Զ-ի և Վ.Մ-ի միջև առերես հարցաքննությունն ընդհատվել է, քանի որ մեղադրյալ Ա.Զ-ն ցանկացել է օգտվել պաշտպանի իրավունքից, որի կապակցությամբ առերեսումն ընդհատվել է, իսկ հաջորդ օրը՝ մեղադրյալ Վ.Մ-ն դիմել է փախուստի, երբ վերջինս հայտնաբերվել է, արդեն փախուստի էր դիմել մեղադրյալ Ա.Զ-ն, ուստի, նրանց առերեսումն էլ չի կատարվել: Դատամատնադրոշմային փորձաքննությունը նշանակելու մասին հետ կապված հայտնեց, որ դրանց նշանակման անհրաժեշտությունը նույնպես չի գտել, քանի որ ձեռք բերված ապացույցները բավարարել է համարել: Ընդունեց, որ նշանակված փորձաքննությունների որոշումները և ստացված եզրակացությունները թեև օրենքով սահմանված ժամկետում չի նշանակել, սակայն, բանավոր՝ հեռախոսազրույցի միջոցով թե տուժողը և թե մեղադրյալները հայտնել են, որ չեն ցանկանում ծանոթանալ, իսկ 2020թ. փետրվար ամսին ներկայացել են համապատասխան դիմումներ՝ հայտնելով, որ միջնորդություններ չունեն և չեն ցանկանում ծանոթանալ նշանակված փորձաքննությունների որոշումներին և ստացված եզրակացություններին: Դատաապրանքագիտական փորձաքննությունն ուշ նշանակելու վերաբերյալ հայտնեց, որ նախաքննության ժամկետների ձգձգումները կապված չեն եղել այդ փորձաքննության հետ, այլ՝ պայմանավորված է եղել նշանակված դատանյութագիտական փորձաքննության եզրակացությունն չստանալու հետ: Կարգապահական հանձնաժողովը:

Հիշյալ դրվագով առերևույթ կարգապահական խախտման վերաբերյալ անմիջական Վ.Գ-ն Կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ ըստ էության տվեց քննիչ Է.Կ-ի բացատրությանը նույնաբովանդակ բացատրություն՝ հավելելով, որ ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 26.07.2019թ. համապատասխան հրամանի համաձայն՝ 01.08.2019թ.-20.09.2019թ-ը ներառյալ ընկած ժամանակահատվածում գտնվել է ամենամյա արձակուրդում, իսկ բաժնի

պետի ժամանակավոր պարտականությունների կատարումը դրվել է Է.Կ-ի վրա:

Ուսումնասիրելով նյութերը, լսելով Է.Կ-ին և Վ.Գ-ին, Կարգապահական հանձնաժողովը, նախ՝ նկատեց, որ խախտվել է դատավարության մասնակիցների իրավունքները, չի ապահովվել մեղադրյալների կոնֆրոնտացիայի՝ իր դեմ վկայած անձին հարցման ենթարկելու իրավունքները, և պարզեց, որ քննիչ Է.Կ-ի ու վերջինիս անմիջական վերադաս Վ.Գ-ի կողմից թույլ են տրվել կարգապահական խախտումներ: Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ քննիչ Է.Կ-ի և վերջինիս անմիջական վերադաս Վ.Գ-ի արարքներում առկա է կարգապահական խախտումների փաստերը և նրանց մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 2-րդ ենթակետով, 48-50-րդ կետերով,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Թիվ 36100819 քրեական գործով, տևական ժամանակ, քննչական գործողություններ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում առանձին գործողություններ՝ գործով մեղադրյալներ Ա.Ս-ի, Ա.Զ-ի և Ա.Պ-ի, ինչպես նաև՝ Ա.Ս-ի և գործով մեղադրյալ Վ.Մ-ի ցուցմունքներում առկա էական հակասությունների շուրջ նրանց միջև առերես հարցաքննություններ չկատարելու դրվագով ՀՀ քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչության Դիլիջանի քննչական բաժնի պետի տեղակալ Է.Կ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

2. Թիվ 36100819 քրեական գործով, տևական ժամանակ, քննչական գործողություններ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում առանձին գործողություններ չկատարելու՝ 22.08.2019թ-ին Ֆ.Ս-ի առանձնատանը կատարված դեպքի վայրի զննության ընթացքում հայտնաբերված և վերցված ձեռքի հետքերի պիտանելիությունը և մեղադրյալների կողմից թողնված լինելու հանգամանքը, ինչպես նաև՝ 02.06.2019թ-ին Բ.Ս-ի բնակարանում կատարված դեպքի վայրի զննության ընթացքում հայտնաբերված և վերցված ձեռքի հետքերի մեղադրյալների կողմից թողնված լինելու հանգամանքը պարզելու՝ ապացույցներ ձեռք բերելու նպատակով դատամատնադրոշմային փորձաքննություններ չնշանակելու դրվագով ՀՀ քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչության Դիլիջանի քննչական բաժնի պետի տեղակալ Է.Կ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

3. Թիվ 36100819 քրեական գործով 15.08.2019թ-ին ստացված դատամատնադրոշմային փորձաքննության թիվ 2037-19 եզրակացությանը, 03.09.2019թ. նշանակված դատանյութագիտական փորձաքննության որոշմանը, 04.10.2019թ. նշանակված դատատոկսիկոքիմիական փորձաքննության որոշմանը, 22.11.2019թ. ստացված դատատոկսիկոքիմիական փորձաքննությունների եզրակացություններին,, 17.12.2019թ. նշանակված դատաապրանքագիտական փորձաքննության որոշմանը տուժող Բ.Ս-ին, մեղադրյալներ՝ Ա.Ս-ին, Ա.Զ-ին, Ա.Պ-ին և Վ.Մ-ին, վերջինիս պաշտպան Ս.Ջ-ին չծանոթացնելու դրվագով ՀՀ քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչության Դիլիջանի քննչական բաժնի պետի տեղակալ Է.Կ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

4. Թիվ 36100819 քրեական գործով, տևական ժամանակ՝ շուրջ 4 ամիս, քննչական գործողություններ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում առանձին գործողություններ չկատարելու՝ մեղադրյալ

Ա.Պ-ի վարած <<Վազ 21214>> մակնիշի ավտոմեքենայում 23.08.2019թ. կատարված խուզարկությամբ հայտնաբերված և Ֆ.Ս-ի առանձնատնից գողացված 4 դանակները տուժող Ֆ.Ս-ին 17.12.2019թ-ին ճանաչման ներկայացնելու ու այդ դանակների և նույն խուզարկությամբ հայտնաբերված և Ֆ.Ս-ի առանձնատնից գողացված <<DEXP>> ապրանքանիշի բջջային հեռախոսի արժեքը որոշելու համար դատաապրանքագիտական փորձաքննությունը 17.12.2019թ-ին նշանակելու դրվագրով ՀՀ քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչության Դիլիջանի քննչական բաժնի պետի տեղակալ Է.Կ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

5. Թիվ 36100819 քրեական գործով իրեն անմիջականորեն ենթակա քննիչ Է.Կ-ի կողմից, ակնհայտ փաստական հիմքերի առկայության պայմաններում՝ համապատասխան քննչական գործողություններ կատարելուն չհետևելու և այդպիսիք կատարելու ցուցում չտալու դրվագներով ՀՀ քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչության Դիլիջանի քննչական բաժնի պետ Վ.Գ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը

6. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*
Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության Աբովյանի քննչական բաժնի նախկին պետ, ներկայում՝ Երևան քաղաքի քննչական վարչության պետի տեղակալ Ռ.Մ-ի և նույն վարչության ավագ քննիչ Ա.Ղ-ի վերաբերյալ

11 հունիսի 2020թ. ԿՀՈ 19
ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կարգապահական հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Կարգապահական հանձնաժողովը), ՀՀ քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության Աբովյանի քննչական բաժնի նախկին պետ, ներկայում՝ Երևան քաղաքի քննչական վարչության պետի տեղակալ Ռ.Մ-ի (այսուհետ նաև՝ անմիջական վերադաս) և նույն վարչության ավագ քննիչ Ա.Ղ-ի՝ գործուղված Աբովյանի քննչական բաժին (այսուհետ նաև՝ քննիչ), հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրությունների նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Նախնական ուսումնասիրության առիթ է հանդիսացել ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դ-ի միջնորդությունը՝ թիվ 20158519 քրեական գործով նախաքննության ընթացքում վարույթն իրականացրած քննիչ Ա.Ղ-ի և վերջինիս անմիջական վերադաս Ռ.Մ-ի կողմից իրենց լիազորություններն իրականացնելիս քրեադատավարական օրենքի առերևույթ խախտումներ թույլ տալու վերաբերյալ:

ՀՀ քննչական կոմիտեի նախագահը քննիչ Ա.Ղ-ի և վերջինիս անմիջական վերադաս Ռ.Մ-ի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու համար Կարգապահական հանձնաժողովին միջնորդություն է հարուցել օրենքի առերևույթ խախտումներ թույլ տալու վերաբերյալ, ըստ ստորև նշված դրվագների.

1. Քննիչ Ա.Ղ-ն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հարուցված, 18.02.2019-14.02.2020 թթ. վարույթում քննված թիվ 20158519 քրեական գործով, տևական ժամանակ՝ շուրջ 1 տարի, քննչական և դատավարական այլ գործողություններ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում առանձին գործողություններ չի կատարել, մասնավորապես՝ քրեական գործի նախաքննության ընթացքում հարցաքննված «Գառնու թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի նախկին աշխատակիցների կողմից վկա Ա.Մ-ի ուղղորդմամբ իրականությանը չհամապատասխանող ցուցմունքներ տալու վարկածը ստուգելու համար նրա բջջային հեռախոսահամարից կատարված զանգերի վերծանումները ստանալու միջնորդություն չի ներկայացրել ընդհանուր իրավասության դատարան, պատշաճ չի զննել վկա Ա.Ն-ի բջջային հեռախոսահամարի հեռախոսազանգերի վերծանումները՝ պարզելու համար, թե վերջինս ինչ հաճախականությամբ է հեռախոսային շփում ունեցել դպրոցի այլ աշխատակիցների հետ, առավել հաճախ հեռախոսային շփում ունեցած անձանց ինքնությունները չի պարզել և չի հարցաքննել, պաշտոնեական դիրքի օգտագործմամբ հափշտակություն կատարելու ձևով կատարված կոռուպցիոն բնույթի ենթադրյալ հանցագործության հատկանիշների առկայության պայմաններում՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցառումները ձեռնարկելու պարտավորություն կրելով՝ սահմանափակվել է միայն հիշյալ դեպքի բացահայտմանն ուղղված քննչական և դատավարական գործողությունների կատարմամբ՝ անտեսելով «Գառնու թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հաստիքագրված այլ աշխատակիցների՝ առանց աշխա-

տանքի հաճախելու և իրենց պարտականությունները կատարելու աշխատավարձ ստացած լինելու վարկածի ստուգման անհրաժեշտությունը, չի կատարել դրանից բխող անհրաժեշտ քննչական և դատավարական այլ գործողություններ. այդ նպատակով չի պարզել «Գառնու թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում որպես տեխնիկական սպասարկում իրականացնող աշխատակից հաստիքագրված անձանց շրջանակը, չի ստացվել վերջիններիս վերաբերյալ ՍԷԿՏ համակարգում առկա տեղեկատվությունը և նշված վարկածը ստուգելու ուղղությամբ անհրաժեշտ միջոցառումներ իրականացնելու վերաբերյալ հանձնարարություն չի տրվել ՀՀ ոստիկանության համապատասխան ստորաբաժանումների ծառայողների, ինչը ողջամտորեն կարող էր հանգեցնել ապացույցների կորստի և անհարկի ձգձգվել են նախաքննության ժամկետները, որպիսի պայմաններում՝ քննիչ Ա.Ղ-ն խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ և 55-րդ հոդվածների 3-րդ մասերի պահանջները:

2. Իր հերթին՝ քննիչ Ա.Ղ-ի անմիջական վերադաս Ռ.Մ-ն, ծանոթ լինելով թիվ 20158519 քրեական գործի նյութերին, «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 10.06.2015թ. թիվ 55 Լ հրամանով հաստատված հավելվածի 14-րդ կետի 2-3-րդ ենթակետերի և «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության ծառայողների միջև աշխատանքի բաժանում կատարելու մասին» «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի տեղակալի 2018 թվականի օգոստոսի 31-ի թիվ 137-Ա հրամանում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալի 20.02.2019թ. թիվ 22-Ա հրամանի 1-ին կետի 3-րդ ենթակետի պահանջների համաձայն՝ չի վերահսկել իր անմիջական համակարգման ոլորտում գտնվող ծառայողի՝ Ա.Ղ-ի կողմից կատարված աշխատանքները, թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասի 2-3-րդ կետերի պահանջների խախտումներ՝ չի հետևել իրեն անմիջական ենթակա քննիչի վարույթում

քննված թիվ 20158519 քրեական գործով քննչական և դատավարական այլ գործողություններ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում, քննիչի կողմից համապատասխան քննչական և դատավարական այլ գործողություններ կատարելուն և այդպիսիք կատարելու ցուցումներ չի տվել, որպիսի պայմաններում՝ քրեական գործի նախաքննության ընթացքում հարցաքննված «Գառնու թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի նախկին աշխատակիցների կողմից վկա Ա.Մ-ի ուղղորդմամբ իրականությանը չհամապատասխանող ցուցմունքներ տալու վարկածը ստուգելու համար նրա բջջային հեռախոսահամարից կատարված զանգերի վերծանումները չեն ստացվել, պատշաճ չի զննվել վկա Ա.Ն-ի բջջային հեռախոսահամարի հեռախոսազանգերի վերծանումները՝ պարզելու համար, թե վերջինս ինչ հաճախականությամբ է հեռախոսային շփում ունեցել դպրոցի այլ աշխատակիցների հետ, առավել հաճախ հեռախոսային շփում ունեցած անձանց ինքնությունները չի պարզվել և չեն հարցաքննվել, պաշտոնական դիրքի օգտագործմամբ հափշտակություն կատարելու ձևով կատարված կոռուպցիոն բնույթի ենթադրյալ հանցագործության հատկանիշների առկայության պայմաններում՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցառումները չեն ձեռնարկվել՝ «Գառնու թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հաստիքագրված այլ աշխատակիցների՝ առանց աշխատանքի հաճախելու և իրենց պարտականությունները կատարելու աշխատավարձ ստացած լինելու վարկածը ստուգելու ուղղությամբ, չի կատարվել դրանից բխող անհրաժեշտ քննչական և դատավարական այլ գործողություններ. այդ նպատակով չի պարզվել «Գառնու թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում որպես տեխնիկական սպասարկում իրականացնող աշխատակից հաստիքագրված անձանց շրջանակը, չի ստացվել վերջիններիս վերաբերյալ ՍԷԿՏ համակարգում առկա տեղեկատվությունը և նշված վարկածը ստուգելու ուղղությամբ անհրաժեշտ միջոցառումներ իրականացնելու վերաբերյալ հանձնարարություն չի տրվել

ՀՀ ոստիկանության համապատասխան ստորաբաժանումների ծառայողների, ինչը ողջամտորեն կարող էր հանգեցնել ապացույցների կորստի և անհարկի ձգձգվել են նախաքննության ժամկետները:

Հիշյալ դրվագով առերևույթ իրավախախտման վերաբերյալ քննիչ Ա.Ղ-ն ու վերջինիս անմիջական վերադաս Ռ.Մ-ն Կարգապահական հանձնաժողովին ըստ էության տված բացատրությամբ չընդունեց իրենց մեղավորությունը՝ հավելելով, որ վերոհիշյալ վերծանումները ստանալն ըստ էության ոչինչ չէր տալու իրենց գնահատմամբ, քանի որ դրանով չէր պարզվելու, թե դպրոցի տնօրեն Ա.Մ-ի ամուսին Ա.Ն-ն աշխատել է, թե ոչ, ինչ հաճախականությամբ և այլն, առավել ևս նրա կողմից ենթադրյալ ուղղորդմամբ իրականությանը չհամապատասխանող ցուցմունքներ տալու վարկածը: Նույնը պնդեցին նաև՝ վկա Ա.Ն-ի բջջային հեռախոսահամարի հեռախոսազանգերի վերծանումների քննության մասով՝ նշելով, որ Ա.Ն-ի վերծանումների զննությունը կատարվել է քննության համար հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջ, որով պարզվել է, որ նրա հեռախոսահամարը սպասարկվել է նշված դպրոցի տարածքը սպասարկած ալեհավաք կայանների կողմից և նրա ունեցած հեռախոսային շփումները քրեական գործի բացահայտման ուղղությամբ որևէ էական նշանակություն ունենալ չէին կարող և կրկին չէին ծառայելու բուն նպատակին՝ հանցագործության բացահայտմանը և ապացույցների հավաքմանը: Բացի այդ, ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության և Կոտայքի բաժնի աշխատակիցների կողմից ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել և նախապատրաստված նյութերով տվյալներ էին ձեռք բերվել միայն այն մասին, որ «Գառնու թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Ա.Մ-ի կողմից պաշտոնեական դիրքի օգտագործմամբ հափշտակություն կատարելու ձևով կատարված կոռուպցիոն բնույթի ենթադրյալ հանցագործության հատկանիշների առկայությունը դրսևորվել էր ամուսնուն 2004 թվականի նոյեմբերի 26-ից 2017 թվականի դեկտեմբերի 29-ն ընկած ժամանակահատվածում որպես աշխատող տարբեր պաշտոններում ձևակերպելու, սակայն վերջինիս կողմից առանց աշ-

խատանքի հաճախելու և իր պարտականությունները կատարելու ընդհանուր 3.949.938 ՀՀ դրամ աշխատավարձ ստանալու փաստով: Այսինքն՝ հետաքննության մարմինն արդեն իսկ ներգրավված է եղել գործի քննությանը և նրանց կողմից նշված շրջանակներում պարզված ու նախաքննական մարմնին ներկայացված տվյալները վկայել են այն մասին, որ այլ հափշտակություններ կատարելու ձևով կատարված կոռուպցիոն բնույթի ենթադրյալ հանցագործության հատկանիշներ չէին հայտնաբերվել: Չնայած դրան՝ վարույթն իրականացնող մարմնի կողմից հետաքննության մարմնին տրվել է առարկայական հանձնարարություն, որոնց թվում՝ խնդրելով տրամադրել նոր տվյալներ, սակայն, նոր տվյալներ և հանգամանքներ՝ դրանց շուրջ քննություն կատարելու և ապացույցների բավարար համակցություն ձեռք բերելու համար, չեն պարզվել ու չեն տրամադրվել, նշվածի առիթով պարբերական հեռախոսակապի մեջ են գտնվել նաև ՀՀ ոստիկանության 6-րդ վարչության աշխատակիցների հետ: Նշեցին նաև, որ քրեական գործն ուսումնասիրվել է նաև դատախազության կողմից և ձեռք բերված տվյալները քննարկվել են նաև նրանց, դատախազության տվյալ ստորաբաժանմանը հանձնարարվել էր նաև ևս մեկ անգամ հանձնարարություն տալ հետաքննության մարմնին՝ այլ փաստեր կամ ապացուցողական նշանակություն ունեցող տեղեկություններ ունենալու դեպքում վարույթն իրականացնող մարմին տրամադրելու վերաբերյալ, որին ի պատասխան հետաքննության մարմնի կողմից հայտնվել էր, որ ձեռնարկված միջոցառումների արդյունքում քրեական գործի համար նշանակություն ունեցող այլ տեղեկություններ չեն ստացվել:

Ուսումնասիրելով նյութերը, լսելով Ա.Ղ-ին և Ռ.Մ-ին, Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ քննիչ Ա.Ղ-ի և նրա անմիջական վերադաս Ռ.Մ-ի արարքներում բացակայում է կարգապահական խախտման փաստը:

Ելնելով վերոգրյալից, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապե-

տության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով, 48-50-րդ կետերով,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Թիվ 20158519 քրեական գործով քննչական և այլ դատավարական գործողություն կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում, առանց իրավաչափ նպատակի, տևական ժամանակ՝ շուրջ 1 տարի, առանձին գործողություններ չկատարելու դրվագով ՀՀ քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Ա.Ղ-ի՝ գործուղված Աբովյանի քննչական բաժին, արարքում բացակայում է կարգապահական խախտման փաստը:

2. Թիվ 20158519 քրեական գործով իրեն անմիջականորեն ենթակա քննիչի կողմից, ակնհայտ փաստական հիմքերի առկայության պայմաններում՝ համապատասխան քննչական գործողություններ կատարելուն չհետևելու և այդպիսիք կատարելու ցուցումներ չտալու դրվագով ՀՀ քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության Աբովյանի քննչական բաժնի նախկին պետ, ներկայում՝ Երևան քաղաքի քննչական վարչության պետի տեղակալ Ռ.Մ-ի արարքում բացակայում է կարգապահական խախտման փաստը:

3. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*
Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ՔԿ Լոռու մարզային քննչական վարչության քննիչ Ա.Տ-ի (գործուղված Սպիտակի ՔԲ) և նույն վարչության Սպիտակի քննչական բաժնի պետ Մ.Փ-ի վերաբերյալ

11 հունիսի 2020թ. ԿՀՈ 20
ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կարգապահական հանձնաժողովը (այսուհետ՝ Կարգապահական հանձնաժողով), ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության քննիչ Ա.Տ-ի (այսուհետ նաև՝ քննիչ) և նույն մարզային քննչական վարչության Սպիտակի քննչական բաժնի պետ Մ. Փ-ի (այսուհետ նաև՝ անմիջական վերադաս) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

ՀՀ ՔԿ ներքին անվտանգության վարչության պետի զեկուցագրի առթիվ կատարված նախնական ուսումնասիրությամբ պարզվել է, որ ՀՀ ՔԿ Լոռու մարզային քննչական վարչության քննիչ Ա.Տ-ի վարույթում քննված թիվ 52157319 քրեական գործի նախաքննության ընթացքում վերջինս և նրա անմիջական վերադաս, Սպիտակի քննչական բաժնի պետ Մ.Փ-ն իրենց լիազորություններն իրականացնելիս թույլ են տվել օրենքի կոպիտ խախտումներ:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է քննիչ Ա.Տ-ին և քննչական բաժնի պետ Մ.Փ-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագների.

1. Քննիչ Ա.Տ-ն 2019 թվականի հուլիսի 24-ին որոշում է կայացրել 2001թ. ծնված Գ.Ղ-ի նկատմամբ «հսկողության հանձնելու մասին» խափանման միջոց ընտրելու մասին, 2019 թվականի հուլիսի 26-ին վերջինիս մեղադրանք է առաջադրել ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով (2 դրվագ), այնուհետև՝ 2019 թվականի դեկտեմբերի 17-ին քրեական գործն ուղարկվել է Լոռու մարզի դատախազություն՝ մեղադրական եզրակացությունը հաստատելու և դատարան ուղարկելու համար:

Արդյունքում՝ Գ.Ղ-ի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու մասին ՀՀ ՊՆ Լոռու մարզի զինվորական կոմիսարիատ չի հայտնվել, ինչով իսկ խախտվել է «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասը, համաձայն որի՝ քրեական վարույթ իրականացնող մարմինները պարտավոր են յոթ աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան զինվորական կոմիսարիատ հայտնել այն զինապարտների /բացառությամբ պահեստազորում հաշվառված կամ սույն օրենքի 22-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կամ 3-րդ կետի համաձայն՝ զինվորական հաշվառումից հանված անձանց/ մասին, որոնց նկատմամբ հարուցվել է քրեական վարույթ:

Բացի այդ, քննիչի կողմից խախտվել է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները:

Նշված խախտումների արդյունքում Գ.Ղ-ի նկատմամբ 2020թ. փետրվարի 27-ին ՀՀ ՔԿ ԶՔԳՎ յոթերորդ կայազորային քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ:

2. Իր հերթին, քննիչ Ա.Տ-ի անմիջական վերադաս, Սպիտակի քննչական բաժնի պետ Մ.Փ-ն «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 10.06.2015թ. թիվ 55 Լ հրամանով հաստատված հավելվածի 14-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ չի

վերահսկել իր անմիջական համակարգման ոլորտում գտնվող ծառայողի կողմից կատարված աշխատանքները, մասնավորապես՝ պատշաճ հսկողություն չի իրականացրել ենթակա քննիչի վարույթում քննված քրեական գործով՝ Գ.Ղ-ի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու մասին՝ ՀՀ ՊՆ Լոռու մարզի զինվորական կոմիսարիատ հայտնելու վերաբերյալ:

Հիշյալ առերևույթ կարգապահական խախտման վերաբերյալ Ա.Տ-ն ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովին տված բացատրության ընդունեց իր կողմից նշված հանձնարարականի պահանջները խախտելու հանգամանքը, սակայն նշեց, որ իր գործողությունները հետևանք չեն առաջացրել, որևէ մեկի իրավունքը չի խախտվել:

Հիշյալ առերևույթ կարգապահական խախտման վերաբերյալ ըստ էության նույնաբովանդակ բացատրություն տվեց նաև Մ.Փ-ն, հավելելով նաև, որ իր տեղեկություններով նման գրություն զինկոմիսարիատ ուղարկվել է: Եթե հետագայում պարզվել է, որ չի ուղարկվել, ապա դա կարող է պայմանավորված լինել քննիչի ծանրաբեռնվածությամբ:

ՈՒսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչ Ա.Տ-ի և քննչական բաժնի պետ Մ.Փ-ի արարքներում առկա է կարգապահական խախտման փաստը և վերջիններիս մեղավորությունը, մասնավորապես՝ քննիչի այն պնդումը, որ իր գործողությունները հետևանք չեն առաջացրել ընդունելի չէ, նախաքննական մարմինը չի կատարել օրենքի ուժով իր վրա դրված պարտականությունները, ինչը հանգեցրել է աշխատանքային անտեղի լրացուցիչ գործողությունների:

Արդյունքում խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածի 1-ին մասի, «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասը, «ՀՀ քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջները, «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի

10.06.2015թ. թիվ 55 Լ հրամանով հաստատված հավելվածի 14-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 2-րդ ենթակետով և 48-50-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Թիվ 52157319 քրեական գործի նախաքննության ընթացքում Գ.Ղ-ի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու մասին ՀՀ ՊՆ Լոռու մարզի զինկոմիսարիատ չհայտնելու դրվագով Ա.Տ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և մեղավորությունը:

2. Անմիջական համակարգման ոլորտում գտնվող ծառայողի կողմից կատարված աշխատանքները չվերահսկելու դրվագով Մ.Փ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և մեղավորությունը:

3. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*
Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ՀԿԳ քննիչ Տ.Ղ-ի վերաբերյալ

11 հունիսի 2020թ. ԿՀՈ 21
ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կարգապահական հանձնաժողովը (այսուհետ՝ Կարգապահական հանձնաժողով), ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ՀԿԳ քննիչ, առաջին դասի խորհրդական Տ.Ղ-ի (այսուհետ՝ նաև քննիչ) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության պետ Ա.Վ-ի միջնորդության առթիվ ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում կատարված նախնական ուսումնասիրությամբ պարզվել է, որ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ՀԿԳ քննիչ Տ.Ղ-ն խախտել է ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 20.08.2018թ. թիվ 114-Լ հրամանի 3-րդ գլխի 27-րդ կետի 9-րդ ենթակետի պահանջները:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է Տ.Ղ-ին վերագրվող առերևույթ խախտումն ըստ ստորև նշված դրվագի:

ՀԿԳ քննիչ Տ.Ղ-ն հերթական աշխատանքային քննարկման նպատակով 2020թ. ապրիլի 13-ին ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության պետի աշխատասենյակ է ներկայացել ոչ պատշաճ արտաքին տեսքով՝ կրելով մուգ գույնի ջինսե տաբատ և մուգ գույնի սվիտեր, նման կերպ խախտելով ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 20.08.2018թ. թիվ 114-Լ հրամանի 3-րդ գլխի 27-րդ կետի 9-րդ ենթակետի պահանջները:

Հիշյալ առերևույթ կարգապահական խախտման վերաբերյալ Տ.Ղ-ն Կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ հայտնեց, որ 13.04.2020թ. իր կողմից Երևան քաղաքի քննչական վարչության պետի աշխատասենյակ աշխատանքային քննարկմանը ոչ պատշաճ արտաքին տեսքով է ներկայացել, որն ունեցել է օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառներ: Այդ օրվան նախորդել են մի շարք հանգամանքներ, որոնք էլ պատճառ են հանդիսացել իր ոչ պատշաճ հագնվելուն: Այսպես՝ դրան նախորդող օրերին առատ տեղումների պատճառով, հաշվի առնելով շենքի վթարային վիճակը և այն, որ իր աշխատասենյակը գտնվում է երրորդ՝ վերջին հարկում, առաստաղը վնասվել էր և սենյակում անձրևաջուր էր թափվում: Քանի որ ողջ գույքը մնացել էր անձրևաջրի ու առաստաղից պոկված գաջի և փոշու մեջ, ուստի բաժնի պետի թույլտվությամբ իջել է երկրորդ հարկ ու ժամանակավոր զբաղեցրել բաժնի պետի տեղակալի ազատ աշխատասենյակը: Սակայն 10.04.2020թ. բաժնի պետի տեղակալի պաշտոնը համալրվել է և պետք է ազատեր աշխատասենյակն ու իր աշխատասենյակը, ինչ չափով որ հնարավոր է, կարգի բերեր՝ բնականոն աշխատանքը կազմակերպելու համար: Մինչև շաբաթ օրն ուշ գիշեր մնացել է աշխատավայրում ու զբաղվել այդ գործով: Կիրակի օրը՝ 12.04.2020թ., հաշվի առնելով, որ այդ օրը ոչ աշխատանքային օր է ու քրեական գործով պլանավորված էր կատարել առերես հարցաքննություն, քննչական գործողության կատարման համար պայմաններ ստեղծելու նպատակով օգտագործել է ազատ ժամանակն ու աշխատասենյակը հնարավորին չափ կարգի բերել: Քանի որ այդ օրը շենքում հավաքարար չի եղել, ուստի բոլոր աշխատանքներն ին-

քը պետք է կատարեր, իսկ համազգեստով կամ այլ պաշտոնական հագուստով հնարավոր չէր լինելու այդ ամենը կազմակերպել, ուստի աշխատավայր է եկել ազատ ոճի հագուստներով: Սակայն, այդ օրը չի կարողացել աշխատանքներն ավարտին հասցնել ու որոշ աշխատանքներ անկատար են մնացել, ուստի ստիպված երկուշաբթի օրը նույն հագուստով է ներկայացել աշխատանքի՝ նպատակ ունենալով դրանք ավարտել:

Հենց այդ օրն էլ՝ առավոտյան, Երևան քաղաքի քննչական վարչության պետի կողմից անհապաղ կանչվել է ԵՔՔՎ՝ իր կողմից քննվող քրեական գործով զեկուցման ու հաշվի առնելով գործի հնչեղությունը և հրատապ ներկայանալու պահանջը, չի կարողացել փոխել հագուստը և փաստացի ներկայացել է ոչ պատշաճ արտաքին տեսքով՝ հագին եղել է մուգ գույնի ջինսե տաբատ և մուգ գույնի սվիտեր:

Հավելել է նաև, որ նախկինում նմանատիպ դեպքեր չեն եղել:

ՈՒսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ՀԿԳ քննիչ Տ. Ղ-ն խախտել է «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի՝ չի պահպանել ծառայողական կարգապահությունը, ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 20.08.2018թ. թիվ 114-Լ հրամանի 3-րդ գլխի 27-րդ կետի 9-րդ ենթակետի պահանջները:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ հիշյալ դրվագով Տ.Ղ-ի արարքում առերևույթ առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 2-րդ ենթակետով և 48-50-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀԿԳ քննիչ Տ.Ղ-ի կողմից հերթական աշխատանքային քննարկման նպատակով 2020թ. ապրիլի 13-ին ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության պետի աշխատասենյակ ոչ պատշաճ արտաքին տեսքով ներկայանալու դրվագով Տ.Ղ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրանց մեղավորությունը:

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*
Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Ա.Ս-ի վերաբերյալ

11 հունիսի 2020թ. ԿՀՈ 22
ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի (այսուհետ Կոմիտե) կարգապահական հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Կարգապահական հանձնաժողովը), ՀՀ քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Ա.Ս-ի (այսուհետ նաև՝ քննիչ) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրությունների նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Նախնական ուսումնասիրության առիթ է հանդիսացել ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչության պետ Հ.Հ-ի միջնորդությունը՝ քննիչ Ա.Ս-ի կողմից ծառայողական պարտականությունները կատարելիս օրենքի և ներքին իրավական ակտերի խախտումներ թույլ տալու վերաբերյալ:

ՀՀ քննչական կոմիտեի նախագահը քննիչ Ա.Ս-նի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու համար Կարգապահական հանձնաժողովին միջնորդություն է հարուցել օրենքի և ներքին իրավական ակտերի առերևույթ խախտումներ թույլ տալու վերաբերյալ, ըստ ստորև նշված դրվագի.

Քննիչ Ա.Ս-ն 2020թ. ապրիլի 23-ին իր նկատմամբ իրականացվող նախնական ուսումնասիրության շրջանակներում բացատրու-

թյուն տալու նպատակով է ներկայացել ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչություն սև գույնի սվիտրով, այսինքն՝ աշխատավայրից դուրս ծառայողական պարտականությունները կատարելիս չի պահպանել «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ներքին կարգապահական կանոնները հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 20.08.2018թ. թիվ 114-Լ հրամանով հաստատված հավելվածի 3-րդ գլխի 27-րդ կետի 9-րդ ենթակետի և 16.04.2020թ. թիվ 71-Լ հանձնարարականի 1-ին կետի 2-րդ ենթակետի պահանջները:

Հիշյալ դրվագով առերևույթ կարգապահական խախտման վերաբերյալ քննիչ Ա.Ս-ն Կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ ըստ էության չընդունեց վերագրվող խախտումներ՝ հավելելով, որ 23.04.2020թ. ժամը 17:00-ի սահմաններում իր անձնական օգտագործման ավտոմեքենայով՝ վերոհիշյալ հրամանի և հանձնարարականի պահանջներին համապատասխան՝ մուգ գույնի անդրավարտիք-պիջակով, սպիտակ գույնի վերնաշապիկով և փողկապով ուղևորվել է քաղաք Երևան՝ նախնական ուսումնասիրության շրջանակներում բացատրություն տալու նպատակով: Երբ հասել է Երևան քաղաքի Պ.Սևակի փողոց և այնտեղ մեքենան կայածնել ու իջել, այդ ժամանակ համընթաց երթևեկի մեքենան ջրափոսի վրայով անցնելիս՝ ջրափոսի կեղտաջուրը շփել է իր վրա, որի հետևանքով իր հագին եղած սպիտակ վերնաշապիկն ամբողջությամբ թրջվել է և չաղտոտել, որից հետո, նման կերպ ՀՀ ՔԿ ՆԱ վարչության քննիչի մոտ չբարձրանալու համար, փոխել է վերնաշապիկը և հագել իր մեքենայի մեջ գտնվող սև գույնի սվիտերը՝ հաշվի առնելով նաև, որ Հրազդան քաղաքից էր եկել և նպատակահարմար չէր այդքան ճանապարհը հետ վերադառնալը, ուստի, նշված կերպ ներկայացել է քննիչի մոտ: Հաշվի է առել նաև «ՀՀ-ում արտակարգ դրությամբ պայմանավորված ՀՀ քննչական կոմիտեում ծառայության կազմակերպման վերաբերյալ» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.03.2020թ., թիվ 42-Լ հրամանի պահանջները, համաձայն որի՝ ՀՀ ՔԿ ծառայողների և դեպարտամենտի աշխատակիցների աշխատա-

ժամանակը սահմանափակվել է ժամը 10:00-ից մինչև ժամը 16:00-ն, իսկ ՀՀ ՔԿ նախագահի 20.08.2018թ. թիվ 114-Լ հրամանով սահմանված հագուստին ներկայացվող պահանջները վերաբերում են աշխատավայրում, ինչպես նաև՝ աշխատավայրից դուրս ծառայողական պարտականությունները կատարելուն, ուստի, նման հագուստով՝ պիջակով, անդրավարտիքով և սև գույնի սվիտրով է ներկայացել ՀՀ ՔԿ ՆԱ վարչություն:

Ուսումնասիրելով նյութերը, լսելով Ա.Ս-ին, Կարգապահական հանձնաժողովը, պարզեց, որ քննիչ Ա.Ս-ն խախտել է «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի՝ չի պահպանել ծառայողական կարգապահությունը, «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ներքին կարգապահական կանոնները հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 20.08.2018թ. թիվ 114-Լ հրամանով հաստատված հավելվածի 3-րդ գլխի 27-րդ կետի 9-րդ ենթակետի և 16.04.2020թ. թիվ 71-Լ հանձնարարականի 1-ին կետի 2-րդ ենթակետի՝ ծառայողի հագուստին ներկայացվող պահանջները: Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ քննիչ Ա.Ս-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով, 48-50-րդ կետերով,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. 2020թ. ապրիլի 23-ին՝ աշխատավայրից դուրս ծառայողական պարտականությունները կատարելիս «Հայաստանի Հանրապետութ-

յան քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ներքին կարգապահական կանոնները հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 20.08.2018թ. թիվ 114-Լ հրամանով հաստատված հավելվածի 3-րդ գլխի 27-րդ կետի 9-րդ ենթակետի և 16.04.2020թ. թիվ 71-Լ հանձնարարականի 1-ին կետի 2-րդ ենթակետի՝ ծառայողի հագուստին ներկայացվող պահանջները չպահպանելու և Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքով նախատեսված պարտականությունները ոչ պատշաճ կատարելու փաստով ՀՀ քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Ա.Ս-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*
Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Դ.Դ-ի վերաբերյալ

23 հունիսի 2020թ. ԿՀՈ 23
ք.Երևան

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի (այսուհետ Կոմիտե) կարգապահական հանձնաժողովը (այսուհետ՝ Կարգապահական հանձնաժողով), Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Դ.Դ-ի (այսուհետ նաև՝ քննիչ) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի տեղակալի միջնորդության առթիվ կատարված նախնական ուսումնասիրությամբ պարզվել է, որ Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Դ.Դ-ն 2019թ. հերթական արձակուրդի ընթացքում՝ 2019թ. հոկտեմբերի 6-ից մինչև հոկտեմբերի 17-ը գտնվել է Եգիպտոսի Արաբական Հանրապետության Շարմ էլ Շեյխ քաղաքում և հոկտեմ-

բերի 11-ին, անձնական «Ֆեյսբուք» սոցիալական կայքում տեղադրել է իր լուսանկարը՝ առանց վերնաշապիկի, կիսատաբատով՝ համապատասխան գրառմամբ:

Իր գործողություններով Դ.Դ-ն առերևույթ չի կատարել «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված իր պարտականությունները և խախտել է Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 2018թ. օգոստոսի 20-ի «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ներքին կարգապահական կանոնները հաստատելու մասին» թիվ 114-Լ հրամանով հաստատված հավելվածի 28-րդ կետի 1-ին ենթակետի և նույն կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերության պահանջները, այն է՝ չի պահպանել բարոյականության և էթիկայի համընդհանուր նորմերը, հրապարակել է անպարկեշտ /էրոտիկ, կիսամերկ /լուսանկար՝ համապատասխան գրառմամբ:

Հիշյալ առերևույթ կարգապահական խախտման վերաբերյալ Դ.Դ-ն Կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ նշեց, որ գտնվել է արձակուրդի մեջ, ծովափում և իր անձնական սոցիալական կայքում նման նկար է հրապարակել, որը մնացել է շատ կարճ ժամանակ շուրջ 1 ժամ, որից հետո այն հեռացրել է: Գիտակցել է, որ որպես Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ծառայող նպատակահարմար է իր անձնական էջում աշխատանքային գործունեության հետ կապված նկարներ տեղադրի, այդ պատճառով 1 ժամ անց հեռացրել է: Հետագայում վերոգրյալի կապակցությամբ զեկուցագիր է ներկայացրել ղեկավարությանը:

Արդյունքում խախտվել է «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 2018թ. օգոստոսի 20-ի «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ներքին կարգապահական կանոնները հաստատելու մասին» թիվ 114-Լ հրամանով

հաստատված հավելվածի 28-րդ կետի 1-ին ենթակետի և նույն կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերության պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 2-րդ ենթակետով և 48-50-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Ֆեյսբուք» սոցիալական կայքում առանց վերնաշապիկի, կիսատաբատով՝ համապատասխան գրառմամբ լուսանկար տեղադրելու դրվագով Դ.Դ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և մեղավորությունը:

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*
Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Մ.Մ-ի վերաբերյալ

23 հունիսի 2020թ. ԿՀՈ 24
ք.Երևան

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կարգապահական հանձնաժողովը (այսուհետ՝ Կարգապահական հանձնաժողով), Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Մ.Մ-ի (այսուհետ՝ նաև քննիչ), հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության Հայաստանի Հանրապետության ՀՔԾ մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության ավագ դատախազ Հ.Պ-ի միջնորդության առթիվ կատարված նախնական ուսումնասիրությամբ հիմնավորվել է, որ քննիչ Մ.Մ-ն վարույթում քննված թիվ 18107619 քրեական գործով նախաքննության ընթացքում իր լիազորություններն իրականացնելիս խախտել է քրեադատավարական օրենքի պահանջները:

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահը քննիչ Մ.Մ-ի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու համար Կարգապահական հանձնաժողովին միջնորդություն է ներ-

կայացրել օրենքի առերևույթ խախտում թույլ տալու վերաբերյալ, ըստ ստորև նշված դրվագի.

Քննիչ Մ.Մ-ն վարույթում քննված թիվ 18107619 քրեական գործով նախաքննության ընթացքում, դեպքի հաջորդ օրը՝ 23.06.2019թ. Գյումրի քաղաքի Պ.Սևակի փողոցի 6-րդ հասցեում գործող <<Red Rose 96>> ծաղկի սրահի դիմացի հատվածում կատարել է դեպքի վայրի զննություն և արձանագրել, որ դեպքը տեղի է ունեցել հիշյալ ծաղկի սրահի դիմացի հատվածում, սակայն, գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցառումները ձեռնարկելու պարտավորություն կրելով՝ դեպքը տեսանկարահանած սարքեր հայտնաբերելու ուղղությամբ միջոցներ չի ձեռնարկել, մասնավորապես՝ քրեական գործով առանցքային նշանակություն ունեցող և դեպքի հանգամանքներն առավել օբյեկտիվ ներկայացնող փաստական տվյալը՝ հիշյալ ծաղկի սրահի ձախակողմյան մուտքի դռան անմիջապես վերևի հատվածում, ակնհայտ, անզեն աչքով տեսանելի տեղադրված տեսանկարահանող սարքի առկայությունը չի արձանագրել և դրա տեսագրությունները պատշաճ դատավարական ընթացակարգի շրջանակներում չի վերցրել, ինչը կարող էր հանգեցնել հիշյալ ապացույցի կորստի, փոխարենը՝ դեպքը տեսանկարահանած սարքեր հայտնաբերելու ուղղությամբ հետաքննության մարմնին հանձնարարություն է տվել դեպքից շուրջ 20 օր անց, այն ժամանակ, երբ արդեն իսկ հիշյալ ծաղկի սրահում տեղադրված տեսախցիկի տեսագրություններն արդեն պահպանված չեն եղել, ինչով իսկ քննիչը խախտել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

Կարգապահական հանձնաժողովի նիստին քննիչ Մ.Մ-ն չէր ներկայացել և 23.06.2020թ. դիմում էր ներկայացրել Կարգապահական հանձնաժողովին, որով հայտնել է, որ ընդունում է իր թերացումը՝ խնդրելով նիստն անցկացնել առանց իր մասնակցության:

Ուսումնասիրելով նյութերը, լսելով զեկուցողին, Կարգապահական հանձնաժողովը, պարզեց, որ քննիչի կողմից թույլ է տրվել կար-

գապահական խախտում: Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ քննիչ Մ.Մ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 31-րդ հոդվածի 9-րդ մասով, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 2-րդ ենթակետերով, 48-50-րդ կետերով,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Թիվ 18107619 քրեական գործով, 23.06.2019թ. Գյումրի քաղաքի Պ.Սևակի փողոցի 6-րդ հասցեում գործող <<Red Rose 96>> ծաղկի սրահի դիմացի հատվածում կատարած դեպքի վայրի զննությամբ դեպքը տեսանկարահանած սարքեր հայտնաբերելու ուղղությամբ միջոցներ չձեռնարկելու՝ քրեական գործով առանցքային նշանակություն ունեցող և դեպքի հանգամանքներն առավել օբյեկտիվ ներկայացնող փաստական տվյալը՝ հիշյալ ծաղկի սրահի ձախակողմյան մուտքի դռան անմիջապես վերևի հատվածում՝ տեսանելի վայրում, տեղադրված տեսանկարահանող սարքի առկայությունը չարձանագրելու և դրա տեսագրությունները պատշաճ դատավարական ընթացակարգի շրջանակներում չվերցնելու փաստով Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Մ.Մ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*
Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի քննիչներ՝ Վ.Գ-ի, Վ.Զ-ի, Ա.Լ-ի և նույն քննչական բաժնի պետի տեղակալ Հ.Մ-ի վերաբերյալ

31 հուլիսի 2020թ. ԿՀՈ 25
ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կարգապահական հանձնաժողովը (այսուհետ՝ Կարգապահական հանձնաժողով), ՀՀ ՔԿ Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի քննիչներ Վ.Գ-ի, Վ.Զ-ի, Ա.Լ-ի (այսուհետ՝ նաև քննիչ), և նույն քննչական բաժնի պետի տեղակալ Հ.Մ-ի (այսուհետ՝ նաև վերադաս), նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով Կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը հաշվի առնելով, որ ներկայացված բոլոր միջնորդությունները փոխկապակցված են միմյանց հետ և վերաբերում են Կոմիտեի միևնույն ծառայողներին, միջնորդությունները միավորել և քննարկել է մեկ վարույթում:

1. Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազության դատախազներ՝ Գ.Ա-ի, Հ.Ս-ի, Բ.Ղ-ի, Ա.Վ-ի միջնորդությունների, Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազ Ս.Խ-ի գրության և Կոմիտեի ներքին ան-

վտանգության վարչության պետի զեկուցագրի առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի պետի տեղակալ Հ.Մանուկյանը և նույն բաժնի քննիչ Վ.Գասպարյանը՝ վերջինիս վարույթում քննված թիվ 14872119, 14129819, 14122819, 14877819, 14953819, 14877819, 14975719 և 14986119 քրեական գործերով նախաքննության ընթացքում իրենց լիազորություններն իրականացնելիս կոպիտ կերպով խախտել են քրեադատավարական օրենքի պահանջները:

Այսպես՝

1.1 Քննիչ Վ.Գ-ն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 324-րդ հոդվածի 1-ին մասով հարուցված և վարույթում քննված թիվ 14872119 քրեական գործով 23.11.2019թ. որոշում է կայացրել քրեական գործով վարույթը կասեցնելու մասին, սակայն, առանց իրավաչափ նպատակի, օրենքով նախատեսված դատավարական ժամկետները խախտելով, որոշման պատճենը 24 ժամվա ընթացքում չի ուղարկել դատախազին, այլ՝ ուղարկել է միայն 10 օր անց՝ 03.12.2019թ-ին, ինչով իսկ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 23-րդ կետի պահանջը:

1.2 Քննիչ Վ.Գ-ն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով հարուցված և վարույթում քննված թիվ 14129819 քրեական գործով 23.11.2019թ. որոշում է կայացրել երկու անձի նկատմամբ որպես մեղադրյալ ներգրավելու մասին, սակայն անտեսելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 202-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները, որոշման պատճենները 24 ժամվա ընթացքում չի ուղարկել դատախազին: Բացի այդ, չպահպանելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 259-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, հետախուզում հայտարարելու մասին որոշումները սահմանված ժամկետներում չի ուղարկել հետաքննության մարմնին:

-Նույն քրեական գործով քննիչ Վ.Գ-ն որոշում չի կայացրել Բ.Զ-ին որպես տուժող ճանաչելու մասին, նրան չի պարզաբանել տուժողի դատավարական կարգավիճակից բխող իրավունքներն ու պարտա-

կանությունները և որպես տուժող չի հարցաքննել, անհիմն կերպով զրկելով վերջինիս՝ իր իրավունքները իրացնելուց, ինչով իսկ խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 15-րդ կետի, 58-59-րդ հոդվածների պահանջները: Բացի այդ, շորթման հատկանիշներով հարուցելով թիվ 14129819 քրեական գործը, որոշման պատճենը չի ուղարկել հանցագործության մասին հաղորդում տված անձին, ինչով իսկ խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջը:

Իր հերթին, քննիչ Վ.Գ-ի անմիջական վերադաս, Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի պետի տեղակալ Հ.Մ-ն նույն քրեական գործով անտեսելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով իրեն վերապահված լիազորությունը՝ պատշաճ հսկողություն չի իրականացրել ենթակա քննիչի վարույթում գտնվող քրեական գործով քննչական գործողությունը ժամանակին կատարելու նկատմամբ՝ /տուժողի հարցաքննություն/:

1.3 Քննիչ Վ.Գ-ն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետի հատկանիշներով հարուցված և վարույթում քննված թիվ 14122819 քրեական գործով խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 188[1] հոդվածի 5-րդ մասի պահանջը, 2019 թվականի նոյեմբերի 26-ին զննել է հանցագործության դեպքի վայրից վերցված տեսանկարահանող սարքերի տեսագրությունները, այսինքն՝ քննչական գործողությունը կատարել է սահմանված կարգի էական խախտմամբ՝ առանց ընթերակաների:

1.4 Քննիչ Վ.Գ-ն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով հարուցված և վարույթում քննված թիվ 14877819 քրեական գործով խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 28-րդ կետի պահանջները՝ 2019 թվականի նոյեմբերի 22-ին որոշում է կայացրել քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին, սակայն որոշման պատճենը 24 ժամվա ընթացքում չի ուղարկել դատախազին:

-Նույն քրեական գործով 2019 թվականի նոյեմբերի 20-ին հարցաքննել է մեղադրյալ Վ.Պ-ին պարզված նոր հանգամանքների վերաբերյալ, որից հետո 2019 թվական նոյեմբերի 21-ին որոշում է կայացրել վերջինիս ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով որպես մեղադրյալ ներգրավելու և մեղադրանք առաջադրելու մասին, սակայն Վ.Պ-ին մեղադրանք առաջադրելուց հետո՝ անհապաղ, բայց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում չի հարցաքննել առաջադրված մեղադրանքի էության, ինչպես նաև՝ գործի համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների վերաբերյալ՝ խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 212-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները:

- Նույն քրեական գործով քննիչի կողմից առհասարակ չի արձանագրվել մեղադրյալի կողմից պաշտպան ունենալու ցանկության փաստը, մասնավորապես՝ արձանագրություն չի կազմվել պաշտպան ունենալու կամ պաշտպանից հրաժարվելու վերաբերյալ, ինչի արդյունքում քննիչի կողմից խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները:

- Բացի այդ, Վ.Պ-ին և Ռ.Ա-ին որպես մեղադրյալ ներգրավելուց հետո, դատավարական ղեկավարում իրականացնող դատախազին չի ուղարկել նշված որոշման օրինակները, ինչի արդյունքում խախտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 14-րդ կետի և 202-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները:

- Քննիչն ավարտելով թիվ 14877819 քրեական գործով նախաքննությունը՝ քրեական գործի նյութերը չի ծանոթացրել տուժողի ներկայացուցչին՝ հնարավորություն չի տրվել գործի նյութերին ծանոթանալու իր իրավունքն իրացնելու մինչև նախաքննության ավարտը, ինչով իսկ խախտվել են նրա իրավունքները: Արդյունքում քննիչի կողմից չի պահպանվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 262-րդ հոդվածի, ՀՀ սահմանադրական դատարանի 2017 թվականի մայիսի 30-ի թիվ ՍԴՈ-1372, ՍԴՈ-1008 որոշման պահանջները:

1.5 Քննիչ Վ.Գ-ն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասին հատկանիշներով հարուցված և վարույթում քննված թիվ

14953819 քրեական գործով 2019 թվականի դեկտեմբերի 15-ին որոշում է կայացրել քրեական գործի վարույթը կասեցնելու մասին և միայն դեկտեմբերի 23-ին է որոշումն ուղարկել վարչական շրջանների դատախազություն՝ որոշման օրինականությունը ստուգելու համար:

- Բացի այդ, դատավարական ղեկավարում իրականացնող դատախազի կողմից 2019 թվականի դեկտեմբերի 25-ին քննիչից գրավոր պահանջվել է քրեական գործը, սակայն մինչ 2020 թվականի հունվարի 10-ը, քրեական գործն չի ուղարկվել դատախազություն: Արդյունքում քննիչի կողմից խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 23-րդ կետի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված պահանջները:

1.6 Քննիչ Վ.Գ-ն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով հարուցված և վարույթում քննված թիվ 14877819 քրեական գործով խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 264-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը՝ 13.12.2019թ. քրեական գործով կարճված վարույթի վերսկսման մասին մեղադրյալին և տուժողի ներկայացուցչին գրավոր չի տեղեկացրել:

1.7 Քննիչ Վ.Գ-ն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով հարուցված և վարույթում քննված թիվ 14975719 քրեական գործով ընդգրկված լինելով քննչական խմբում, կատարել է իր լիազորություններից չբխող գործողություններ՝ իրեն վերագրվելով քննչական խմբի ղեկավարի լիազորություններ, մասնավորապես՝ որոշում է կայացրել նախաքննության ժամկետը երկարացնելու միջնորդություն հարուցելու մասին, ինչով իսկ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի, 195-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները:

Իր հերթին, նույն քրեական գործով, Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի պետի տեղակալ Հ.Մ-ն հանդիսանալով քննչական խմբի ղեկավար պատշաճ չի կազմակերպել և ղեկավարել

քննչական խմբում ընդգրկված քննիչների գործողությունները, ինչի արդյունքում խախտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 194, 195-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերի պահանջները: 1.8 Քննիչ Վ.Գ-ն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցված և վարույթում քննվող թիվ 14986119 քրեական գործով խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 102-րդ, 199-րդ հոդվածների պահանջները: Մասնավորապես՝ մեղադրյալ Գ.Ս-ն 06.02.2020թ. դիմել է վարույթն իրականացնող մարմնին՝ խնդրելով 7 օրով հանել իր նկատմամբ դրված երկրից դուրս գալու արգելքը, որպեսզի կարողանա մեկնել ՌԴ Մոսկվա քաղաք վատառողջ որդուն՝ Ա. Ս-ին տեսակցելու: Վերջինս ներկայացրել է նաև որդու հիվանդությունը հիմնավորող փաստաթղթերի պատճենները: Նման պայմաններում քննիչը մեղադրյալի դիմումը չդիտարկելով որպես միջնորդություն՝ 10.02.2020թ. գրությամբ Գ.Ս-ին հայտնել է, որ նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը, քրեական գործի նախաքննությունը շարունակվում է, ուստի այդ փուլում իրավասու չի վերացնելու նրա նկատմամբ կիրառված խափանման միջոցը: Քննիչի կողմից միջնորդություն մերժելու մասին որոշում չի կայացվել և Գ.Ս-ն զրկվել է այն բողոքարկելու իր իրավունքից: Բացի այդ, մեղադրյալը քննիչից չի խնդրել վերացնել իր նկատմամբ կիրառված խափանման միջոցը, այլ խնդրել է վերացնել երկիրը լքելու հետ կապված դրված արգելքը, սակայն քննիչի կողմից նշված հանգամանքի վերաբերյալ պատասխան գրությամբ ոչինչ չի նշվել: Արդյունքում խախտվել են մեղադրյալի իրավունքները, առկա են եղել բոլոր հիմքերը վերջինիս միջնորդությունը բավարարելու և 7 օրով մեկնումը թույլատրելու համար, վերջինիս կողմից բերված հիմնավորումները առավել քան հիմնավոր են եղել, քանի որ նրա որդին իրականում գտնվել է վերակենդանացման բաժանմունքում և քննիչի կողմից ներկայացված միջնորդությունը մերժելուց հետո օրեր անց մահացել է:

Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը որոշում է կայացրել քննիչ Վ.Գ-ի նկատմամբ հարուցված և երկարաձգված կարգապա-

հական վարույթը դադարեցնելու մասին, հաշվի առնելով, որ վերջինս ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 29.07.2020թ. թիվ 604-Ա հրամանով իր գրավոր դիմումի համաձայն ազատվել է զբաղեցրած պաշտոնից:

Հիշյալ առերևույթ խախտումների վերաբերյալ նախկին քննիչ Վ.Գ-ի անմիջական վերադաս, Կոմիտեի ԵՔՔՎ Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի պետի տեղակալ Հ.Մ-ն Կոմիտեի կարգապահական հանձնաժողովի տված բացատրությամբ ընդունեց իրեն վերագրվող բոլոր խախտումները:

ՈՒսումնասիրելով նյութերը, Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննչական բաժնի պետի տեղակալ Հ.Մ-ի արարքներում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը, մասնավորապես թիվ 14129819 քրեական գործով խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջները, իսկ թիվ 14975719 քրեական գործով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 194, 195-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերի պահանջները:

2. Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազի տեղակալ Կ.Մ-ի միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի քննիչներ՝ Վ.Զ-ի և Ա.Լ-ի վարույթում քննված թիվ 14131919 քրեական գործով նախաքննության ընթացքում վերջիններս իրենց լիազորություններն իրականացնելիս թույլ են տվել քրեադատավարական օրենքի կոպիտ խախտումներ.

Այսպես՝

քննիչների կողմից խախտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 282-րդ հոդվածի 3- րդ մասի, 283-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջները: Մասնավորապես՝ քննիչ Ա.Լ-ն 2019 թվականի դեկտեմբերի 16-ին բնակարանի և ավտոմեքենայի խուզարկություններ կատարելու երկու միջնորդություններ է ներկայացրել դատարան, որոնք դատարանի կողմից բավարարվել են, իսկ Վ.Զ-ն 2019 թվակա-

նի դեկտեմբերի 24-ին միջնորդություն է ներկայացրել դատարան՝ հեռախոսազանգերի վերծանումները ստանալու թույլտվության համար, որը նույնպես բավարարվել է, սակայն դատավարական ղեկավարում իրականացնող դատախազին չեն ուղարկել ինչպես նշված միջնորդությունները, այնպես էլ դատարանի որոշումները, ինչով դատախազը առանց իրավաչափ նպատակի զրկվել է իր լիազորությունները իրականացնելու հնարավորությունից:

Հիշյալ առերևույթ խախտումների վերաբերյալ քննիչ Ա.Լ-ն Կոմիտեի կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ ընդունեց իրեն վերագրվող առերևույթ խախտումները նշելով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում տեղի ունեցած փոփոխությունների մասին տեղեկացված չի եղել, միայն 2019թ. դեկտեմբերի 19-ին քննչական բաժնում տեղի ունեցած օպերատիվ խորհրդակցությունից հետո է տեղեկացել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում վերը հիշատակված հոդվածների փոփոխությունները 2019թ. դեկտեմբերի 9-ին ուժի մեջ մտնելու մասին:

Իր հերթին, քննիչ Վ.Զ-ն իրեն վերագրվող առերևույթ խախտման վերաբերյալ հայտնեց, որ ինքը նույնպես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում վերը հիշատակված հոդվածների փոփոխությունների, ուժի մեջ մտնելու մասին տեղեկացել է օպերատիվ խորհրդակցության ընթացքում, որից հետո՝ 2019 թվականի դեկտեմբերի 24-ին միջնորդություն է ներկայացրել դատարան՝ հեռախոսազանգերի վերծանումները ստանալու թույլտվության համար, որը բավարարվել է, սակայն ծանրաբեռնվածության պատճառով դատավարական ղեկավարում իրականացնող դատախազին չի ուղարկել ինչպես միջնորդությունը, այնպես էլ դատարանի որոշումը:

ՈՒսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչ Ա.Լ-ի գործողություններում առկա է կարգապահական խախտման փաստը, սակայն բացակայում է նրա մեղավորությունը, քանի որ վերջինս միջնորդությունները ներկայացրել է 2019թ. դեկտեմբերի 16-ին, իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում տեղի ունեցած փոփոխությունների ուժի մեջ մտնելու մասին տե-

ղեկացվել է միայն 2019թ. դեկտեմբերի 19-ին՝ քննչական բաժնում հրավիրված օպերատիվ խորհրդակցության ընթացքում: Բացի այդ, «Առլիս» տեղեկատվական համակարգում ևս հաճախ նույն օրը տեղադրված չի լինում արդեն իսկ ուժի մեջ մտած օրենսդրական փոփոխությունները և քննիչը ֆիզիկապես հնարավորություն չի ունենում իրազեկվելու փոփոխությունների մասին: Վերը նկարագրվածի պայմաններում թեև առկա է կարգապահական խախտման փաստը, որը կոպիտ համարվել չի կարող, սակայն բացակայում է քննիչի մեղավորությունը:

Ինչ վերաբերում է քննիչ Վ.Զ-ի գործողություններին, ապա Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ նրա արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և մեղավորությունը, քանի որ քննչական բաժնում հրավիրված օպերատիվ խորհրդակցության ընթացքում անձամբ տեղեկացվել է կատարված փոփոխությունների ուժի մեջ մտնելու մասին, սակայն դրանից 5 օր անց խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 282-րդ հոդվածի 3-րդ մասի և 283-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջները, այսինքն՝ պատշաճ իրազեկված լինելով փոփոխությունների մասին՝ թույլ է տվել կարգապահական խախտում, որպիսի պայմաններում նրա արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

3. Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազության ավագ դատախազ Ա.Ս-ի միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ Վ.Զ-ն և նրա անմիջական վերադաս, նույն քննչական բաժնի պետի տեղակալ Հ.Մ-ն թիվ 14895919 քրեական գործով նախաքննության ընթացքում իրենց լիազորություններն իրականացնելիս թույլ են տվել քրեադատավարական օրենքի կոպիտ խախտումներ.

Այսպես՝

-քննիչ Վ.Զ-ն 27.12.2019թ. որոշում է կայացրել քրեական գործով վարույթը կասեցնելու մասին, սակայն խախտելով ՀՀ քրեական դա-

տավարության օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները՝ տուժողին պատշաճ ծանուցմամբ անհապաղ չի ուղարկել քրեական գործով վարույթը կասեցնելու մասին որոշումը՝ պարզաբանելով որոշման բողոքարկման կարգը և ժամկետները:

Բացի այդ, խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 260-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը՝ քրեական գործով կասեցված վարույթը վերսկսելու մասին տուժողին չի հաղորդել:

- իր հերթին, քննչական բաժնի պետի տեղակալ Հ.Մ-ն խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջները քննիչին տվել է իր լիազորություններից չբխող ցուցում: Մասնավորապես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի կարգով 2020 թվականի հունվարի 1-ով թվագրված ցուցում է տվել քննիչին՝ քննչական գործողություններ կատարելու մասին: Քննչական բաժնի պետի տեղակալը ցուցումի վերջում նշել է. «Որոշեցի քննիչի քրեական գործի վարույթը կասեցնելու մասին 2019 թվականի դեկտեմբերի 27-ի որոշումը վերացնել և քրեական գործի վարույթը վերսկսել, ձեռնամուխ լինել նախաքննության հետագա կատարմանը», այսինքն՝ իրեն վերագրել է այնպիսի լիազորություններ, որոնց իրավասությամբ օժտված չէ:

Հիշյալ առերևույթ կարգապահական խախտումների վերաբերյալ քննիչ Վ.Զ-ն Կոմիտեի կարգապահական հանձնաժողովի տված բացատրությամբ ընդունեց իրեն վերագրվող կարգապահական խախտումները նշելով, որ եղել է տարեվերջ աշխատել է ծանրաբեռնված, ինչով էլ պայմանավորված թույլ են տրվել խախտումները:

-Իր հերթին, քննիչ Վ.Զ-ի անմիջական վերադաս, Կոմիտեի ԵՔՔՎ Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի պետի տեղակալ Հ.Մ-ն Կոմիտեի կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ ընդունեց իրեն վերագրվող կարգապահական խախտումները նշելով, որ տիրապետում է ՀՀ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածով իրեն վերապահված լիազորություններին, սակայն անուշադրության հետևանքով պայմանավորված թույլ է տվել խախտումներ:

ՈՒսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչ Վ.Զ-ի գործողություններում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը, խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասի, 260-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

Անդրադառնալով Հ.Մ-ի գործողություններին, Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ վերջինիս արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը՝ խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջները՝քննչական բաժնի պետի տեղակալը քննիչին տվել է իր լիազորություններից չբխող ցուցում:

4. Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազության դատախազ Ա.Ս-ի միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Ա.Ս-ն և նրա անմիջական վերադաս, նույն քննչական բաժնի պետի տեղակալ Հ.Մ-ն թիվ 14855319 քրեական գործով նախաքննության ընթացքում իրենց լիազորություններն իրականացնելիս թույլ են տվել քրեադատավարական օրենքի կոպիտ խախտումներ.

Այսպես՝

-ավագ քննիչ Ա.Ս-ն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով հարուցված և վարույթում քննված թիվ 14855319 քրեական գործով 21.01.2020թ. որոշում է կայացրել քրեական գործով վարույթը կասեցնելու մասին, սակայն, որոշման պատճենը 24 ժամվա ընթացքում չի ուղարկել դատախազին և այդ մասին գրավոր չի տեղեկացրել տուժող Ս.Ա-ին՝ չբացատրելով բողոքարկման կարգը, ինչով իսկ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 23-րդ կետի և 258-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները:

Իր հերթին, քննչական բաժնի պետի տեղակալ Հ.Մ-ն՝ խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին

մասի 3-րդ կետի պահանջները, քննիչ Ա.Ս-ին տվել է իր լիազորություններից չբխող գրավոր ցուցում: Մասնավորապես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի կարգով 2020թ. հունվարի 24-ով թվագրված ցուցում է տվել քննիչին՝ քննչական գործողություններ կատարելու մասին, ցուցումի վերջում նշելով. «Որոշեցի քննիչի քրեական գործով վարույթը կասեցնելու մասին 2020թ. հունվարի 24-ի որոշումը վերացնել և քրեական գործի վարույթը վերսկսել, ձեռնամուխ լինել նախաքննության հետագա կատարմանը», այսինքն՝ իրեն վերագրել է այնպիսի լիազորություններ, որոնց իրավասությամբ օժտված չէ:

Կոմիտեի ԵՔՔՎ Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Ա.Ս-ի նկատմամբ կարգապահական վարույթ չի հարուցվել, քանի որ նա իր գրավոր դիմումի համաձայն ազատվել է զբաղեցրած պաշտոնից:

Ինչ վերաբերում է Հ.Մ-ի գործողություններին, ապա վերջինս Կոմիտեի Կարգապահական հանձնաժողովին տվեց նույնաբովանդակ բացատրություն, ինչպիսին տվել էր թիվ 14895919 քրեական գործով:

ՈՒսումնասիրելով նյութերը, Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ Հ.Մ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը՝ խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջները՝ քննչական բաժնի պետի տեղակալը քննիչին տվել է իր լիազորություններից չբխող ցուցում:

5. Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազության դատախազ Վ.Ա-ի միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ Վ. Գ-ն վարույթում քննված թիվ 14102120 քրեական գործով նախաքննության ընթացքում իր լիազորություններն իրականացնելիս կոպիտ խախտել է քրեադատավարական օրենքի պահանջները.

Այսպես.

քննիչ Վ.Գ-ն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով հարուցված և վարույթում քննված թիվ 14102120 քրեական գործով 08.03.2020թ. որոշում է կայացրել քրեական գործով վարույթը կասեցնելու մասին, սակայն, առանց իրավաչափ նպատակի, օրենքով նախատեսված դատավարական ժամկետները խախտելով, որոշման պատճենը 24 ժամվա ընթացքում չի ուղարկել դատախազին և որոշումը պատշաճ ծանուցմամբ անհապաղ չի ուղարկել տուժող կողմին, այլ՝ դատավարական այդ պարտականությունները կատարել է շուրջ 74 օր անց, ինչով իսկ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 23-րդ կետի և 258-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները:

Քննիչ Վ.Գ-ի մասով կարգապահական վարույթը ինչպես նշվեց սույն որոշման մեջ դադարեցվել է, վերջինիս կողմից իր գրավոր դիմումի հիման վրա ՀՀ զբաղեցրած պաշտոնից ազատվելու պատճառաբանությամբ:

6. Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազության դատախազ Վ.Ա-ի միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ ՀՀ ՔԿ ԵՔՔՎ Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի նախկին քննիչ Վ.Գ-ի անմիջական վերադաս, Կոմիտեի ԵՔՔՎ Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի պետի տեղակալ Հ.Մ-ն թիվ 14978119 քրեական գործով նախաքննության ընթացքում, իր լիազորություններն իրականացնելիս թույլ է տվել քրեադատավարական օրենքի կոպիտ խախտում.

Այսպես՝

տևական ժամանակ, շուրջ 2 ամիս 15 օր՝ չի հետևել իրեն անմիջականորեն ենթակա քննիչի վարույթում գտնվող քրեական գործով դատախազի ցուցումները կատարելուն, ինչով իսկ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջները:

Հիշյալ առերևույթ կարգապահական խախտման վերաբերյալ Հ.Մ-ն իր դիրքորոշումն արտահայտել էր Կոմիտեի կարգապահական հանձնաժողովի նախագահին հասցեագրված իր դիմումով, որով ընդունել էր իրեն վերագրվող խախտումը նշելով, որ հնարավորության դեպքում կարգապահական հանձնաժողովի նիստն անցկացնել իր բացակայությամբ:

Ուսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ Հ.Մ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը՝ խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով և 48-50-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, նույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 194-րդ, 195-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերի պահանջները խախտելու դրվագներով Հ.Մ-ի արարքներում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

2. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասի, 260-րդ հոդվածի 3-րդ մասի, 282-րդ հոդվածի 3-րդ մասի, 283-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջները խախտելու դրվագներով Վ.Զ-ի արարքներում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

3. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 282-րդ հոդվածի 3-րդ մասի, 283-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջները խախտելու դրվագներով Ա.Լ.-ի արարքներում առկա է կարգապահական խախտման փաստը, սակայն բացակայում է մեղավորությունը:

4. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*

Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ քննչական կոմիտեի ԶՔԳՎ չորրորդ կայազորային քննչական բաժնի նախկին ՀԿԳ քննիչներ, ներկայում ՀՀ քննչական կոմիտեի ԶՔԳՎ ՀԿԳ քննության վարչության ՀԿԳ քննիչներ՝ Գ.Թ-ի և Ա.Պ-ի վերաբերյալ

31 հուլիսի 2020թ. ԿՀՈ 26
ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կարգապահական հանձնաժողովը (այսուհետ՝ Կարգապահական հանձնաժողով), Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության չորրորդ կայազորային քննչական բաժնի նախկին ՀԿԳ քննիչներ, ներկայում Կոմիտեի ԶՔԳՎ ՀԿԳ քննության վարչության ՀԿԳ քննիչներ՝ Գ.Թ-ի և Ա.Պ-ի (այսուհետ՝ նաև քննիչ) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Կոմիտեի նախագահի տեղակալ, ԶՔԳՎ պետ Ա.Կ-ի միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ Կոմիտեի ԶՔԳՎ չորրորդ կայազորային քննչական բաժնի նախկին ՀԿԳ քննիչներ, ներկայում Կոմիտեի ԶՔԳՎ ՀԿԳ քննության վարչության ՀԿԳ քննիչներ՝ Գ.Թ-ի և Ա.Պ-ի վարույթում քննված թիվ 90056418 քրեական գործով նախաքննության ընթացքում, վերջիններս իրենց լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել

են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը:

Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը քննարկել է ՀԿԳ քննիչներ Գ.Թ-ին և Ա.Պ-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագների.

- ՀԿԳ քննիչ Գ.Թ-ին 2019թ. օգոստոսի 26-ին նախաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնող դատախազի կողմից տրվել է ցուցում, որը քննիչի կողմից չի բողոքարկվել և դատախազի առարկայական ցուցումի պահանջները քննիչի կողմից տևական ժամանակ՝ երեք ամսվա ընթացքում կատարվել են խիստ մասնակի, գերակշիռ մասը չի կատարվել, որպիսի պայմաններում Գ.Թ-ն 08.12.2019թ. հեռացվել է քրեական գործով քրեական դատավարությանը մասնակցելուց:

- ՀԿԳ քննիչ Ա.Պ-ի կողմից նախաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնող դատախազների՝ 26.08.2019 և 08.12.2019թթ. ցուցումների պահանջները դարձյալ կատարվել են մասնակի: Բացի այդ, քրեական գործը 12.12.2019թ-ին վարույթ ընդունելուց հետո մինչև 22.01.2020թ. վերջինս որևէ քննչական և դատավարական գործողություն չի կատարվել, իսկ 12.12.2019թ-ից մինչև 30.12.2019թ. առհասարակ որևէ գործողություն չի կատարել, բացառությամբ՝ 26.12.2019թ. նախաքննության ժամկետը երկարացնելու միջնորդության: Ստացվում է, որ 12.12.2019թ-ից մինչև 22.01.2020թ. շուրջ 40 օր, որից 22 աշխատանքային օրվա ընթացքում առանց իրավաչափ նպատակի քննիչի կողմից անհրաժեշտ քննչական գործողություններ չեն կատարվել, այն էլ ցուցումների առկայության պայմաններում, միայն 20.01.2020թ. հանձնարարություն է տրվել հետաքննության մարմնին: Բացի այդ, Ա.Պ-ն ծանուցագիր է ուղարկել գործով վկա Ս. Ս-ին՝ 27.01.2020թ. ժամը 09:30-ին հարցաքննության նպատակով քննչական բաժին ներկայանալու համար, սակայն վերջինս քննչական բաժին չի ներկայացել, նշանակված ժամկետին ներկայանալուն խոչընդոտող հարգելի պատճառների մասին վարույթն իրականացնող մարմնին նախապես չի տեղեկացրել և

նման պայմաններում քննիչի կողմից վերջինիս բերման ենթարկելու որոշում չի կայացվել, այսինքն՝ քրեադատավարական հարկադրանքի այլ միջոցներ չի կիրառվել, ինչով իսկ խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 153-րդ հոդվածի պահանջները: Արդյունքում վարույթն իրականացրած քննիչների կողմից խախտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի, 55-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերի պահանջները:

Հիշյալ առերևույթ կարգապահական խախտումների վերաբերյալ ՀԿԳ քննիչներ՝ Գ.Թ-ն և Ա.Պ-ն իրենց դիրքորոշումները ներկայացրել են Կոմիտեի կարգապահական հանձնաժողովի նախագահին հասցեագրված դիմումներով, որոնցով ընդունել են իրենց վերագրված առերևույթ դատավարական խախտումները և խնդրել են հնարավորության դեպքում նիստն անցկացնել իրենց բացակայությամբ:

ՈՒսումնասիրելով նյութերը, Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչների գործողություններում առկա է կարգապահական խախտման փաստը և նրանց մեղավորությունը, մասնավորապես խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի, 55-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերի, 153-րդ հոդվածի պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 2-րդ ենթակետով և 48-50-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի, 55-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերի պահանջները խախտելու դրվագներով Գ.Թ-ի արարքներում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

2. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի, 55-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերի, 153-րդ հոդվածի պահանջները խախտելու դրվագներով Ա.Պ-ի արարքներում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

3. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*

Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ քննչական կոմիտեի ԶՔԳՎ վերահսկողության վարչության պետի տեղակալ, նախկինում՝ չորրորդ կայազորային քննչական բաժնի պետի տեղակալ Ս.Ս-ի և նույն բաժնի քննիչ Ա.Խ-ի վերաբերյալ

31 հուլիսի 2020թ. ԿՀՈ 27
ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կարգապահական հանձնաժողովը (այսուհետ՝ Կարգապահական հանձնաժողով), Կոմիտեի ԶՔԳՎ վերահսկողության վարչության պետի տեղակալ, նախկինում՝ չորրորդ կայազորային քննչական բաժնի պետի տեղակալ Ս.Ս-ի (այսուհետ՝ նաև անմիջական վերադաս) և նույն բաժնի քննիչ Ա.Խ-ի (այսուհետ՝ նաև քննիչ) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով Կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Կոմիտեի նախագահի տեղակալ, զինվորական քննչական գլխավոր վարչության պետ Ա.Կ-ի միջնորդության առթիվ կատարված նախնական ուսումնասիրությամբ հիմնավորվել է, որ Կոմիտեի ԶՔԳՎ վերահսկողության վարչության պետի տեղակալ, նախկինում՝ չորրորդ կայազորային քննչական բաժնի պետի տեղակալ Ս.Ս-ն և նույն բաժնի քննիչ Ա.Խ-ն վերջինիս վարույթում քննված թիվ 90208518 քրեական գործով նախաքննության ընթացքում իրենց լիազորություններն իրականացնելիս կոպիտ կերպով խախտել են քրեա-

դատավարական օրենքի և ներքին իրավական ակտերի պահանջները:

Կոմիտեի նախագահը քննիչ Ա.Խ-ի և նրա անմիջական վերադաս Ս.Ս-ի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու համար Կոմիտեի կարգապահական հանձնաժողովին միջնորդություն է ներկայացրել օրենքի առերևույթ խախտումներ թույլ տալու վերաբերյալ, ըստ ստորև նշված դրվագների.

1. Քննիչ Ա.Խ-ն 19.11.2019թ. առ 20.01.2020թ. վարույթում քննված թիվ 90208518 քրեական գործով 20.01.2020թ.՝ համարելով, որ քրեական գործով կատարվել են անհրաժեշտ հնարավոր բոլոր դատավարական գործողությունները, որոշում է կայացրել քրեական գործի վարույթը կասեցնելու մասին՝ մեղադրյալի քննությունից թաքնվելու հիմքով, մինչդեռ, գործի արդարացի քննություն իրականացնելու սկզբունքով պայմանավորված գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցառումները ձեռնարկելու պարտավորություն և քննչական ու այլ դատավարական գործողություններն օրինական ու ժամանակին կատարելու համար պատասխանատվություն կրելով՝ մինչ քրեական գործով վարույթի կասեցումը չի պարզել մեղադրյալ Կ.Մ-ի և վկա Գ.Ս-ի կողմից ինչ հեռախոսահամարներ են շահագործվել, այդ կապակցությամբ միջնորդություն չի ներկայացնել դատարան՝ պահանջվող ժամանակահատվածում վերջիններիս հեռախոսահամարների վերանվանումներ թույլտվություն ստանալու համար, չի պարզել մուտքային և ելքային զանգերը, դրանց բաժանորդային տվյալները, հեռախոսահամարները որ ալեհավաք կայանների կողմից են սպասարկվել, լրացուցիչ չի հարցաքննել վկա Խ.Մ-ին՝ իր մտերիմ ընկերների, բարեկամների շրջանում՝ <<RENG ROVER SPORT>> մակնիշի մեքենա շահագործող անձ կա, թե ոչ, ինչպես նաև՝ չի պարզել, թե ովքեր են եղել քրեական գործով տուժող Ս.Գ-ի հետ 09.09.2019թ-ից մինչև սեպտեմբերի 17-ն ընկած ժամանակահատվածում համապատասխան գործարքներ կնքած «Արդշին», «Էվոկա», «Առքա քրեդիդ Ռեփորթինք» ՓԲԸ-ի աշ-

խատակիցները և չի հարցաքննել վերջիններիս, որոշում չի կայացրել օպերատիվ հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին, ինչով իսկ քննիչը կոպտորեն խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի, 31-րդ հոդվածի 4-րդ մասի և 55-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

2. Իր հերթին, քննիչ Ա.Խ-ի անմիջական վերադաս հանդիսացած Ս.Ս-ն, «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 10.06.2015թ. թիվ 55Լ հրամանով հաստատված հավելվածի 14-րդ կետի 2-3-րդ ենթակետերի պահանջների համաձայն՝ չի վերահսկել իր անմիջական համակարգման ոլորտում գտնվող ծառայողի՝ քննիչ Ա.Խ-ի կողմից կատարված աշխատանքները, թույլ տալով նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 2-3-րդ կետերի պահանջների խախտումներ՝ չի հետևել իրեն անմիջականորեն ենթակա քննիչի կողմից վարույթում քննված թիվ 90208518 քրեական գործով քննչական գործողությունները ժամանակին կատարելու նկատմամբ և քննիչին ցուցումներ չի տվել առանձին քննչական գործողություններ կատարելու վերաբերյալ, որպիսի պայմաններում՝ Ս.Ս-ի կողմից օրենսգրքով իրեն վերապահված լիազորությունները ոչ պատշաճ կատարելու արդյունքում՝ անմիջականորեն ենթակա քննիչ Ա.Խ-ն իր պարտականություններում թերացել է և վարույթում քննված թիվ 90208518 քրեական գործով՝ մինչ 20.01.2020թ. քրեական գործով վարույթի կասեցումը, չի պարզել մեղադրյալ Կ.Մ-ի և վկա Գ.Ս-ի կողմից ինչ հեռախոսահամարներ են շահագործվել, այդ կապակցությամբ միջնորդություն չի ներկայացնել դատարան՝ պահանջվող ժամանակահատվածում վերջիններիս հեռախոսահամարների վերանվանումներ թույլտվություն ստանալու համար, չի պարզել մուտքային և ելքային զանգերը, դրանց բաժանորդային տվյալները, հեռախոսահամարները որ ալեհավաք կայանների կողմից են սպասարկվել, լրացուցիչ չի հարցաքննել վկա Խ.Մ-ին՝ իր մտերիմ ընկերների, բարեկամների շրջանում՝ «RENG ROVER SPORT» մակնիշի մեքենա շահագործող անձ կա, թե ոչ, ինչպես նաև՝ չի պար-

զել, թե ովքեր են եղել քրեական գործով տուժող Ս.Գ-ի հետ 09.09.2019թ-ից մինչև սեպտեմբերի 17-ն ընկած ժամանակահատվածում համապատասխան գործարքներ կնքած «Արդշին», «Էվոկա», «Առքա քրեդիդ Ռեփորթինք» ՓԲԸ-ի աշխատակիցների ինքնությունները և չի հարցաքննել վերջիններիս, որոշում չի կայացրել օպերատիվ հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին, ինչով իսկ կոպտորեն խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի, 31-րդ հոդվածի 4-րդ մասի և 55-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

Կոմիտեի կարգապահական հանձնաժողովին նիստին քննիչ Ա.Խ-ն և նրա անմիջական վերադաս Ս.Ս-ն չէին ներկայացել, ներկայացվեց Կոմիտեի կարգապահական հանձնաժողովին հասցեագրված քննիչ Ա.Խ-ի ու նրա անմիջական վերադաս Ս.Ս-ի 31.07.2020թ. դիմումները, որով վերջիններս հայտնել են, որ ընդունում են իրենց կողմից առերևույթ խախտումները՝ խնդրելով նիստն անցկացնել առանց իրենց մասնակցության:

Ուսումնասիրելով նյութերը, լսելով զեկուցողին, Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, պարզեց, որ քննիչի և նրա անմիջական վերադասի կողմից թույլ են տրվել կարգապահական խախտումներ: Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ քննիչ Ա.Խ-ի և նրա անմիջական վերադաս Ս.Ս-ի արարքում առկա են կարգապահական խախտման փաստերը և նրանց մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 2-րդ ենթակետով, 48-50-րդ կետերով,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. 19.11.2019թ-ից առ 20.01.2020թ-ն ընկած ժամանակահատվածում վարույթում քննված թիվ 90208518 քրեական գործով մինչ 20.01.2020թ. քրեական գործով վարույթը կասեցնելու մասին որոշում կայացնելը՝ գործի արդարացի քննություն իրականացնելու սկզբունքով պայմանավորված գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցառումները չձեռնարկելու և ակնհայտ փաստական հիմքերի առկայության պայմաններում՝ համապատասխան քննչական ու դատավարական այլ գործողություններ չկատարելու փաստով ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության չորրորդ կայազորային քննչական բաժնի քննիչ Ա.Խ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

2. Թիվ 90208518 քրեական գործով իրեն անմիջականորեն ենթակա քննիչ Ա.Խ-ի կողմից ակնհայտ փաստական հիմքերի առկայության պայմաններում՝ համապատասխան քննչական գործողություններ կատարելուն չհետևելու և այդպիսիք կատարելու ցուցում չտալու փաստով ՀՀ քննչական կոմիտեի ԶՔԳՎ վերահսկողության վարչության պետի տեղակալ, նախկինում՝ չորրորդ կայազորային քննչական բաժնի պետի տեղակալ Ս.Ս-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

3. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*
Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության ՀԿԳ քննության վարչության ՀԿԳ նախկին քննիչ (ներկայում՝ չորրորդ կայազորային քննչական բաժնի պետի տեղակալ) Հ.Ա-ի և առաջին կայազորային քննչական բաժնի պետի տեղակալ Լ.Պ-ի Վերաբերյալ

31 հուլիսի 2020թ. ԿՀՈ 28
ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կարգապահական հանձնաժողովը (այսուհետ՝ Կարգապահական հանձնաժողով), Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության ՀԿԳ քննության վարչության ՀԿԳ նախկին քննիչ (ներկայում՝ չորրորդ կայազորային քննչական բաժնի պետի տեղակալ) Հ.Ա-ի (այսուհետ նաև՝ քննիչ) և առաջին կայազորային քննչական բաժնի պետի տեղակալ Լ.Պ-ի (այսուհետ նաև՝ քննիչ) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով Կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Կոմիտեի նախագահի տեղակալ, զինվորական քննչական գլխավոր վարչության պետ Ա.Կ-ի միջնորդության առթիվ կատարված նախնական ուսումնասիրությամբ հիմնավորվել է, որ քննիչներ՝ Հ.Ա-ն և Լ.Պ-ն իրենց վարույթում քննված թիվ 17856218 քրեական գործով նախաքննության ընթացքում իրենց լիազորություններն իրականացնելիս խախտել են քրեադատավարական օրենքի պահանջները:

Կոմիտեի նախագահը քննիչներ՝ Հ.Ա-ի և Լ.Պ-ի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու համար Կարգապահական հանձնաժողովին միջնորդություն է ներկայացրել օրենքի առերևույթ խախտումներ թույլ տալու վերաբերյալ, ըստ ստորև նշված դրվագների.

1. Քննիչ Լ.Պ-ն 16.05.2019թ-ից առ 17.07.2019թ. վարույթում քննված թիվ 17856218 քրեական գործով նախաքննության ընթացքում, գործի հանգամանքների բազմակողմանի և լրիվ հետազոտման համար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցառումները ձեռնարկելու պարտավորություն կրելով, նախաքննությունն իրականացրել է անհարկի ձգձգումներով, տևական ժամանակ, առանց իրավաչափ նպատակի, քննչական և դատավարական այլ գործողություններ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում՝ պատշաճ ջանասիրություն չի ցուցաբերել՝ գործի հանգամանքների բազմակողմանի և լրիվ հետազոտման համար, մասնավորապես՝ չի կատարել քրեական գործով ստացված գաղտնալսումների զննություն, ստացված հեռախոսազանգերի վերանվանումներ շուրջ պատշաճ դատավարական ընթացակարգի շրջանակներում չի ծանուցել և հարցաքննության չի կանչել անձանց, վերանվանումներ արդյունքում ստացված տվյալները չի համադրել գործով անցնող մեղադրյալների հեռախոսազանգերի հետ, մի շարք անձանց նկատմամբ չի նշանակել դատաբժշկական փորձաքննություններ, ինչպես նաև՝ դեռևս 23.05."""Դթ. նախաքննության ժամկետը երկարացնելու մասին ներկայացրած միջնորդության պատճառաբանական մասում ի հիմնավորումն դրա նշել է նաև գործի համար էական նշանակություն ունեցող հանգամանքները պարզելու նպատակով մի շարք հարցաքննությունների, զննությունների, առգրավումների և քննչական ու դատավարական այլ գործողությունների կատարման անհրաժեշտության մասին, սակայն, այդպիսիք չի կատարել, ինչով իսկ քննիչը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

2. Քննիչ Հ.Ա-ն 17.07.""""Ոթ-ից առ 01.10.""""Ոթ. վարույթում քննված թիվ 17856218 քրեական գործով նախաքննության ընթացքում, գործի հանգամանքների բազմակողմանի և լրիվ հետազոտման համար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցառումները ձեռնարկելու պարտավորություն կրելով, նախաքննությունն իրականացրել է անհարկի ձգձգումներով, տևական ժամանակ, առանց իրավաչափ նպատակի, քննչական և դատավարական այլ գործողություններ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում՝ պատշաճ ջանասիրություն չի ցուցաբերել՝ գործի հանգամանքների բազմակողմանի և լրիվ հետազոտման համար, մասնավորապես՝ չի կատարել քրեական գործով ստացված գաղտնալսումների զննություն, ստացված հեռախոսազանգերի վերանվանումներ շուրջ պատշաճ դատավարական ընթացակարգի շրջանակներում չի ծանուցել և հարցաքննության չի կանչել անձանց, վերանվանումներ արդյունքում ստացված տվյալները չի համադրել գործով անցնող մեղադրյալների հեռախոսազանգերի հետ, ինչպես նաև՝ դեռևս 23.07.""""Ոթ. նախաքննության ժամկետը երկարացնելու մասին ներկայացրած միջնորդության պատճառաբանական մասում ի հիմնավորումն դրա նշել է նաև գործի համար էական նշանակություն ունեցող հանգամանքները պարզելու նպատակով մի շարք հարցաքննությունների, զննությունների, առգրավումների և քննչական ու դատավարական այլ գործողությունների կատարման անհրաժեշտության մասին, սակայն, այդպիսիք չի կատարել, ինչով իսկ քննիչը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

Կոմիտեի կարգապահական հանձնաժողովին նիստին քննիչներ՝ Հ.Ա-ն և Լ.Պ-ն չէին ներկայացել և ներկայացվեց Կոմիտեի կարգապահական հանձնաժողովին հասցեագրված քննիչներ՝ Հ.Ա-ի և Լ.Պ-ի 29.05.2020թ. համապատասխան դիմումները, որով վերջիններս հայտնել են, որ ընդունում են իրենց վերագրվող դատավարական

խախտումները՝ խնդրելով նիստն անցկացնել առանց իրենց մասնակցության:

Ուսումնասիրելով նյութերը, լսելով զեկուցողին, Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, պարզեց, որ քննիչներ՝ Հ.Ա-ի և Լ.Պ-ի կողմից թույլ են տրվել կարգապահական խախտումներ: Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ քննիչներ՝ Հ.Ա-ի և Լ.Պ-ի արարքում առկա են կարգապահական խախտման փաստերը և նրանց մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 2-րդ ենթակետով, 48-50-րդ կետերով,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. 16.05.""""Դթ-ից առ 17.07.""""Դթ-ն ընկած ժամանակահատվածում վարույթում քննված թիվ 17856218 քրեական գործով ակնհայտ փաստական հիմքերի առկայության պայմաններում՝ համապատասխան քննչական ու դատավարական այլ գործողություններ չկատարելու փաստով ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության ՀԿԳ քննության վարչության ՀԿԳ նախկին քննիչ, ներկայում՝ չորրորդ կայազորային քննչական բաժնի պետի տեղակալ Հ.Ա-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

2. 17.07.""""Դթ-ից առ 01.10.""""Դթ-ն ընկած ժամանակահատվածում վարույթում քննված թիվ 17856218 քրեական գործով ակնհայտ փաստական հիմքերի առկայության պայմաններում՝ համապատասխան քննչական ու դատավարական այլ գործողություններ չկատարելու փաստով ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխա-

վոր վարչության առաջին կայազորային քննչական բաժնի պետի տեղակալ Լ. Պ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

3. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*

Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական
վարչության ավագ քննիչ
Մ. Թ-ի վերաբերյալ

31 հուլիսի 2020թ. ԿՀՈ 29
ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կարգապահական հանձնաժողովը (այսուհետ՝ Կարգապահական հանձնաժողով), Կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Մ.Թ-ի (այսուհետ՝ նաև քննիչ) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Կոմիտեի նախագահի տեղակալ Ա.Պ-ի միջնորդությունների առթիվ կատարված նախնական ուսումնասիրությամբ հիմնավորվել է, որ քննիչ Մ.Թ-ն կոպիտ կերպով առերևույթ խախտել է և չի պահպանել «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի, «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ներքին կարգապահական կանոնները հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 20.08.2018թ. թիվ 114-Լ հրամանով հաստատված հավելվածի պահանջները:

Կոմիտեի նախագահը քննիչ Մ.Թ-ի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու միջնորդությամբ դիմել է Կոմիտեի կարգապահական հանձնաժողովին՝ օրենքի առերևույթ խախտումներ թույլ տալու վերաբերյալ, ըստ ստորև նշված դրվագների.

1. Քննիչ Մ.Թ-ն, հանդիսանալով Կոմիտեի ծառայող, յուրաքանչյուր պարագայում պարտավոր լինելով դրսևորել քաղաքական զսպվածություն և չեզոքություն՝ չի դրսևորել նման վարքագիծ, չի պահպանել «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված քննչական կոմիտեում ծառայողի նկատմամբ կիրառվող սահմանափակումները, անվերապահորեն և բարեխղճորեն չի կատարել ու չի պահպանել «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ներքին կարգապահական կանոնները հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 20.08.2018թ. թիվ 114-Լ հրամանով հաստատված ծառայողի վարքագծի կանոնները՝ 2020 թվականի հունիսի 8-ին «Ֆեյսբուք» սոցիալական ցանցի իր անձնական էջի միջոցով ՀՀ վարչապետի էջում տեղադրելով անգլատառ՝ «Hargeli paron varchapet arden 10 or Erbuni bzhshkakan kentronum vcharovi covid en buzum inz der testavorum chen anckacrel et vonc exav vor 3 orva @ntacqum kpak u lavacaq asem avelin erb duq asum eq vor amen inch anvchar e es 500000 em vcharel vor mi kerp parkacnen buzman chasvac vor es petakan ashxatox em u voch mi xraxusum chka gumar unes kbuzenq ch ches buzvelu gna parki tan@ aen depqum vor es petutyann em carayum hetevoxakan exeq Paron Varchapet» և ՀՀ առողջապահության նախարարին հասցեագրված անգլատառ՝ «du gone gites Martunu hivandanoci vichak@ paron naxarar ahavor anbarenpast voreve payman patuhanner chka. Du mi pah iji qo barcunqneric usumnasiri qtict cacr nai ktesnes vor aveli lav hivandanoc ka Gavarum datark amen inchov hagecac isk bnakichner@ Erebuni BK um vcharovi buzvum en koronavirusov isk duq qo qmahachueqov es sharzvum amota eli vorn e patchar@ vor Gavari hivandanoc@ chi hamalrvum te zer chi talis qez amota stapvi u zekuceq Varchapetin imal vor ka 100 ic avel varaqvac en voch mi hskoxuteun chka Gavarum amen mek@ irenic vanuma asum en naxarari hramann e stapvi verev astvac ka mi hxpacir» գրառումները, չի եղել անկողմնակալ, առերևույթ քննադատել է ՀՀ կառավարության առողջապահական ոլորտում իրականացվող քաղաքականության

պատասխանատու՝ ՀՀ առողջապահության նախարարի գործունեությունը, վատաբանել է և կատարել վերջինիս «սթափեցնող» արտահայտություններ՝ կոպիտ կերպով խախտելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի և «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ներքին կարգապահական կանոնները հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 20.08.2018թ. թիվ 114-Լ հրամանով հաստատված հավելվածի 3-րդ գլխի 27-րդ կետի 1-ին, 4-րդ և 5-րդ ենթակետերի պահանջները:

2. Բացի այդ, քննիչ Մ.Թ-ն, «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ներքին կարգապահական կանոնները հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 20.08.2018թ. թիվ 114-Լ հրամանով հաստատված հավելվածի 2-րդ գլխի 18-րդ կետի համաձայն ՀՀ քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչության անձնակազմի 2020թ. արձակուրդների վերաբերյալ կազմված ժամանակացույցի գրաֆիկին ծանոթ լինելով և իր ստորագրությամբ հաստատած լինելով ու գիտակցելով, որ ինքը 2020թ. հուլիս ամսին պետք է մեկներ ամենամյա արձակուրդ, խախտելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ներքին կարգապահական կանոնները հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 20.08.2018թ. 114-Լ հրամանով հաստատված հավելվածի 2-րդ գլխի 19-րդ և 20-րդ կետերի պահանջները, 2020թ. հունիսի 15-ին իր անունից և միայն իր ստորագրությամբ, առանց ստորաբաժանման պետի, տվյալ դեպքում՝ Կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչության պետ Կ.Թ-ի համաձայնության, դիմում է ներկայացրել Կոմիտեի նախագահի տեղակալի Ա.Պ-ին՝ իրեն 2020թ. հունիսի 22-ից արձակուրդ տրամադրելու վերաբերյալ:

Հիշյալ դրվագներով առերևույթ կարգապահական խախտումների վերաբերյալ քննիչ Մ.Թ-ն Կոմիտեի կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ ըստ էության չընդունեց իր մեղավորությունը՝ հավելելով, որ «Ֆեյսբուք» սոցիալական ցանցի իր անձնական էջի միջոցով վերոհիշյալ գրառումները կատարել է կինը, իսկ

արձակուրդի մեկնելու վերաբերյալ իր դիմումը, առանց իր ստորաբաժանման պետի համաձայնության, ներկայացրել է Կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչության պետի տեղակալ Ա.Մ-ի խոսքերի հիման վրա, ով իրեն հայտնել է, որ կարող է այդ կերպ ներկայացնել:

Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը նկատեց, որ վերոհիշյալ գրառումները գրվել են առաջին դեմքով, բացի այդ, դրանում հիշատակվել են այնպիսի հանգամանքներ, որոնք վերաբերել են քննիչ Մ.Թ-ի պետական ծառայող լինելու և նրա գործունեության վերաբերյալ հանգամանքներին:

Ուսումնասիրելով և վերլուծելով նյութերը, լսելով զեկուցողին, Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, պարզեց, որ քննիչ Մ.Թ-ի կողմից թույլ են տրվել կարգապահական խախտումներ, մասնավորապես՝ քննիչ Մ.Թ-ն առերևույթ խախտել է «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջները, այն է՝ քննչական կոմիտեի ծառայողը պարտավոր է՝ կատարել Սահմանադրության, օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները և «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ներքին կարգապահական կանոնները հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 20.08.2018թ. թիվ 114-Լ հրամանով հաստատված հավելվածի 3-րդ գլխի 28-րդ կետի 1-ին ենթակետի, այն է՝ աշխատողները սոցիալական ցանցերից օգտվելիս պարտավոր են. 1) պահպանել բարոյականության և էթիկայի համընդհանուր նորմերը (...), նույն հավելվածի 2-րդ գլխի 19-րդ և 20-րդ կետերի պահանջները:

Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ քննիչ Մ.Թ-ի արարքում առկա է կարգապահական կարգապահական խախտումների փաստը և նրա մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշ-

մամբ՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 2-րդ ենթակետով, 48-50-րդ կետերով,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. 2020 թվականի հունիսի 8-ին «Ֆեյսբուք» սոցիալական ցանցի իր անձնական էջի միջոցով ՀՀ վարչապետի էջում և առանձին ՀՀ առողջապահության նախարարին հասցեագրված՝ սույն որոշման մեջ նշված անգլատառ գրառումները տեղադրելու դրվագով ՀՀ քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Մ.Թ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

2. 2020թ. հունիսի 15-ին իր անունից և միայն իր ստորագրությամբ, առանց ստորաբաժանման պետի, տվյալ դեպքում՝ ՀՀ քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչության պետ Կ.Թ-ի համաձայնության, ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալի Ա.Պ-ին՝ իրեն 2020թ. հունիսի 22-ից արձակուրդ տրամադրելու վերաբերյալ դիմում ներկայացնելու դրվագով ՀՀ քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Մ.Թ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

3. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*
Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ՔԿ Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ Ն.Վ-ի (Կարգապահական խախտման փաստի բացակայության մասին)

13 օգոստոսի 2020թ. ԿՀՈ 30
ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կարգապահական հանձնաժողովը (այսուհետ՝ Կարգապահական հանձնաժողով), Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ Ն.Վ-ի (այսուհետ՝ նաև քննիչ) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով Կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Կոմիտեի նախագահի տեղակալի միջնորդության առթիվ կատարված նախնական ուսումնասիրությամբ պարզվել է, որ քննիչ Ն.Վ-ն իր գործողություններով առերևույթ չի կատարել «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված իր պարտականությունները և խախտել է ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 2018թ. օգոստոսի 20-ի «ՀՀ քննչական կոմիտեի ներքին կարգապահական կանոնները հաստատելու մասին» թիվ 114-Լ հրամանի 27-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները, մասնավորապես՝ դրսևորել է ՀՀ քննչական կոմիտեի ծառայողի համբավն արատավորող անվայել արարք:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է քննիչ Ն.Վ-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումն ըստ ստորև նշված դրվագի.

2020թ. մայիսի 14-ին ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հատուկ քննչական ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչությունից ծառայողական քննություն անցկացնելու միջնորդություն է ստացվել Կոմիտեում, այն մասին, որ ՀՀ հատուկ քննչական ծառայությունում ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասով հարուցված և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով վարույթը կարճված թիվ 62200820 քրեական գործով իրականացված նախաքննության ընթացքում պարզվել է, որ Կոմիտեի ԵՔՔՎ Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ Ն.Վ-ն """Դթ. դեկտեմբերի 19-ին, ժամը՝ 00:45-ի սահմաններում ավտոմեքենայով բարձրացել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի Շենգավիթ նստավայրի վարչական շենքի աստիճանահարթակին: Ն.Վ-ն որպես Կոմիտեի ծառայող, դրսևորել է այդ մարմնի ծառայողին ոչ վայել վարքագիծ, իր վարքագծով հեղինակազրկել է տվյալ մարմինը, որպիսի հանգամանքը ենթակա է նաև քննարկման կարգապահական վարույթի շրջանակներում:

Հիշյալ առերևույթ կարգապահական խախտման վերաբերյալ Ն.Վ-ն Կոմիտեի կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ հայտնել է, որ 18.12."""Դթ-ին մասնակցել է ընկերոջ ծննդյան արարողությանը, որից հետո տուն վերադառնալիս՝ 19.12."""Դթ-ին ժամը՝ 00:30-ի սահմաններում Արշակունյաց պողոտայով ընթանալիս իրեն լավ չի զգացել, առողջական խնդիր է ունեցել և որոշել է օգտվել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի Շենգավիթի նստավայրի դատարանի սանհանգույցից, որտեղ նախկինում աշխատել է՝ որպես կարգադրիչ: Երբ հասել է դատարանի շենքի մոտ, դանդաղ ընթացքով ավտոմեքենան կանգնեցրել է աստիճանների դիմաց, այդ պահին ցավերը սաստկացել են և կորցնելով ավտոմեքենայի կառավարումը՝ հետընթաց կատարելու փոխարեն ավտոմեքենան առաջ է վարել և ավտոմեքենայի դիմացի

անիվները բարձրացել են դատարանի 3-4 աստիճանները, իսկ ավտոմեքենայի հետևի անիվները գետնից չեն բարձրացել, որից հետո անմիջապես փոխանցման տուփը դրել է հետընթացի վրա, շարժվել դեպի ետ և նման պայմաններում կատարվածից վատ զգալով, ավտոմեքենայից չի իջել, դատարանի սանհանգույցից չի օգտվել և ավտոմեքենան վարելով հեռացել է: Որևէ նպատակ, միտում չի ունեցել որպես Կոմիտեի ծառայող դրսևորելու քննիչին ոչ վայել վարքագիծ, հեղինակազրկել ՀՀ քննչական կոմիտեն, դա կատարվել է անկախ իր կամքից, առողջական խնդիրների պատճառով: Ն.Վ-ն հայտնեց նաև, որ կատարվածի մեջ իրեն վատ է զգում, չի կարող հայտնել, որ զղջում է, քանի որ դիտավորյալ չի դա կատարել, անկախ իրենից է եղել:

ՈՒսումնասիրելով նյութերը, Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչ Ն.Վ-ի գործողություններում բացակայում է կարգապահական խախտման փաստը՝ նկատի ունենալով, որ «ՀՀ քննչական կոմիտեի ներքին կարգապահական կանոնները հաստատելու մասին» թիվ 114-Լ հրամանի 7-րդ կետի՝ աշխատանքային օրն սկսվում է ժամը 9:00-ին և ավարտվում՝ ժամը 18:00-ին, որպիսի պայմաններում՝ աշխատանքային ժամերին Կոմիտեի ծառայողը պարտավոր է պահպանել ծառայողի վարքագծի կանոնները, չդրսևորել ծառայողի համբավն արատավորող անվայել արարք: Իսկ քննարկվող դեպքը տեղի է ունեցել ոչ աշխատանքային ժամերին և գործող նորմատիվ իրավական ակտերով չկա որևէ իրավակարգավորում առ այն, որ ՀՀ քննչական կոմիտեի ծառայողը աշխատանքից դուրս պարտավոր է պահպանել ծառայողի վարքագծի կանոնները, չդրսևորել ծառայողի համբավն արատավորող անվայել արարք, այսինքն՝ այդ առումով որևէ արգելող նորմ առկա չէ և նման պայմաններում քննիչի գործողություններում բացակայում է կարգապահական խախտման փաստը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժո-

ղովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 3-րդ ենթակետով և 48-50-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ քննչական կոմիտեի ծառայողի համբավն արատավորող անվայել արարք դրսևորելու դրվագով Ն.Վ-ի արարքում բացակայում է կարգապահական խախտման փաստը:

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*

Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ քննչական կոմիտեի ԵՔՔՎ Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ՀԿԳ քննիչ Գ.Գ-ի վերաբերյալ

13 օգոստոսի 2020թ. ԿՀՈ 31
ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կարգապահական հանձնաժողովը (այսուհետ՝ Կարգապահական հանձնաժողով), Կոմիտեի ԵՔՔՎ Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ՀԿԳ քննիչ Գ.Գ-ի (այսուհետ՝ նաև քննիչ), նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով Կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Նախնական ուսումնասիրության առիթ է հանդիսացել Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազության ավագ դատախազ Հ.Հ-ի միջնորդությունը՝ Կոմիտեի ԵՔՔՎ Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ՀԿԳ քննիչ Գ.Գ-ի վարույթում քննված թիվ 12100920 քրեական գործով վերջինիս կողմից իր լիազորություններն իրականացնելիս քրեադատավարական օրենքի կոպիտ խախտումներ թույլ տալու վերաբերյալ:

Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը քննարկել է Գ.Գ-ի վերագրվող օրենքի առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագի.

Թիվ 12100920 քրեական գործով 26.01.2020թ. որոշում է կայացրել Ա.Ղ-ին որպես մեղադրյալ ներգրավելու մասին և նույն օրը միջնորդություն է հարուցել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան՝ մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին, սակայն, հաշվի չառնելով ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԱՔԴ/0218/06/12 գործով արտահայտած իրավական դիրքորոշումը, Ա.Ղ-ին որպես մեղադրյալ ներգրավելու որոշման մասին չի տեղեկացրել, չի պարզաբանել առաջադրված մեղադրանքի էությունը, որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման պատճենը և մեղադրյալի իրավունքների ու պարտականությունների ցանկը չի հանձնել՝ չբացատրելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքները և պարտականությունները, ինչով իսկ Ա.Ղ-ն ձեռք չի բերել մեղադրյալի դատավարական կարգավիճակ և դատարանը մերժել է ներկայացված միջնորդությունը՝ արձանագրելով, որ բացակայել է կալանավորման ինքնուրույն պայմանի, այն է՝ անձին մեղադրյալի դատավարական կարգավիճակ տալու հանգամանքը:

Արդյունքում՝ քննիչ Գ.Գ-ն թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի 2-րդ մասի, 134-րդ հոդվածի 3-րդ մասի և 203-րդ հոդվածի 2-3-րդ մասերի պահանջները առերևույթ խախտում:

Առերևույթ կարգապահական խախտումներ թույլ տալու վերաբերյալ ՀԿԳ քննիչ Գ.Գ-ն Կոմիտեի կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ հայտնեց, որ ընդունում է իր կողմից առերևույթ թույլ տրված խախտումը, որի վերաբերյալ պնդեց նախնական ուսումնասիրության ընթացքում տված բացատրությունում նշած հանգամանքները:

Ուսումնասիրելով նյութերը՝ Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ ՀԿԳ քննիչ Գ.Գ-ն խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի 2-րդ մասի, 134-րդ հոդվածի 3-րդ մասի և 203-րդ հոդվածի 2-3-րդ մասերով սահմանված պահանջները:

Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ քննիչ Գ.Գ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 2-րդ ենթակետով, 48-50-րդ կետերով,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Թիվ 12100920 քրեական գործով Ա.Ղ-ին մեղադրյալի դատավարական կարգավիճակ չտալու մասով վարույթն իրականացրած քննիչ Գ.Գ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրան մեղավորությունը:

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*

Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ քննչական կոմիտեի ԵՔՔՎ Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Մ.Ռ-ի վերաբերյալ

13 օգոստոսի 2020թ. ԿՀՈ 32
ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կարգապահական հանձնաժողովը (այսուհետ՝ Կարգապահական հանձնաժողով), Կոմիտեի ԵՔՔՎ Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Մ.Ու- (այսուհետ՝ նաև քննիչ), նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով Կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Նախնական ուսումնասիրության առիթ է հանդիսացել Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազության դատախազ Վ.Հ-ի միջնորդությունը՝ Կոմիտեի ԵՔՔՎ Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Մ.Ու-ի վարույթում քննված թիվ 12868419 քրեական գործով վերջինիս կողմից իր լիազորություններն իրականացնելիս քրեադատավարական օրենքի կոպիտ խախտումներ թույլ տալու վերաբերյալ:

Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը քննարկել է Մ.Ու-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագի.

ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով հարուցված և վարույթում քննված թիվ 12868419 քրեական գործով՝ քննիչ Մ.Ու-ն գտնելով, որ կատարվել են անհրաժեշտ հնարավոր բոլոր քննչական և դատավարական գործողությունները, 30.12.""""Թթ. և 08.05.2020թ. որոշումներ է կայացրել քրեական գործով վարույթը կասեցնելու մասին, մինչդեռ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործի արդարացի քննություն իրականացնելու սկզբունքով պայմանավորված՝ օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցառումները՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար ձեռնարկելու պարտավորություն կրելով՝ այդպիսի քննություն չի իրականացրել, մասնավորապես՝ հափշտակված «Մոտոռոլլա» հեռախոսի մեջ դեպքից հետո օգտագործված բջջային հեռախոսահամարը շահագործած անձի ինքնությունը պարզելու, վերջինիս հայտնաբերելու և դեպքի հանգամանքների շուրջ հարցաքննելու ուղղությամբ այդ հեռախոսահամարից դեպքից հետո կամ դրան նախորդող ժամանակահատվածում կատարված ելքային և մուտքային հեռախոսազանգերի, կարճ հաղորդագրությունների վերծանումները, սպասարկած ալեհավաք կայանների հասցեները ստանալու և քննություն կատարելու համար միջնորդություն չի հարուցել դատարան, չի ստացել վերծանումները և այդ ուղղությամբ քննություն չի կատարել, ինչի կապակցությամբ դատախազի կողմից հիշյալ որոշումները վերացվել են և անհարկի ձգձգվել է նախաքննության ժամկետները: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի և 31-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները:

Արդյունքում՝ քննիչ Մ.Ո-ն թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի և 31-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները առերևույթ խախտում:

Առերևույթ կարգապահական խախտումներ թույլ տալու վերաբերյալ ավագ քննիչ Մ.Ու-ն Կոմիտեի կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ հայտնեց, որ ընդունում է իր կողմից առերևույթ թույլ տրված խախտումը, որի վերաբերյալ պնդեց նախնա-

կան ուսումնասիրության ընթացքում տված բացատրությունում նշած հանգամանքները:

Ուսումնասիրելով նյութերը՝ Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ ավագ քննիչ Մ.Ու-ն խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի և 31-րդ հոդվածի 4-րդ մասի սահմանված պահանջները:

Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ քննիչ Մ.Ու-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 2-րդ ենթակետով, 48-50-րդ կետերով,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Թիվ 12868419 քրեական գործի արդարացի քննություն իրականացնելու սկզբունքով պայմանավորված՝ օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցառումները՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար ձեռնարկելու պարտավորություն կրելով՝ այդպիսի քննություն չիրականացնելու, հափշտակված «Մոտոռոլլա» հեռախոսի մեջ դեպքից հետո օգտագործված բջջային հեռախոսահամարը շահագործած անձի ինքնությունը պարզելու, վերջինիս հայտնաբերելու և դեպքի հանգամանքների շուրջ հարցաքննելու ուղղությամբ այդ հեռախոսահամարից դեպքից հետո կամ դրան նախորդող ժամանակահատվածում կատարված ելքային և մուտքային հեռախոսազանգերի, կարճ հաղորդագրությունների վերծանումները, սպասարկած ալեհավաք կայանների հասցեները ստանալու և քննություն կատարելու համար դատարան միջնորդու-

թյուն չհարուցելու, վերծանումները չստանալու և այդ ուղղությամբ քննություն չկատարելու մասով վարույթն իրականացրած քննիչ Մ.Ու-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրան մեղավորությունը:

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*

Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ՔԿ Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Ա.Հ-ի վերաբերյալ

13 օգոստոսի 2020թ. ԿՀՈ 33

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կարգապահական հանձնաժողովը (այսուհետ՝ Կարգապահական հանձնաժողով), Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Ա.Հ-ի (այսուհետ՝ նաև քննիչ), նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով Կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

ՀՀ գլխավոր դատախազության Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազի տեղակալ Ա.Ա-ի միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ Կոմիտեի ԵՔՔՎ Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Ա.Հ-ի վարույթում քննված թիվ 17961219 քրեական գործով նախաքննության ընթացքում վերջինս իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը:

Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը քննարկել է ավագ քննիչ Ա.-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումն ըստ ստորև նշված դրվագի.

Թիվ 17961219 քրեական գործով նախաքննության ժամկետը լրանալիս է եղել 2020 թվականի մայիսի 29-ին, քննիչը քրեադատավարական օրենքով սահմանված ժամկետներում՝ 22.05.2020թ. կազմել է քրեական գործով նախաքննության ժամկետը երկարացնելու միջնորդությունը և ուղեկցական գրությունը, որը ստորագրվել է քննչական բաժնի պետի կողմից, սակայն դրանք քննչական բաժնի գրասենյակ չի հանձնվել ելքագրելու և հասցեատիրոջն ուղարկելու համար, այլ պահել է իր աշխատասենյակում՝ անձամբ առաքելու նպատակով, ինչը սակայն չի կատարել: Նշված միջնորդությունը կից գրության հետ Ա.Հ-ն դատախազություն է ներկայացրել միայն 04.06.2020ին: Արդյունքում նախաքննության ժամկետը երկարացնելու մասին 22.05.2020թ. միջնորդությունը վարչական շրջանների դատախազությունում ստացվել է քրեական գործով նախաքննության ժամկետը լրանալուց 6 օր անց՝ 2020 թվականի հունիսի 04-ին:

Քննիչի կողմից խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ մասի, 197-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջները, ինչպես նաև չի պահպանվել «Նախաքննության ժամկետը երկարացնելու մասին միջնորդություն հարուցելու որոշում կայացնելու աշխատանքների կազմակերպման միասնականության վերաբերյալ ուղեցույցը հաստատելու մասին» ՀՀ ՔԿ նախագահի 17.11.2014թ. թիվ 11-Ա հրամանի՝ 8-րդ կետի՝ պահանջները:

Հիշյալ առերևույթ կարգապահական խախտման վերաբերյալ ավագ քննիչ Ա.Հ-ն իր դիրքորոշը ներկայացրել է Կոմիտեի կարգապահական հանձնաժողովի նախագահին հասցեագրված դիմումով, որով ընդունել է իրեն վերագրված առերևույթ դատավարական խախտումը և խնդրել հնարավորության դեպքում նիստն անցկացնել իր բացակայությամբ:

ՈՒսումնասիրելով նյութերը, Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչի գործողություններում առկա է կարգա-

պահական խախտման փաստը և նրա մեղավորությունը, մասնավորապես խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ մասի, 197-րդ հոդվածի 6-րդ մասի, ինչպես նաև «Նախաքննության ժամկետը երկարացնելու մասին միջնորդություն հարուցելու որոշում կայացնելու աշխատանքների կազմակերպման միասնականության վերաբերյալ ուղեցույցը հաստատելու մասին» ՀՀ ՔԿ նախագահի 17.11.2014թ. թիվ 11-Ա հրամանի՝ 8-րդ կետի՝ պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 2-րդ ենթակետով և 48-50-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Նախաքննության ժամկետը երկարացնելու մասին պատճառաբանված միջնորդությունը դատախազին սահմանված ժամկետում չներկայացնելու դրվագով Ա.Հ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*
Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ՔԿ ԵՔՔՎ Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Ա.Ք-ի և նույն բաժնի նախկին ավագ քննիչ, ներկայում ՀԿԳ քննիչ Ռ.Ս-ի վերաբերյալ

13 օգոստոսի 2020թ. ԿՀՈ 34

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կարգապահական հանձնաժողովը (այսուհետ՝ Կարգապահական հանձնաժողով), Կոմիտեի ԵՔՔՎ Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Ա.Ք-ի (այսուհետ՝ նաև քննիչ), և նույն բաժնի նախկին ավագ քննիչ, ներկայում ՀԿԳ քննիչ Ռ.Ս-ի (այսուհետ՝ նաև քննիչ), նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

ՀՀ գլխավոր դատախազության Երևանի քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների դատախազ Ա.Ա-ի միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ Կոմիտեի ԵՔՔՎ Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Ա.Ք-ի և նույն բաժնի նախկին ավագ քննիչ, ներկայում ՀԿԳ քննիչ Ռ.Ս-ի վարույթում քննված թիվ 49118315 քրեական գործով նախաքննության ընթացքում վերջիններս իրենց լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը:

Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը քննարկել է քննիչներ Ա.Ք-ին և Մ.Մ-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագների.

Ավագ քննիչ Ա.Ք-ն """Դթ. նոյեմբերի 8-ին վերսկսելով քրեական գործով կասեցված վարույթը, առերևույթ հանցանք կատարած անձանց՝ բժիշկներ՝ Հ.Հ-ին և Լ. Ն-ին օրենքով նախատեսված իրավական և փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում տևական ժամանակ քրեական դատավարության մասնակցի՝ մեղադրյալի դատավարական կարգավիճակ չի տվել, դրանից բխող մի շարք ընթացակարգային գործողություններ չի կատարել այն պայմաններում, երբ 2019 թվական դեկտեմբերի 3-ին և դեկտեմբերի 30-ին նշված պատճառաբանությամբ նախաքննության ժամկետը երկարացնելու միջնորդություններ է ներկայացրել: Սակայն ոչինչ չձեռնարկելով 21.01.2020թ. զեկուցագիր է ներկայացրել քննչական բաժնի պետին՝ արձակուրդ մեկնելու կապակցությամբ՝ քրեական գործի նախաքննության կատարումը՝ քննչական բաժնի մեկ այլ քննիչի հանձնարարելու վերաբերյալ:

Բացի այդ, անտեսելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի պահանջները, հեռախոսազրույց է ունեցել տուժողի իրավահաջորդ Թ.Բ-ի հետ՝ վերջինիս ստացված կրկնակի հանձնաժողովային դատաբժշկական փորձաքննության եզրակացությանը ծանոթացնելու համար, սակայն արձանագրություն չի կազմել, իր գործողություններն որևէ կերպ չի փաստաթղթավորել, ինչի հետևանքով՝ հետագայում քրեական գործը վարույթ ընդունած քննիչը նաև այդ հանգամանքով պայմանավորված երկարացրել է նախաքննության ժամկետը, իսկ հսկող դատախազը նման ցուցում է տվել: Արդյունքում քննիչի կողմից խախտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի և 55-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

Իր հերթին, նախկինում ավագ քննիչ, ներկայում ՀԿԳ քննիչ Ռ.Ս-ն, առանց իրավաչափ նպատակի, տևական ժամանակ դրսևորել է անգործություն, մասնավորապես՝ քրեական գործը 21.01.2020թ-ին

վարույթ ընդունելուց հետո ստացված կրկնակի հանձնաժողովային դատաբժշկական փորձաքննության եզրակացության պայմաններում «Արմենիա» ՀԲԿ-ի բժիշկներ՝ Հ.Հ-ին և Լ.Ն-ին մեղադրյալի դատավարական կարգավիճակ չի տվել, դրանից բխող դատավարական գործողություններ չի կատարել: Ավելին՝ վերջինս չի կատարել քրեադատավարական օրենքով սահմանված իր պարտականությունները՝ անտեսելով նաև հսկող դատախազի 10.03.2020թ. ցուցումի պահանջը՝ մասնավորապես՝ փորձաքննության եզրակացության արդյունքներով պայմանավորված չի հարցաքննել տուժող Շ.Ս-ի բժշկական օգնություն և սպասարկում իրականացրած «Արմենիա» ՀԲԿ-ի աշխատակիցներին, արդյունքում քննիչի կողմից խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերի պահանջները:

Բացի այդ, Ռ.Ս-ի կողմից խախտվել է նաև ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 15.05.""""Ղթ. թիվ 76-Լ հանձնարարականի պահանջները և քրեական գործը ողջամիտ ժամկետներում չի տրամադրվել դատախազին:

""""Ղթ. նոյեմբերի 8-ից քրեական գործի նախաքննության ժամկետներն անհարկի ձգձգելու, անհրաժեշտ քննչական և դատավարական գործողությունները ժամանակին չկատարելու, հանցանքի կատարումը վկայող բավարար ապացույցների համակցության պայմաններում բժիշկներին համապատասխան դատավարական կարգավիճակ չտալը հանգեցրել են նրան, որ անցել են առերևույթ հանցանք կատարած անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետները և Ռ.Ս-ն 2020թ. ապրիլի 13-ին որոշում է կայացրել քրեական գործի վարույթը կարճելու, Հ.Հ-ի և Լ.Ն-ի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու մասին:

Քննարկվող դեպքում խախտվել է նաև ՀՀ քրեական օրենսգրքի 7-րդ հոդվածի պահանջները՝ պատասխանատվության անխուսափելիության սկզբունքը:

Հիշյալ առերևույթ կարգապահական խախտումների վերաբերյալ Ա.Ք-ն Կոմիտեի կարգապահական հանձնաժողովին տված բա-

ցատրությամբ հայտնեց, որ վերսկսելով քրեական գործով կասեցված վարույթը, հեռախոսազանգի միջոցով տուժողի իրավահաջորդին հրավիրել է քննչական բաժին ստացված կրկնակի հանձնաժողովային դատաբժշկական փորձաքննության եզրակացությանը ծանոթանալու համար, սակայն վերջինս հրաժարվել է ներկայանալ, պատճառաբանելով, որ դստեր մահվան կապակցությամբ որևէ մեկի նկատմամբ բողոք չունի: Ինքը նշված հանգամանքի վերաբերյալ արձանագրություն չի կազմել: Նույն կերպ հեռախոսազանգի միջոցով զանգահարել է նաև առերևույթ հանցանք կատարած բժիշկներից մեկին և հրավիրել քննչական բաժին, սակայն աշխատանքային ծանրաբեռնվածությամբ պայմանավորված բժիշկը խնդրել է ներկայանալ հետագայում, սակայն ինքը մեկնել է արձակուրդ և չի կարողացել կատարել համապատասխան քննչական և այլ դատավարական գործողություններ: Վերջինս նշեց նաև, որ քննարկվող ժամանակահատվածում աշխատել է ծանրաբեռնված և վարույթում ունեցել է 20 քրեական գործ, որպիսի պայմաններում քննարկվող քրեական գործով չի հասցրել գործողություններ կատարել:

Այնուհետև իրեն վերագրվող առերևույթ կարգապահական խախտումների վերաբերյալ Կոմիտեի կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ Ռ.Ս-ն հայտնեց, որ քրեական գործը վարույթ ընդունելուց հետո ծանրաբեռնվածության պայմաններում սկզբնական շրջանում չի հասցրել ծանոթանալ քրեական գործի նյութերին և անհրաժեշտ քննչական, այլ դատավարական գործողություններ չի կատարել: Այդ ընթացքում վարույթում քննվել է թիվ 58161118 քրեական գործը՝ կապված «Մաշկաբանության և սեռավարակաբանության բժշկագիտական կենտրոն» ՓԲ ընկերության մաշկային բաժանմունքի բժիշկների կողմից չարաշահումներ, ՀՀ առողջապահության գործակալությունից առանձնապես խոշոր չափի գումարներ հափշտակելու դեպքի առթիվ և իրականացված նախաքննության ընթացքում մեղադրյալների կողմից վերականգնվել է պետությանը պատճառված վնասը՝ 17.500.00 ՀՀ դրամն ամբողջությամբ: Այնուհետև ծանոթացել է քրեական գործի նյութերին, առերևույթ

հանցանք կատարած անձինք, «Արմենիա» ՀԲԿ-ի բժիշկներ Հ.Հ-ն և Լ.Ն-ն դիմումներ են գրել իրեն խնդրելով տրամադրել ստացված կրկնակի հանձնաժողովային դատաբժշկական փորձաքննության եզրակացությունը տրամադրելու համար, ինչը կատարվել է իր կողմից: Դրանից հետո քննչական բաժնում ստացվել է բժիշկների ներկայացուցիչ, ՀՀ փաստաբանների պալատի փաստաբան Տ.Ե-ի միջնորդությունը քրեական գործի վարույթը հանցակազմի բացակայության հիմքով կարճելու վերաբերյալ, իսկ եթե նման հիմքով վարույթը կարճելու հիմքերը բացակայում են, համաձայն են նաև, որպեսզի քրեական գործի վարույթը կարճվի վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով: Ստացված միջնորդությունը սահմանված ժամկետներում քննարկել և մասնակի մերժել է, այդ մասին տեղեկացնելով միջնորդությունը ներկայացրած անձին, որից հետո քրեական գործի նյութերը քննարկելով հսկող դատախազի հետ՝ 13.04.2020թ-ին որոշում է կայացրել քրեական գործով վարույթը կարճելու և Հ.Հ-ի, Լ.Ն-ի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու մասին՝ վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով՝ նկատի ունենալով, որ հանցանքն ավարտված համարվելու օրվանից անցել է 5 տարի, տվյալ դեպքում 5 տարին լրացել է 10.04.2020թ.: Ռ.Ս-ն հայտնեց նաև, որ վերջին անգամ նախաքննության ժամկետը երկարացնելու միջնորդության հետ ներկայացրել է նաև քրեական գործը և հսկող դատախազը զրկված չի եղել իր լիազորություններն իրականացնելուց: Եթե նույնիսկ բժիշկներին ավելի վաղ մեղադրանք առաջադրեր, ապա միևնույնն է չէր հասցնի դատարան ուղարկել, բոլոր դեպքերում քրեական գործի վարույթը նույն հիմքով ենթակա էր կարճման: Ինչ վերաբերում է դատախազի ցուցումի պահանջներին, ապա ցուցումի պահանջների առաջին կետը կատարել է, իսկ երկրորդ կետը հստակեցված չի եղել, առերևույթ հանցանք կատարած գործողություններին քրեաիրավական գնահատական տալու մասին է խոսքը գնացել, քրեական գործի վարույթը կարճելով Հ.Հ-ի և Լ.Ն-ի գործողություններին պատշաճ գնահատական տրվել է:

ՈՒսումնասիրելով նյութերը, Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ ավագ քննիչ Ա.Ք-նի գործողություններում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը, նկատի ունենալով, որ առերևույթ հանցանք կատարած անձանց՝ բժիշկներ՝ Հ.Հ-ին և Լ. Ն-ին օրենքով նախատեսված իրավական և փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում տևական ժամանակ՝ առանց իրավաչափ նպատակի քրեական դատավարության մասնակցի՝ մեղադրյալի դատավարական կարգավիճակ չի տվել, դրանից բխող մի շարք ընթացակարգային գործողություններ չի կատարել: Ա.Ք-ին վերագրվող մյուս դրվագով կարգապահական խախտման հատկանիշներ չհայտնաբերվեցին:

Անդրադառնալով նախկին ավագ քննիչ, ներկայում ՀԿԳ քննիչ Ռ.Ս-ի գործողություններին Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ Ռ.Ս-ի գործողություններում առկա է կարգապահական խախտման փաստը, սակայն բացակայում է նրա մեղավորությունը՝ նկատի ունենալով, որ քրեական գործը բաղկացած է եղել 2 հատորից, քննվել է հինգ տարի, որին ծանոթանալու համար քննիչից պահանջվել է որոշակի ժամանակահատված: Բացի այդ, վերջինիս վարույթում այդ ընթացքում քննվել են 20-ից ավել քրեական գործեր և քննվող քրեական գործերից մեկով ամբողջությամբ վերականգնվել է պետությանը պատճառված նյութական վնասը: Ընդ որում, այդ ժամանակահատվածում նոր կորոնավիրուսով պայմանավորված ՀՀ-ում հայտարարվել է արտակարգ դրություն և Կոմիտեի ծառայողներին հրահանգավորվել է ձեռնպահ մնալ քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելուց, սահմանափակել շփումները՝ վարակը չտարածելու նպատակով: Քննարկվող դեպքում, եթե նույնիսկ ընդունենք, որ քննիչի կողմից մեղադրանք առաջադրվեր բժիշկներին, միևնույնն է նույն հիմքով հետագայում քրեական գործի վարույթը կարճվելու էր: Վերը նկարագրվածի պայմաններում բացակայում է քննիչի մեղավորությունը: Ռ.Ս-ին վերագրվող մյուս դրվագով կարգապահական խախտման հատկանիշներ չհայտնաբերվեցին:

Ելնելով վերոգրյալից և ղեկվարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով և 48-50-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Օրենքով նախատեսված իրավական և փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում տևական ժամանակ՝ առանց իրավաչափ նպատակի՝ Հ.Հ-ին և Լ.Ն-ին քրեական դատավարության մասնակցի՝ մեղադրյալի դատավարական կարգավիճակ չտալու, դրանից բխող մի շարք ընթացակարգային գործողություններ չկատարելու դրվագով Ա.Ք-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

2. Օրենքով նախատեսված իրավական և փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում տևական ժամանակ՝ առանց իրավաչափ նպատակի՝ Հ.Հ-ին և Լ.Ն-ին քրեական դատավարության մասնակցի՝ մեղադրյալի դատավարական կարգավիճակ չտալու, դրանից բխող մի շարք ընթացակարգային գործողություններ չկատարելու դրվագով Ռ.Ս-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը, սակայն բացակայում է նրա մեղավորությունը:

3. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*
Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ՔԿ զինվորական քննչական գլխավոր վարչության չորրորդ կայազորային քննչական բաժնի ավագ քննիչ Մ.Մ-ի վերաբերյալ

13 օգոստոսի 2020թ. ԿՀՈ 35
ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կարգապահական հանձնաժողովը (այսուհետ՝ Կարգապահական հանձնաժողով), Կոմիտեի ԶՔԳՎ չորրորդ կայազորային քննչական բաժնի ավագ քննիչ Մ.Մ-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով Կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Կոմիտեի նախագահի տեղակալ Ա.Կ-ի և ՀՀ դատախազության Երևանի կայազորի զինվորական դատախազության դատախազ Ն.Ս-ի միջնորդությունների առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության չորրորդ կայազորային քննչական բաժնի ավագ քննիչ Մ.Մ-ի վարույթում քննված թիվ 90206219 քրեական գործով նախաքննության ընթացքում վերջինս իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը:

Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը քննարկել է ավագ քննիչ Մ.Մ-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումն ըստ ստորև նշված դրվագի.

Ավագ քննիչ Մ.Մ-ն """Դթ. դեկտեմբերի 03-ին քրեական գործը վարույթ ընդունելուց հետո տևական ժամանակ՝ շուրջ 4 ամիս առանց իրավաչափ նպատակի ամբողջությամբ չի կատարել հսկող դատախազի գրավոր, օրինական, առարկայական 22.10.2019թթ. ցուցումների պահանջները: Այն է՝

- Լրացուցիչ չի հարցաքննվել Լ.Ղ-ն, պարզելու համար, թե որդու արձակուրդի մեջ գտնվելու ընթացքում ինչպես և երբ են շփվել որդին և նրա նախկին նշանածը՝ Ե-ն, չի պարզվել Ե-ի տվյալները և ՀՀ-ում նրա բնակվելու վայրը:

- Չի պարզվել Վ.Գ-ի կողմից տվյալ ժամանակահատվածում օգտագործվող բջջային հեռախոսահամարը և չի ստացվել 18.06."""Դթ. մինչև 29.06."""Դթ. ներառյալ կատարված մուտքային և ելքային հեռախոսազանգերի վերծանումները, ինչպես նաև կատարված հեռախոսազանգերի սպասարկման ալեհավաքներից չի պարզվել 29.06."""Դթ. վերջինիս գտնվելու վայրը:

- Չի զննվել «Էրեբունի» ԲԿ-ի համապատասխան մատյանները, չի պարզվել, թե ովքեր են Վ.Գ-ին ներկայացրել բժշկական կենտրոն:

Արդյունքում քննիչի կողմից խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները:

Հիշյալ առերևույթ կարգապահական խախտման վերաբերյալ Մ.Մ-ն Կոմիտեի կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ հայտնեց, որ քրեական գործը 03.12."""Դթ-ին վարույթ ընդունելուց հետո ձեռնամուխ է եղել դատախազի ցուցումի պահանջների կատարմանը և առանցքային նշանակություն ունեցող ցուցումի կետի պահանջը կատարել է, մասնավորապես որոշում է կայացրել Վ.Գ-ի նկատմամբ ստացիոնար դատահոգեբուժական և դատահոգեբանական համալիր փորձաքննություն նշանակելու մասին:

Ինչ վերաբերում է Վ.Գ-ի կողմից տվյալ ժամանակահատվածում օգտագործվող բջջային հեռախոսահամարի մուտքային և ելքային հեռախոսազանգերի վերծանումները, ինչպես նաև կատարված հեռախոսազանգերի սպասարկման ալեհավաքներից դեպքի օրը վերջինիս գտնվելու վայրը պարզելու հանգամանքին, Մ.Մ-ն հայտնեց, որ

Վ.Գ-ի բջջային հեռախոսահամարը հայտնի է եղել, ըստ քրեական գործով ձեռք բերված փաստական տվյալների վերջինս՝ իր նշանած Եվ-ի հետ շփվել է «Թոթափել հավելվածի միջոցով, այդ պատճառով վերանայումները ստանալը նպատակահարմար չի գտել, իսկ դեպքի վայրը պարզելը Վ.Գ-ի արարքի, հանրային վտանգավորության աստիճանի, տեսակի և բնույթի վրա որևէ ազդեցություն ունենալ չէր կարող:

Շարունակելով Մ.Մ-ն հայտնեց նաև, որ չի զննվել «Էրեբունի» ԲԿ-ի համապատասխան մատյանները, չի պարզվել, թե ովքեր են Վ.Գ-ին ներկայացրել բժշկական կենտրոն, քանի որ նշված հանգամանքն իրենից հրատապություն չի ներկայացրել և ՀՀ-ում նոր կորոնավիրուսի համավարակի հետ կապված հայտարարված արտակարգ դրության պայմաններում ռիսկային է եղել այցելել բժշկական կենտրոն և զննություն կատարել, այն պայմաններում երբ պատկան մարմինների կողմից յուրաքանչյուր օր հորդորվել է սահմանափակել շփումները: Բոլոր դեպքերում պլանավորել է կատարել ցուցումի նշված կետի պահանջներն ավելի ուշ, սակայն չի հասցրել, քանի որ հեռացվել է վարույթից:

ՈՒսումնասիրելով նյութերը, Կոմիտեի կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ ավագ քննիչ Մ.Մ-ի գործողություններում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը, նկատի ունենալով, որ քննիչի կողմից տևական ժամանակ՝ առանց իրավաչափ նպատակի՝ շուրջ 4 ամիս չի կատարվել հսկող դատախազի առարկայական, օրինական, չբողոքարկված ցուցումի պահանջները: Մինչդեռ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ քննիչը պարտավոր է կատարել դատախազի օրինական ցուցումները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապա-

հական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 2-րդ ենթակետով և 48-50-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Տևական ժամանակ, առանց իրավաչափ նպատակի՝ հսկող դատախազի օրինական ցուցումի պահանջներն ամբողջությամբ չկատարելու դրվագով Մ.Մ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*

Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության առաջին կայազորային քննչական բաժնի ավագ քննիչ Դ.Հ-ի վերաբերյալ

15 դեկտեմբերի 2020թ. ԿՀՈ 36
ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի (այսուհետ՝ քննչական Կոմիտե) կարգապահական հանձնաժողովը (այսուհետ՝ Կարգապահական հանձնաժողով), ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության առաջին կայազորային քննչական բաժնի ՀԿԳ քննիչ Դ.Հ-ի (այսուհետ՝ նաև քննիչ) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալ, զինվորական քննչական գլխավոր վարչության պետ Ա.Կ-ի միջնորդության առթիվ կատարված նախնական ուսումնասիրությամբ հիմնավորվել է, որ քննիչ Դ.Հ-ն վարույթում քննված թիվ 90072319 քրեական գործով նախաքննության ընթացքում իր լիազորություններն իրականացնելիս խախտել է քրեադատավարական օրենքի պահանջները:

ՀՀ քննչական կոմիտեի նախագահը քննիչ Դ.Հ-ի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու համար Կարգապահական հանձնաժողովին միջնորդություն է հարուցել օրենքի առերևույթ խախտումներ թույլ տալու վերաբերյալ, ըստ ստորև նշված դրվագի.

Քննիչ Դ.Հ-ն 13.11.2019-19.12.2019թ. ընկած ժամանակահատվածում """Դթվարույթում քննված թիվ 90072319 քրեական գործով՝ հարուցված ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 1-ին մասով, 19.12."""Դթ. որոշումներ է կայացրել քրեական հետապնդում չիրականացնելու և գործով վարույթը կարճելու մասին՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի՝ համապատասխանաբար արարքում հանցակազմի և հանցադեպի բացակայության հիմքերով, սակայն, մինչ այդ նշված եղանակով քրեական գործով վարույթն ավարտելը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործի արդարացի քննություն իրականացնելու սկզբունքով պայմանավորված՝ օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցառումները՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար ձեռնարկելու պարտավորություն կրելով՝ այդպիսի քննություն չի իրականացրել, ապացուցման ենթակա մի շարք հանգամանքներ չի պարզել և դեպքի հանգամանքները պատշաճ հետազոտման, վերլուծության և գնահատման չի ենթարկել, ինչի արդյունքում՝ կայացրել է վաղաժամ որոշումներ, որոնք վերացվել են ՀՀ գլխավոր դատախազի որոշմամբ և անհարկի ձգձգվել են նախաքննության ժամկետները: Մասնավորապես՝ տուժող Հ.Զ-ին լրացուցիչ չի հարցաքննել՝ քննության համար էական նշանակություն ունեցող մի շարք հարցերի շուրջ, Հ.Զի-ի բերած փաստարկները ճշտելու ուղղությամբ չի ձեռնարկել որևէ ստուգողական գործողություն, պատշաճ քննության առարկա չի դարձրել գործում առկա հակասական տեղեկությունները՝ Հ.Զ-ի հայտնաբերման տեղի վերաբերյալ և այդ կապակցությամբ լրացուցիչ չի հարցաքննել վկա Գ.Ա-ին ու հեռախոսագիրը տված անձին, որևէ միջոց չի ձեռնարկել պարզելու և հարցաքննելու «Ֆորդ» մակնիշի ավտոմեքենայի վարորդին, չի հարցաքննել ոստիկանության Ասկերանի բաժնի ծառայողներին՝ Հ.Զ-ի մարմնի վրա մարմնական վնասվածքներ նկատելու և թե Հ.Զ-ն ինչ տեղեկություններ է հայտնել դրանց առաջացման վերաբերյալ կամ չնկատելու հանգամանքների շուրջ, չի պարզել Հ.Զ-ի ՊԲ 34153 զորամասում ծառայող

ընկերոջ ինքնությունը, նաև չի ստուգել, թե արդյոք Հ.Զ-ն իրականում այցելել է ՊԲ 34153 զորամաս և եթե այցելել է, ապա ում է հանդիպել ՀԱԿ-ում և ով է նրան տեղեկացրել ընկերոջ՝ մարտական դիրքում գտնվելու մասին, ՀՀ ՊՆ-ից և ՌՈ-ից չի պահանջել Հ.Զ-ի մորաքրոջ՝ Ա.Խ-ի կատարած ահազանգի, նաև դրանից 2 օր անց կատարած զանգի ձայնագրությունները՝ դրանք զննելու և անհրաժեշտության դեպքում դրանց շուրջ համապատասխան քննություն կատարելու համար, չեն հարցաքննվել 27.10.""""Ղթ. զորամասում անցկացված ինտելեկտուալ խաղին մասնակցած ու հաղթած նրանց թիմի մյուս երկու մասնակիցները՝ ժամկետային զինծառայողներ Ա.Պ-ն և Ա.Մ-ն: Արդյունքում՝ քննիչը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ և 55-րդ հոդվածների 3-րդ մասերի պահանջները:

Կարգապահական հանձնաժողովին նիստին քննիչ Դ.Հ-ն չէր ներկայացել և ներկայացվեց Կարգապահական հանձնաժողովին հասցեագրված քննիչ Դ.Հ-ի 10.09.2020թ. դիմումը, որով վերջինս հայտնել է, որ ընդունում է իր թերացումները՝ խնդրելով նիստն անցկացնել առանց իր մասնակցության:

Ուսումնասիրելով նյութերը, լսելով զեկուցողին, Կարգապահական հանձնաժողովը, պարզեց, որ քննիչի կողմից թույլ են տրվել կարգապահական խախտումներ: Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ քննիչ Դ.Հ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 2-րդ ենթակետերով, 48-50-րդ կետերով,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Մինչ 19.12.""Ղթ-ը թիվ 90072319 քրեական գործով՝ հարուցված ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 1-ին մասով, քրեական հետապնդում չիրականացնելու և գործով վարույթը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի՝ արարքում հանցակազմի և հանցադեպի բացակայության հիմքերով կարճելու մասին որոշումներ կայացնելը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործի արդարացի քննություն իրականացնելու սկզբունքով պայմանավորված՝ օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցառումները՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար ձեռնարկելու պարտավորություն կրելով՝ այդպիսի քննություն չիրականացնելու, ապացուցման ենթակա մի շարք հանգամանքներ չպարզելու, դեպքի հանգամանքները պատշաճ հետազոտման, վերլուծության և գնահատման չենթարկելու, արդյունքում՝ վաղաժամ որոշումներ կայացնելու և անհարկի նախաքննության ժամկետները ձգձգելու փաստով ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության առաջին կայազորային քննչական բաժնի ՀԿԳ քննիչ Դ.Հ-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*
Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ՔԿ ԵՔՔՎ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Գ.Ս-ի վերաբերյալ

23 դեկտեմբերի 2020թ. ԿՀՈ 37
ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի (այսուհետ՝ քննչական Կոմիտե) կարգապահական հանձնաժողովը (այսուհետ՝ Կարգապահական հանձնաժողով), ՀՀ ՔԿ ԵՔՔՎ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Գ.Ս-ի (այսուհետ՝ նաև քննիչ) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալ Ա.Պ-ի միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ ՀՀ ՔԿ ԵՔՔՎ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Գ.Ս-ի վարույթում քննված թիվ 15896818 քրեական գործով նախաքննության ընթացքում վերջինս իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը: Կարգապահական հանձնաժողովը քննարկել է ավագ քննիչ Գ.Ս-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագի.

Գ.Ս-ն առանց իրավաչափ նպատակի՝ տևական ժամանակ նախաքննության 5 ամիսների ընթացքում՝ 28.08.2019-30.01.2020թթ. առհասարակ որևէ քննչական և այլ դատավարական գործողություններ չի կատարել, ինչպես նաև քրեական գործի նյութերում բացակայել է որևէ տվյալ այդ գործողությունների չկատարումը դատավարության մասնակիցների ազդեցության պատճառ լինելու վերաբերյալ: Այսինքն՝ վարույթն իրականացնող մարմինը, պատասխանատվություն կրելով քննչական և այլ դատավարական գործողություններն օրինական և ժամանակին կատարելու համար, չի կատարել իր պարտականությունները ու այդ պահին հոսող դատավարական ժամկետներով կաշկանդված լինելով հանդերձ՝ տևական ժամանակ քրեական գործը գտնվել է անշարժ վիճակում, ինչի արդյունքում կոպտորեն խախտվել են քննության ողջամիտ ժամկետները և իրականացված քննությունը չի համապատասխանել արդյունավետ քննության՝ պատշաճ ջանասիրությամբ և արագությամբ գործելու չափանիշին, անհարկի ձգձգվել են նախաքննության ժամկետները, ինչը կարող էր բացասաբար անդրադառնալ նախնական քննության արդյունավետության վրա:

Բացի այդ, 07.04.2020թ.-18.06.2020թ. ընկած ժամանակահատվածում քննիչն առանց որևէ քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու, զուտ հեռախոսազանգեր կատարելու վերաբերյալ արձանագրություններ կազմելով, ներկայացրել է նախաքննության ժամկետի երկարացման միջնորդություններ, որոնք բավարարվել են: Արդյունքում քննիչի կողմից խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

Հիշյալ առերևույթ կարգապահական խախտման վերաբերյալ Գ.Ս-ն ՀՀ ՔԿ կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ հայտնեց, որ նախաքննության ընթացքում որոշում է կայացրել ստուգում նշանակելու մասին, որի կատարումը հանձնարարվել է ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը, որին ի պատասխան նշված նախարարությունից ստացված գրու-

թյամբ հայտնվել է ստուգում նշանակելու մասին որոշման կատարման անհնարինության մասին և պատրաստակամություն է հայտնվել տրամադրել համապատասխան մասնագետներ: Սակայն մասնագետները ՀՀ-ում նոր կորոնավիրուսային համաճարակի կապակցությամբ հայտարարված արտակարգ դրության պատճառով չեն կարողացել ներկայանալ քննչական բաժին և նման պայմաններում ձգձգվել են նախաքննության ժամկետները:

ՈՒսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ ավագ քննիչ Գ.Ս-ի գործողություններում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը, նկատի ունենալով, որ վերջինս առանց իրավաչափ նպատակի տևական ժամանակ դրսևորել է անգործություն՝ չկատարելով անհրաժեշտ քննչական և այլ դատավարական գործողություններ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 2-րդ ենթակետով և 48-50-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Առանց իրավաչափ նպատակի տևական ժամանակ անգործություն դրսևորելու դրվագով Գ.Ս-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*
Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ քննչական կոմիտեի ԵՔՔՎ Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Հ.Ա-ի վերաբերյալ

23 դեկտեմբերի 2020թ. ԿՀՈ 38
ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի (այսուհետ՝ քննչական Կոմիտե) կարգապահական հանձնաժողովը (այսուհետ՝ Կարգապահական հանձնաժողով), ՀՀ քննչական կոմիտեի ԵՔՔՎ Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Հ.Ա-ի (այսուհետ՝ նաև քննիչ) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Նախնական ուսումնասիրության առիթ է հանդիսացել ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալ Ա.Պ-ի՝ ՀՀ քննչական կոմիտեի ԵՔՔՎ Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Հ.Ա-ի վարույթում քննված թիվ 17873919 քրեական գործով վերջինիս կողմից իր լիազորություններն իրականացնելիս քրեադատավարական օրենքի կոպիտ խախտումներ թույլ տալու վերաբերյալ:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է Հ.Ավետիսյանին վերագրվող օրենքի առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագի.

ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասի և 185-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցված և 25.03.2020-19.08.2020թթ-ն ընկած ժամանակահատվածում վարույթում քննված թիվ 17873919 քրեական գործով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պատասխանատվություն կրելով քննչական և այլ դատավարական գործողություններն օրինական ու ժամանակին կատարելու համար՝ քննչական և դատավարական այլ գործողություններ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում, առանց իրավաչափ նպատակի, անհրաժեշտ գործողությունները ժամանակին կամ ընդհանրապես չի կատարել՝ այդպիսով իր վրա դրված պարտականությունները կատարել է ոչ պատշաճ, ինչի արդյունքում անհարկի ձգձգվել են նաև նախաքննության ժամկետները: Մասնավորապես՝ թիվ 17873919 քրեական գործը վարույթում վերոհիշյալ ժամանակահատվածում քննվելու ընթացքում 17.04.2020թ. ստանալով դատախազի ցուցումը, նույն օրը հարցաքննել է մեկ վկայի, որից հետո մինչև 2020թ. հունիսի 9-ը՝ շուրջ 2 ամիս որևէ քննչական և դատավարական գործողություն չկատարելով, կրկին միջնորդություն է ներկայացրել նախաքննության ժամկետը 1 ամիս ժամկետով երկարացնելու վերաբերյալ՝ պատճառաբանելով, որ անհրաժեշտ է կատարել առերես հարցաքննություններ մի շարք անձանց միջև, տալ վերջնական իրավական գնահատական, որը դատախազի որոշմամբ բավարարվել է, սակայն, 15.06.2020թ. ստանալով քննչական և դատավարական գործողություններ կատարելու վերաբերյալ դատախազի մեկ այլ ցուցում, մինչև 2020թ. հուլիսի 9-ը դարձյալ որևէ քննչական գործողություն չի կատարել ու կրկին նախաքննության ժամկետ երկարացնելու միջնորդություն ներկայացրել դատախազին՝ պատճառաբանելով, որ անհրաժեշտ է կատարել դատախազի 15.06.2020թ. ցուցումի պահանջները, որից հետո մինչև 06.08.2020թ.-ը կրկին որևէ քննչական և դատավարական գործողություն չկատարելով՝ 07.08.2020թ. կրկին միջնորդություն է ներկայացրել դատավարական հսկողություն իրականացնող դատախազին՝

նախաքննության ժամկետը ևս 1 ամիս ժամանակով երկարացնելու վերաբերյալ՝ կրկին պատճառաբանելով, որ անհրաժեշտ է կատարել դատախազի 15.06.2020թ. ցուցումի պահանջները: Արդյունքում՝ քննիչը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջի առերևույթ խախտում:

Առերևույթ կարգապահական խախտումներ թույլ տալու վերաբերյալ ավագ քննիչ Հ.Ա-ն Կարգապահական հանձնաժողովին տված բացատրությամբ, ըստ էության չընդունեց իր մեղավորությունը՝ հայտարարելով, որ վիճարկվող ժամանակահատվածում 15 օր եղել է ինքնամեկուսացման մեջ՝ որպես կորոնավիրուսի (COVID-19) ժամակարգավորիչ ենթադրյալ կոնտակտավոր, ապա՝ անձամբ է վարակված եղել կրոնավորների (COVID-19) ժամակարգավորիչով և մեկուսացված է եղել: Պնդեց նաև ՀՀ ՔԿ ՆԱ վարչությունում տված բացատրությամբ հայտնած հանգամանքները:

Զեկուցողը հայտարարեց, որ Հ.Ա-ն ՀՀ ՔԿ ՆԱ վարչություն բացատրություն է տվել 02.09.2020թ., սակայն, անձամբ կրոնավորների (COVID-19) ժամակարգավորիչով հիվանդանալու և մեկուսանալու վերաբերյալ որևէ տվյալ չի հայտնել:

Ուսումնասիրելով նյութերը՝ Կարգապահական հանձնաժողովը, նախ՝ ի պաշտոնե պարզեց, որ Հ.Ա-ի անձամբ կրոնավորների (COVID-19) ժամակարգավորիչով հիվանդանալու մասին տեղեկությունը ստացվել է 04.09.2020թ., ուստի, այդ հանգամանքը որևէ առնչություն չունի նրան վերագրվող առերևույթ կարգապահական խախտման հանգամանքների հետ: Նման պայմաններում՝ Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ ավագ քննիչ Հ.Ա-ն խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջները:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ քննիչ Հ.Ա-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի

1-ին մասի 1-ին կետով և 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով, 48-50-րդ կետերով,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Թիվ 17873919 քրեական գործով քննչական և դատավարական այլ գործողություններ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում, առանց իրավաչափ նպատակի, անհրաժեշտ գործողությունները ժամանակին կամ ընդհանրապես չկատարելու, նախաքննության ժամկետներն անհարկի ձգձգելու կապակցությամբ վարույթն իրականացրած քննիչ Հ.Ա-ի արարքում առկա է կարգապահական խախտման փաստը և նրան մեղավորությունը:

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*
Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ՔԿ ԵՔՔՎ Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Մ.Ու-ի վերաբերյալ

23 դեկտեմբերի 2020թ. ԿՀՈ 39
ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի (այսուհետ՝ քննչական Կոմիտե) կարգապահական հանձնաժողովը (այսուհետ՝ Կարգապահական հանձնաժողով), ՀՀ ՔԿ ԵՔՔՎ Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Մ.Ու-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչության պետի զեկուցագրի առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ ՀՀ ՔԿ ԵՔՔՎ Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Մ.Ու-ի վարույթում քննվող թիվ 86154620 քրեական գործով նախաքննության ընթացքում վերջինս իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է ավագ քննիչ Մ.Ու-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագի.

27.07.2020թ-ին որոշում է կայացրել հեռախոսազանգերի վերանայումները ստանալու միջնորդություն հարուցելու մասին, որը նույն օրը քննարկվել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից և բավարարվել:

Բացի այդ, 29.07.2020թ-ին որոշում է կայացրել տեղեկատվության գաղտնիության իրավունքը սահմանափակելու մասին, որը նույն օրը քննարկվել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից և բավարարվել, սակայն նախաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնող դատախազին չեն ուղարկվել ինչպես նշված միջնորդությունները, այնպես էլ դատարանի որոշումները, ինչով դատախազն առանց իրավաչափ նպատակի զրկվել է իր լիազորություններն իրականացնելու հնարավորությունից: Արդյունքում քննիչի կողմից խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 282-րդ հոդվածի 3-րդ մասի, 283-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջները:

Հիշյալ առերևույթ կարգապահական խախտման վերաբերյալ Մ.Ու-ն իր դիրքորոշումը ներկայացրել է ՀՀ քննչական կոմիտեի Կարգապահական հանձնաժողովի նախագահին ուղղված դիմումով, որով ընդունել է դատավարական խախտումներ թույլ տալու հանգամանքը և խնդրել նիստն անցկացնել առանց իր մասնակցության:

ՈՒսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ ավագ քննիչ Մ.Ու-ի գործողություններում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը, նկատի ունենալով, որ ինչպես ներկայացված միջնորդությունները, այնպես էլ դատարանի որոշումները չեն ուղարկվել հսկող դատախազին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 47-րդ կետի 2-րդ ենթակետով և 48-50-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Ներկայացված միջնորդությունները և դատարանի որոշումները հսկող դատախազին չուղարկելու դրվագով Մ.Ու-ի արարքներում առկա է կարգապահական խախտման փաստը և նրա մեղավորությունը:

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*

Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«դասային աստիճանի իջեցում՝ մեկ աստիճանով» կարգապահական տույժ կիրառելու նպատակահարմարության վերաբերյալ միջնորդության քննարկման մասին

06 փետրվարի 2020թ. ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, քննարկելով ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի պետ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական Ա.Խ-ի նկատմամբ «դասային աստիճանի իջեցում՝ մեկ աստիճանով» կարգապահական տույժ կիրառելու նպատակահարմարության վերաբերյալ ՀՀ քննչական կոմիտեի նախագահի միջնորդությունը, նկատի ունենալով, որ ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 23.01.2020թ. որոշմամբ հիմնավորվել է Ա.Խ-ի արարքում կարգապահական խախտման փաստի առկայությունն ու կատարված խախտման մեջ վերջինիս մեղավորությունը: Վերջինս իր լիազորություններն իրականացնելիս 2019թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին պարբերաբար խախտել է ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 29.10.2018թ. թիվ 168-Լ հանձնարարականի պահանջները: Մասնավորապես՝ ՀՀ ՔԿ Երևան քաղաքի քննչական վարչության Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի վարույթում քննվող քրեական գործերով դատավարական ղեկավարում իրականացնող դատախազների կողմից թիվ 14865419, 14856019 քրեական գործերով 02.09.2019 և 19.09.2019թթ. տրված ցուցումների, թիվ 58204919 /երկու քննիչ/ և 58162119 քրեական գործերով՝ քննիչներին դատավարությանը մասնակցելուց հեռացնելու վերաբերյալ կայացված 11.09.2019, 27.09.2019 և 02.10.2019թթ. որոշումների պատճենները սահմանված

ժամկետներում չեն ուղարկվել ՀՀ քննչական կոմիտեի տարածքային քննչական վարչությունների գործունեության վերահսկողության գլխավոր վարչություն:

Ելնելով վերոգրյալից և նկատի ունենալով Ա.Խ-ի կողմից կատարված խախտման բնույթն ու դրա հետևանքները, և հիմք ընդունելով, որ ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 23.01.2020թ. որոշմամբ հիմնավորվել է խախտման փաստի առկայությունն ու Ա.Խ-ի մեղավորությունը, ուստի՝ ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 8-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին 54-55-րդ և 58-րդ մասերով,

ԵԶՐԱԿԱՑՐԵՑ

1. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի պետի, արդարադատության երկրորդ դասի խորհրդական Ա.Խ-ի նկատմամբ տվյալ իրավիճակում՝ դասային աստիճանի իջեցում՝ մեկ աստիճանով» կարգապահական տույժի կիրառումը համարել նպատակահարմար:

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*
Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ե Զ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

«դասային աստիճանի իջեցում՝ մեկ աստիճանով»
կարգապահական տույժի կիրառման նպատակահարմարության
վերաբերյալ միջնորդության քննարկման մասին

11 հունիսի 2020թ. ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, քննարկելով ՀՀ քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչության Դիլիջանի քննչական բաժնի պետ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական Վ.Գ-ի (այսուհետ՝ նաև անմիջական վերադաս) և նույն բաժնի պետի տեղակալ, առաջին դասի խորհրդական Է.Կ-ի (այսուհետ՝ նաև քննիչ) նկատմամբ «դասային աստիճանի իջեցում՝ մեկ աստիճանով» կարգապահական տույժ կիրառելու նպատակահարմարության վերաբերյալ ՀՀ քննչական կոմիտեի նախագահի միջնորդությունը, նկատի ունենալով, որ Վ.Գ-ի և Է.Կ-ի արարքներում հիմնավորվել է կարգապահական խախտումների փաստերի առկայությունն ու կատարված իրավախախտումների մեջ վերջիններիս մեղավորությունը: Մասնավորապես.

Քննչական խմբի ղեկավար Է.Կ-ն 26.08.2019թ-ից վարույթում քննված թիվ 36100819 քրեական գործով, տևական ժամանակ, քննչական գործողություններ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում առանձին գործողություններ՝ գործով մեղադրյալներ Ա.Ս-ի, Ա.Զ-ի և Ա.Պ-ի, ինչպես նաև՝ Ա.Ս-ի և գործով մեղադրյալ Վ.Մ-ի ցուցմունքներում առկա էական հակասությունների շուրջ նրանց միջև առերես հարցաքննություններ չի կատարել, ինչը ողջամտորեն կարող էր հանգեցնել ապացույցների կորստի, քանզի մեղադրյալ

Ա.Զ-ն 16.10.2019թ-ից գտնվում է հետախուզման մեջ և մինչ օրս չի հայտնաբերվել.

22.08.2019թ-ին Ֆ.Ս-ի առանձնատանը կատարված դեպքի վայրի զննության ընթացքում հայտնաբերված և վերցված ձեռքի հետքերի պիտանելիությունը և մեղադրյալների կողմից թողնված լինելու հանգամանքը, ինչպես նաև՝ 02.07.2019թ-ին Բ.Ս-ի բնակարանում կատարված դեպքի վայրի զննության ընթացքում հայտնաբերված և վերցված ձեռքի հետքերի մեղադրյալների կողմից թողնված լինելու հանգամանքը պարզելու՝ ապացույցներ ձեռք բերելու նպատակով դատամատնադրոշմային փորձաքննություններ չի նշանակել.

15.08.2019թ-ին ստացված՝ Բ.Ս-ի բնակարանում կատարված դեպքի վայրի զննության ընթացքում հայտնաբերված և վերցված ձեռքի հետքերի պիտանելիությունը և պատկանելիությունը պարզելու նպատակով նշանակված դատամատնադրոշմային փորձաքննության թիվ 2037-19 եզրակացությանը չի ծանոթացրել մեղադրյալներ՝ Ա.Ս-ին, Ա.Զ-ին, Ա.Պ-ին և Վ.Մ-ին, 03.09.2019թ.՝ Ա.Ս-ի անձնական խուզարկությամբ հայտնաբերված «Lyrica» գրառմամբ 5 դեղահաբի և «Pregabalin» գրառմամբ 10 դեղահաբերի, Ա.Ս-ի վարած «NISSAN TIDA 1.5» մակնիշի ավտոմեքենայում կատարված խուզարկությամբ հայտնաբերված դեղնականաչավուն զանգվածների և կաթոցիչի, «Lyrica» գրառմամբ 23 և 9 առանձին դեղահաբերի ու «Pregabalin» գրառմամբ 40 դեղահաբերի, «B8» գրառմամբ 1 դեղահաբի վերաբերյալ նշանակված դատանյութագիտական փորձաքննության որոշումը չի ծանոթացրել տուժող Բ.Ս-ին և մեղադրյալներ՝ Ա.Ս-ին, Ա.Զ-ին, Ա.Պ-ին և Վ.Մ-ին, 04.10.2019թ.՝ թմրամիջոցների, հոգեմետ /հոգեներգործուն/ նյութեր օգտագործելու փաստը ստուգելու նպատակով մեղադրյալներ Ա.Ս-ից, Ա.Զ-ից և Ա.Պ-ից ստացված արյան ու մազի փորձանմուշներով նշանակված դատատոկսիկոքիմիական փորձաքննության որոշմանը չի ծանոթացրել տուժող Բ.Ս-ին և մեղադրյալներ՝ Ա.Ս-ին, Ա.Զ-ին, Ա.Պ-ին և Վ.Մ-ին, վերջինիս պաշտպան Ս.Ջ-ին, այդ

փորձաքննությունների կատարման վերաբերյալ 22.11.2019թ. ստացված եզրակացություններին՝ տուժող Բ.Ս-ին և մեղադրյալներ՝ Ա.Ս-ին, Ա.Պ-ին և Վ.Մ-ին, վերջինիս պաշտպան Ս.Ջ-ին, 17.12.2019թ.՝ Ա.Պ-ի վարած «Վազ 21214» մակնիշի ավտոմեքենայում 23.08.2019թ. կատարված խուզարկությամբ հայտնաբերված և Ֆ.Ս-ի առանձնատնից գողացված 4 դանակների ու «DEXP» ապրանքանիշի բջջային հեռախոսի արժեքը որոշելու համար նշանակված դատաապրանքագիտական փորձաքննության որոշմանը չի ծանոթացրել տուժող Բ.Ս-ին և մեղադրյալներ՝ Ա.Ս-ին, Ա.Պ-ին և Վ.Մ-ին, վերջինիս պաշտպան Ս.Ջ-ին.

Քրեական գործով շուրջ 4 ամիս մեղադրյալ Ա.Պ-ի վարած «Վազ 21214» մակնիշի ավտոմեքենայում 23.08.2019թ. կատարված խուզարկությամբ հայտնաբերված և Ֆ.Ս-ի առանձնատնից գողացված 4 դանակները տուժող Ֆ.Ս-ին ճանաչման է ներկայացրել միայն 17.12.2019թ-ին, իսկ այդ դանակների և նույն խուզարկությամբ հայտնաբերված և Ֆ.Ս-ի առանձնատնից գողացված «DEXP» ապրանքանիշի բջջային հեռախոսի արժեքը որոշելու համար դատաապրանքագիտական փորձաքննությունը նշանակել է 17.12.2019թ-ին, ինչը հանգեցրել է նախաքննության ժամկետների անհարկի ձգձգումների.

Իր հերթին՝ քննիչ Է.Կ-ի անմիջական վերադաս Վ.Գ-ն չի վերահսկել և չի հետևել իր անմիջական համակարգման ոլորտում գտնվող ծառայողի կողմից կատարված աշխատանքները՝ կոպտորեն, պարբերաբար խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասի 2-3-րդ կետերի, «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 10.06.2015թ. թիվ 55Լ հրամանով հաստատված հավելվածի 14-րդ կետի 2-3-րդ ենթակետերի և «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչության ծառայողների միջև աշխատանքի բաժանում կատարելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալի

29.10.2019թ. թիվ 145-Ա հրամանի 2-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջները:

Ելնելով վերոգրյալից և նկատի ունենալով քննիչ Է.Կ-ի ու նրա անմիջական վերադաս Վ.Գ-ի կողմից կատարված կարգապահական խախտումների փաստերի բնույթն ու դրանց հետևանքները՝ Է.Կ-ն կոպտորեն, պարբերաբար խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ և 55-րդ հոդվածների 3-րդ մասերի, 247-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, որոնք հանգեցրել են նաև մարդու իրավունքների խախտման, իսկ քննիչի անմիջական վերադաս Վ.Գ-ն չի վերահսկել և չի հետևել իր անմիջական համակարգման ոլորտում գտնվող ծառայողի կողմից կատարված աշխատանքները՝ կոպտորեն, պարբերաբար խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասի 2-3-րդ կետերի, «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 10.06.2015թ. թիվ 55Լ հրամանով հաստատված հավելվածի 14-րդ կետի 2-3-րդ ենթակետերի և «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչության ծառայողների միջև աշխատանքի բաժանում կատարելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալի 29.10.2019թ. թիվ 145-Ա հրամանի 2-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջները, հիմք ընդունելով նաև, որ ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 21.05.2020թ. որոշմամբ հիմնավորվել է քննիչ Է.Կ-ի ու նրա անմիջական վերադաս Վ.Գ-ի արարքներում կարգապահական խախտումների փաստերի առկայությունն ու կատարված կարգապահական խախտումների մեջ վերջիններիս մեղավորությունը, ուստի, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 8-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «ՀՀ քննչական կոմիտեի

կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին 54-55-րդ և 58-րդ մասերով՝

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ր Ե Ց

1. ՀՀ քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչության Դիլիջանի քննչական բաժնի պետ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական Վ.Գ-ի և նույն բաժնի պետի տեղակալ, առաջին դասի խորհրդական Է.Կ-ի նկատմամբ տվյալ իրավիճակում նպատակահարմար համարել «դասային աստիճանի իջեցում՝ մեկ աստիճանով» կարգապահական տույժի կիրառումը:

2. Սույն եզրակացության օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*
Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

տարկետում տրամադրելու մասին

14 հուլիսի 2020թ. ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ծառայողների թեկնածությունների ցուցակում ընդգրկված Ս.Ա-ի՝ Արդարադատության ակադեմիայի կողմից կազմակերպված ուսումնական դասընթացների տարեկետում տրամադրելու վերաբերյալ դիմումը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Ունկնդիր Ս.Ա-ն ունեցած առողջական խնդիրների պատճառով հնարավորություն չի ունեցել մասնակցելու՝ 2020 թվականի հունիսի 8-ից մինչև հուլիսի 10-ը՝ քննչական կոմիտեի թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց համար կազմակերպված դասընթացներին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին հավելվածի 63-րդ կետով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Ս.Ա-ին տրամադրել տարեկետում մինչև քննիչների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց հաջորդ մասնագիտական պատրաստումը:

2. Սույն որոշման օրինակն ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*
Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ե Զ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

«դասային աստիճանի իջեցում՝ մեկ ասատիճանով կարգապահական տույժ կիրառելու նպատակահարմարության վերաբերյալ միջնորդության քննարկման մասին

15 դեկտեմբերի 2020թ. ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, քննարկելով ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի պետի տեղակալ, արդարադատության երրորդ դասի խորհրդական Հ.Մ-ի նկատմամբ «դասային աստիճանի իջեցում՝ մեկ ասատիճանով կարգապահական տույժ կիրառելու նպատակահարմարության վերաբերյալ ՀՀ քննչական կոմիտեի նախագահի միջնորդությունը, նկատի ունենալով, որ ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 31.07.2020թ. որոշմամբ հիմնավորվել է Հ.Մ-ի արարքներում կարգապահական խախտման փաստի առկայությունն ու կատարված խախտման մեջ վերջինիս մեղավորությունը: Մասնավորապես՝ Հ.Մ-ն հանդիսանալով ՀՀ քննչական կոմիտեի ԵՔՔՎ Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի նախկին քննիչ Վ.Գ-ի անմիջական ղեկավարը՝ չի հետևել վերջինիս վարույթում գտնվող թիվ 14129819 քրեական գործով քննչական գործողությունը ժամանակին կատարելուն /տուժողի հարցաքննություն/, ինչով իսկ խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջները:

Բացի այդ, թիվ 14975719 քրեական գործով հանդիսանալով քննչական խմբի ղեկավար, պատշաճ չի կազմակերպել և ղեկավարել քննչական խմբում ընդգրկված քննիչների գործողությունները, ինչի արդյունքում խախտվել են ՀՀ քրեական դատավարության

օրենսգրքի 194-րդ, 195-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերի պահանջները:

Բացի այդ, թիվ 14895919 քրեական գործով խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջները քննիչին տվել է իր լիազորություններից չբխող ցուցում՝ իրեն վերագրել է այնպիսի լիազորություններ, որոնց իրավասությամբ օժտված չէ:

Նույն խախտումը առկա է նաև թիվ 14855319 քրեական գործով: Թիվ 14978119 քրեական գործով՝ տևական ժամանակ, շուրջ 2 ամիս 15 օր՝ չի հետևել իրեն անմիջականորեն ենթակա քննիչի վարույթում գտնվող քրեական գործով դատախազի ցուցումները կատարելուն, ինչով իսկ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջները:

Ելնելով վերոգրյալից և նկատի ունենալով Հ.Մ-ի կողմից կատարված խախտումների բնույթն ու դրա հետևանքները, և հիմք ընդունելով, որ ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 31.07.2020թ. որոշմամբ հիմնավորվել է խախտման փաստի առկայությունն ու Հ.Մ-ի մեղավորությունը, ուստի՝ ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին 54-55-րդ և 58-րդ մասերով,

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ր Ե Ց

1. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի պետի տեղակալ, արդարադատության երրորդ դասի խորհրդական Հ.Մ-ի նկատմամբ տվյալ իրավիճակում նպատակահարմար է համարել «դասային աստիճանի իջեցում՝ մեկ աստիճանով կարգապահական

տույժի կիրառումը:

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*

Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ե Զ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

«պաշտոնի իջեցում՝ մեկ աստիճանով» կարգապահական տույժի կիրառման նպատակահարմարության վերաբերյալ միջնորդության քննարկման մասին

15 դեկտեմբերի 2020թ. ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, քննարկելով ՀՀ քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչության ավագ քննիչ, արդարադատության երրորդ դասի խորհրդական Մ.Թ-ի (այսուհետ նաև՝ քննիչ) նկատմամբ «պաշտոնի իջեցում՝ մեկ աստիճանով» կարգապահական տույժ կիրառելու նպատակահարմարության վերաբերյալ ՀՀ քննչական կոմիտեի նախագահի միջնորդությունը՝ նկատի ունենալով, որ քննիչ Մ.Թ-ի արարքներում հիմնավորվել է կարգապահական խախտման փաստերի առկայությունն ու կատարված իրավախախտումների մեջ վերջինիս մեղավորությունը: Մասնավորապես՝ քննիչն առերևույթ խախտել է Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջները, այն է՝ քննչական կոմիտեի ծառայողը պարտավոր է՝ (...) կատարել Սահմանադրության, օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները. (...) և Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ներքին կարգապահական կանոնները հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 20.08.2018թ. թիվ 114-Լ հրամանով հաստատված հավելվածի 3-րդ գլխի 28-րդ կետի 1-ին ենթակետի, այն է՝ աշխատողները սոցիալական ցանցերից օգտվելիս պարտավոր են. 1) պահպանել բարոյականության և էթիկայի համընդհանուր նորմերը (...), նույն հավելվածի 2-րդ գլխի 19-րդ և 20-րդ կետերի պահանջները:

Ելնելով վերոգրյալից և նկատի ունենալով քննիչ Մ.Թ-ի կողմից կատարված կարգապահական խախտման փաստերի

բնույթը՝ քննիչ Մ.Թ-ն կոպտորեն խախտել է «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ներքին կարգապահական կանոնները հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 20.08.2018թ. թիվ 114-Լ հրամանով հաստատված հավելվածի 3-րդ գլխի 28-րդ կետի 1-ին ենթակետի, նույն հավելվածի 2-րդ գլխի 19-րդ և 20-րդ կետերի պահանջները, հիմք ընդունելով նաև այն, որ ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 31.07.2020թ. որոշմամբ քննիչ Մ.Թ-ի արարքներում հիմնավորվել է կարգապահական խախտման փաստերի առկայությունն ու կատարված իրավախախտումների մեջ վերջինիս մեղավորությունը, ուստի, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 8-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 05.09.2018թ. որոշմամբ՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգ»-ը սահմանելու մասին 54-55-րդ և 58-րդ մասերով՝

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ր Ե Ց

1. ՀՀ քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչության ավագ քննիչ, արդարադատության երրորդ դասի խորհրդական Մ.Թ-ի նկատմամբ տվյալ իրավիճակում նպատակահարմար համարել «պաշտոնի իջեցում՝ մեկ աստիճանով» կարգապահական տույժի կիրառումը:

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*
Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ

ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԵՐԿԱՅԻՍ ԱՆԴԱՄՆԵՐԸ

Արսեն Այվազյան - Կոմիտեի նախագահի տեղակալ (Հանձնաժողովի նախագահ)

Պերճ Այվազյան – Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության վերահսկողության վարչության պետ (Հանձնաժողովի անդամ)

Ամբակում Գրիգորյան – Կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության պետ (Հանձնաժողովի անդամ)

Կարեն Թորոսյան - Կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչության պետ (Հանձնաժողովի անդամ)

Համազասպ Թորոսյան – Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի պետաիրավական վարչության պետ (Հանձնաժողովի անդամ)

Նաիրա Ճնգրյան – Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի իրավաբանական վարչության պետի տեղակալ (Հանձնաժողովի անդամ)

Արմեն Հովհաննիսյան - Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ (Հանձնաժողովի անդամ)

Արթուր Վարդանյան – Հայաստանի Հանրապետության գլխավոր հարկադիր կատարողի տեղակալ (Հանձնաժողովի անդամ)

Ժողովածուի խմբագիր՝
Հանձնաժողովի քարտուղար ***Ջուլիետտա Գևորգյան***

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

2 0 2 1

Հատոր 6

Տպագրությունը՝ օֆսեթ

Թուղթ օֆսեթ 80 գր., չափսը՝ 60x80, 1/16
Ծավալը՝ 7 հատ. մամուլ
Տպաքանակը՝ 500 օրինակ:
Տպագրվել է ԱՁ «Արա Մնացականյան» տպագրատանը: